

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ս. Ս. , ԴԱՆԻԵԼՅԱՆ Ս. Վ.

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

10-րդ դասարան

ՀԱՍՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՍԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ



2 0 1 0

ՀՏՁ 373.167.1 : 681.3/.5 (075.3)
ԳՄԴ 32.973 ց72
Ա 791

Մասնագիտական խմբագիր՝ Ռ. Աղօաշյան

Ավետիսյան Ս.Ս.

Ա 791 Ինֆորմատիկա: 10-րդ դաս. դասագիրք. հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի համար / Ս. Ս. Ավետիսյան,
Ս. Վ. Դանիելյան, մասն խմբ.` Ռ. Աղօաշյան. -
Եր.: Տիգրան Սեծ, 2010. - 128 էջ:

ՀՏՁ 373.167.1 : 681.3/.5 (075.3)
ԳՄԴ 32.973 ց72

ISBN 978-99941-0-387-4

© Ավետիսյան Ս., Դանիելյան Ս., 2010 թ.
© «Տիգրան Սեծ», 2010 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասագիրքը նպատակավաց, փուլ առ փուլ շարունակելու է համակարգչային հմտությունների ուսուցանումը: Ուսուցման ծրագիրը բազմազան է լինելու դուրս նորանալու եք համակարգչով անվտանգ աշխատելու նորանոր միջոցների՝ հակավիրուսային ծրագրերի արդի տարրերակներին, դրանց տեղակայման և ավտոնատ թարմացման գործնքներին, համակարգչի բաղադրիչ սարքերից օգտվելու անվտանգության նորմերին, ինֆորմացիոն համակարգերի աշխատանքի նաճրանասներին և ինֆորմացիայի կողավորնան «գաղտնիքներին»: Իսկ մի՞քև հետաքրքիր չէ իմանալ, թե ինչպես են տեղակայում տարրեր ծրագրային համակարգերը. չէ՞ որ հազիվ հասցնելով դրանցից մեկի աշխատանքի նրբություններին ծանրանալ՝ նոր, առավել հզր համակարգ է «ծնվում», որն, իհարկե, արժե տեղակայել:

Դուք արդեն *Word* տեքստային խմբագրիչով աշխատելու որոշակի հմտություններ ունեք, սակայն այս ուսումնական տարում ևս դրան առնչվող շատ կարևոր գիտելիքներ ձեռք կրերեք:

Բնագիտամաթեմատիկական հոսքում սովորելու ընտրություն կատարելով՝ դուք անհրաժեշտություն կունենաք փաստարդերում մեծածավալ, բազմաբնույթ բանաձևեր ներմուծել. այդ նպատակով կծանոթանաք *Microsoft Equation* խմբագրիչի աշխատանքին:

Ինտերնետում օտար լեզվով ներկայացված հետաքրքիր ինֆորմացիան կմնա անմատչելի, եթե չկարողանաք էլեկտրոնային որևէ թարգմանչի աշխատանքից օգտվել. մենք առաջարկում ենք այդ հարցում վստահել www.translator.am կայքի առաջարկած ծառայություններին. չէ՞ որ այն հայ գիտնականների աշխատանքի արգասիքն է, հայեցի՞:

Չեզ նորություններ են սպասվում նաև էլեկտրոնային այյուսակների աշխատանքի վերաբերյալ՝ սովորելու եք օգտվել առկա ստանդարտ ֆունկցիաներից, տարաբնույթ դիագրամներ կառուցել, թվային միաչափ ու երկչափ զանգվածներ մշակել և այլն:

Կարծում ենք, որ ձեզ կիետաքրքրի նաև ինֆորմացիայի ցուցադրման (*Prezentation*) *Microsoft PowerPoint* ծրագրի աշխատանքը ևս, որին ծանրանալով՝ կկարողանաք պայդեր ստեղծել ու դրանք ցուցադրել:

Ահա բոլորովին ոչ սպասիչ այն գիտելիքների հակիրճ ցուցակը, որը կստանաք այս դասագիրքն ուսումնասիրելիս:

Դասագիրքն ուսումնասիրելիս դուք կիանդիպեք նաև նոր տերմինների, որոնք տպված են կապույտ գույնով, իսկ առարկային վերաբերող հիմնական նոր հասկացություններն առնված են հատուկ շրջանակների մեջ: Յուրաքանչյուր դասի նյութից հետո գետեղված «Օգտակար է իմանալ» խորագրի ներքո ամփոփված ինֆորմացիան կօգնի ձեզ առավել խորությամբ յուրացնել տվյալ թեման:

«Հարցեր և առաջադրանքներ» բաժինը կօգնի պարզել, թե որքանով եք յուրացրել դասի նյութը:

Դասագրքում հասուն ցուցումներ են տրված նաև լարորատոր աշխատանքների կատարման համար, որոնք ձեզ կօգնեն խորությամբ տիրապետելու համակարգչի ընձեռած զանազան հնարավորությունների:

1.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ: ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՎԻՐՈՒՏՆԵՐԻ



§ 1.1 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԵՆՅԱԿՈՒՄ

Համակարգիչը տեխնիկական բարդ սարքավորում է, որի բաղկացուցիչ մասերը, ունենալով անվտանգության իրենց չափորոշիչները, միաժամանակ ունեն մեկ ընդհանուր առանձնահատկություն՝ աշխատում են **Էլեկտրոնական հոսանքով**: Ուստի դրանց հետ կապված աշխատանքն արդեն որոշակի գործություն է պահանջում:

Նախորդ դասարաններում ուսումնասիրած նյութից դուք որոշակիորեն տիրապետում եք համակարգչային դասարանում **աշխարհելու անվագույրյան** հիմնական **կանոններին**: Հիշեցնենք, որ անհրաժեշտ է խստորեն հետևել ուսուցչի ցուցումներին, կարճ միացման՝ կայծի, այրվածքի հոտի դեպքում անջատել համակարգչի էլեկտրական սննդուրումը, վաստ ինքնազգացողության դեպքում դադարեցնել աշխատանքը, իսկ հրդեհի դեպքում վառվող սարքավորումների վրա չի կարելի ջուր լցնել կամ օգտվել փրփուրով կրակմարիչից:

Հաշվի առնելով համակարգիչների նկատմամբ աճող պահանջարկը՝ անհրաժեշտ է ծանրանալ համակարգչի բաղադրիչ սարքավորումների հնարավոր կրղմնակի վնասակար ազդեցություններին՝ դրանցից պաշտպանվելու նպատակով:

Նախ՝ **Էլեկտրոնակառաջայրյան խողովակով աշխարհով մոնիթորների մասին**: Ասենք, որ սրանց աշխատանքն ուղեկցվում է ռադիացիոն ճառագայթմամբ, սակայն դրանից 50 սմ հեռավորություն ապահովելու դեպքում կարելի է խուսափել առողջությունը վնասելուց: Այդ մոնիթորների աշխատանքն ուղեկցվում է նաև կրղմնակի այլ վնասակար երևույթներով՝ օղում դրական իոնների կենտրոնացմամբ և բացասական իոնների նվազմամբ, ինչպես նաև օգննի քանակի մեծացմամբ, որը բացասական ազդեցություն է բռնում համակարգչից օգտվողի ինքնազգացողության, ի վերջո նաև առողջության վրա: Նման վնասակար ազդեցության նվազեցնան նպատակով խորհուրդ է տրվում հաճախակի օդափոխել սենյակները:

Ինչ վերաբերում է **հեղուկարյուրելային** մոնիթորներին, ապա սրանք վերը թվարկած բոլոր առումներով բացարձակ անվտանգ են, և խորհուրդ է տրվում հնարավորինս օգտվել այս մոնիթորներից:

Ցանկացած մոնիթորը լուսարձակման աղբյուր է, և շարունակ դրան նայելուց աչքերը հոգնում են, առավել ևս, եթե մոնիթորի լուսարձակումը սահմանված է չափազանց բարձր կամ ցածր: Բացի այդ, աչքերի գրգռման պատճառ կարող է հանդիսանալ նաև մոնիթորի վրա արտացոլվող պատկերի թրոքալը: Սրա ազդեցությունը բուլացնելու նպատակով խորհուրդ է տրվում էլեկտրոնաճառագայթային մոնիթորին արտածվող պատկերի կաղըրային հաճախությունը սահմանել 75 հերց, իսկ հեղուկարյուրելային մոնիթորի դեպքում՝ 60 հերց:

Սենյակում մոնիթորի ճիշտ տեղակայումը ևս կարենոր գործոն է: Այն պետք է տեղադրել այնպես, որ հետևի մասով ուղղված լինի դեպի պատը՝ խուսափելու համար մոնիթորի հետևի մասում եղած բարձր էլեկտրամագնիսական ճառագայթումից: Հնարավորինս պետք է խուսափել նաև մոնիթորի վրա կողմնակի լույս ընկնելուց: Այդ նպատակով համակարգիչը պետք է տեղադրված լինի այնպես, որ դրանից օգտվողի վրա լույսն ընկնի ճախից:

Գործնականում հաճախ խոսելով մոնիթորների վճարակար ազդեցուրյունների մասին՝ չեն նշվում համակարգչի նյուու բաղադրիչին՝ **Կապող սարքին** առնչվող նման գործոնները: Մինչդեռ տպող սարքը նույնպես էլեկտրական բարդ սարքավորում է և անվտանգ աշխատելու իր կանոններն ունի: Նախ՝ պետք է բացառել դրա մեջ պատահական իրեր հայտնվելու վտանգը: Նման իրեր կարող են լինել բոթերի մետաղական ամրակները և գրասենյակային նմանօրինակ այլ պիտույքներ: Սրանք, թղթի հետ հայտնվելով տպող սարքի ներսում, վերջինիս շարքից դուրս գալու պատճառ են դառնում:

Լազերային պատող սարքերի աշխատանքը հիմնված է ներկանյութի մանրագույն հատիկներով (փոշու հատիկից 10-ն անգամ փոքր) և գույնի փոշու, այսպես կոչված, **Կոնկակի** վրա: Տոները խիստ վճարակար և նույնմասկ բունավոր նյութ է. դրա հատիկները շնչուղիներում կարող են տարրեր (մինչև անգամ անբուժելի) հիվանդություններ առաջացնել: Այդ պատճառով լազերային տպող սարքերի լիցքավորումը պետք է իրականացվի միմիայն մասնագետի կողմից՝ հատուկ պայմաններում:

Ընդհանրապես լազերային տպող սարքերն ազդում են շրջապատի օդի վրա. դրա աշխատանքի ընթացքում տարրեր նյութեր են անջատվում, ավելանում են օգնի, ազոտի օքսիջի, ածխաջրի օքսիջի և այլ վճարակար նյութերի չափաքանակները: Այդ պատճառով համակարգչային սենյակը պետք է ապահովել կանոնավոր օդափոխությամբ և աշխատանքից հետո այն բաց շորով մաքրել:

ՕԳՏԱԿԱՐ Է ԽՍԱՆԱԼ

- ◆ **Համակարգչային աշխատասենյակի ճիշտ լուսավորվածությունը, աշխատողի նազելու կեցվածքը, աշխատանքի ընթացքում հաճախակի ընդմիջումներն ու կարարած հագուլք մարզանքները կնպաստեն աշխարունակության բարձրացմանը և հելպագա լուրջ հիվանդություններից խուսափելուն:**



1. **Համակարգչային դասարանում պահանջվող անվտանգության մի քանի կանոններ թվարկեք:**
2. **Համակարգչի ո՞ր բաղկացուցիչ սարքերը կարող են վնասել առողջությամբ:**
3. **Սարդու առողջության վրա ի՞նչ վնասակար ազդեցուրյուն կարող են բռնակել էլեկտրոնաճառագայթային խողովակով աշխարող մոնիթորները:**
4. **Ո՞ր մոնիթորներն են անվնաս:**
5. **Սարդու առողջության վրա ի՞նչ վնասակար ազդեցուրյուն կարող են բռնակել լազերային պատող սարքերը:**

§ 1.2 ՎԻՐՈՒՄ ԵՎ ՀԱԿԱՎԻՐՈՒՄ

Հիշեցնենք, որ **համակարգչային վիրուսը** ծրագրավորողների կողմից զրված «ինքնարազմացման» ունակությամբ օժտված փոքրածավալ ծրագիր է, որը կարող է համակարգչի աշխատանքում տարբեր անցանկալի երևոյթների պատճառ դառնալ՝ սկսած «ամենաամեղներից»։ Եկրանին բերվող պատկերի աղավաղում, երաժշտական հոլովակների ցուցադրում և այլն, մինչև լրջորեն վնասելը՝ համակարգչային տվյալների ոչնչացում և նույնիսկ համակարգչի առանձին միկրոսխեմաների անսարքության առաջացում։ Համակարգիչը վարակելուց հետո վիրուսը կարող է «թաքնվել» ու «հարձակման անցնել» սկսած որոշակի իրադարձությունից՝ շաբարված որևէ օրվանից, կոնկրետ ամսաթվից, կիրառական որևէ ծրագրի թողարկումից, փաստաբույր բացելուց։

Վիրուսի հիմնական աղբյուր կարող է լինել.

- վիրուսակիր ֆայլ պարունակող սկավառակը,
- համակարգչային ցանցը, այդ թվում՝ էլեկտրոնային փոստն ու ինտերնետը,
- վիրուսով վարակված կոշտ սկավառակը,
- օպերացիոն համակարգում թաքնված վիրուսը։

Վիրուսով վարակված լինելու մասին կարող են վկայել հետևյալ ախտանիշները.

- ազատ օպերատիվ հիշողության ծավալի անհիմն փոքրացումը,
- համակարգչի աշխատանքի և բեռնավորման գործընթացի դանդաղումը,
- ֆայլի պարունակության փոփոխությունը,
- ֆայլի ծավալի և վերջին վերափոխման ամսաթվի փոփոխությունը,
- տեքստային փաստաթղթի աղավաղումը,
- աշխատող կիրառական ծրագրի վթարային ելքը,
- օպերացիոն համակարգի ինքնավերաբեռնավորումը,
- օպերացիոն համակարգի բեռնավորման սխալները,
- ֆայլերի անհրաժեշտ բորապանակներում պահպանելու անհնարինությունը,
- ֆայլերի բազմաթիվ կրկնօրինակների ավտոմատ ստեղծումը և այլն։

Տարբերում են վիրուսների հետևյալ տիպերը.

- **ֆայլային** վիրուսներ. սրանք վարակում են ճկուն ու կոշտ սկավառակների վրա եղած ծրագրերն ու փաստաթղթեր պարունակող ֆայլերը,
- **բեռնավորվող** վիրուսներ. սրանք վնասում են կոշտ ու ճկուն սկավառակների համակարգչային տիրույթները,
- **դրոյական** վիրուսներ. սրանք իրենց «գաղտնի» աշխատանքի ընթացքում մի համակարգչից տեղեկություններ հավաքելով՝ ինտերնետով դրանք այլ համակարգիչ են ուղարկում և այլն։

Ներկայումս վիրուսակիր ծրագրերի դեմ կիրառվող բազմաթիվ **հակավիրուսային ծրագրեր** կան, որոնք հնարավորություն են տալիս ստուգել վիրուսի առկայությունը, հայտնաբերել վարակված ֆայլերը, վերականգնել («բուժել») դրանք։ Եթե վիրուսով վարակված ֆայլը վիրուսի կողմից այնպիսի փոփոխությունների է ենթարկվել, որ այն հնարավոր չէ վերականգնել, ապա օգտվողի ցուցումով այն կարելի է ջնջել։

Dr.Web, NOD32, Norton AntiVirus, Kaspersky Anti-Virus, Avast ծրագրերը ներկայում լսյուրեն կիրառվող հակավիրուսային միջոցներից են:

Dr.Web-ը լայնորեն տարածված հակավիրուսային ծրագիր է, որը մեծ հավանականությամբ ունակ է բացահայտել նույնիսկ անհայտ վիրուսները:

NOD32-ը շատ արագ աշխատող հակավիրուսային ծրագիր է, որն արյունավետ կերպով համակարգիչը պաշտպանում է հնարավոր վիրուսներից և, այսպես կոչված, «լրտեսական» ծրագրերից, որոնք հաճախ գրվագրային ծրագրերի տեսքով ինտեր-նետային ցանցով նույն գործեղով համակարգիչ՝ թաքնված կերպով տարատեսակ տեղեկություններ են հավաքում և ուղարկում տվյալ ծրագրերի տերերին: *NOD32*-ը միակ հակավիրուսային ծրագիրն է, որը վերջին 7 տարիներին գործարկելիս բացահայտել է **բոլոր** վիրուսները:

Norton Antivirus-ը նույնապես աշխարհում ամենակիրառվող հակավիրուսային միջոցներից է: Այս ծրագիրը գտնում և ոչնչացնում է առկա վիրուսները, ավտոմատ կերպով մեկուսացնում է «լրտես» ծրագրերը, չի բոլոյատրում «վարակված» նամակներ տարածել, բացահայտում է օպերացիոն համակարգում թաքնված «սպառնալիքները», համակարգիչը պաշտպանում ինտերնետային «որդերից», որոնք վիրուսակիր ծրագրեր են, և իրենց պատճեները տարածում են լոկալ կամ ինտերնետային ցանցերի միջոցով:

Kaspersky Anti-Virus-ը նույնապես ամենատարածվածներից է: Կիրառվող հասուկ մշակված ալգորիթմի շնորհիվ այս ծրագիրն անսխալ կողմնորոշվում է վիրուսներ ախտորոշելիս, ընդ որում՝ ի հայտ է բերում անզամ դեռևս անհայտ նոր վիրուսներ: Ծրագիրը կարողանում է «քռնել» նաև այնպիսի վիրուսներ, որոնք ներդրվում են *Microsoft Office*-ի փաստաթղթերում:

Այժմ մանրամասն ուսումնասիրենք **Avast** հակավիրուսային ծրագրի աշխատանքը: *Avast*-ը կարողանում է գտնել ինչպես համակարգչի կոշտ սկավառակի վրա, այնպես էլ հիշողության մեջ և սկավառակի բեռնավորիչ սեկտորներում եղած վիրուսները: Այս ծրագիրն ավտոմատ ստուգում է ստացված նամակները: *Avast*-ի դրական հատկություններից է նաև այն, որ բարմ տարբերակները կարելի են ստանալ ինտեր-նետի միջոցով: Ընդ որում՝ այս ծրագիրն ունի պարզ ու հասկանալի երկխոսային համակարգ և կիրառման մատչելի ձև:

Avast-ը գործարկվում է երկու եղանակով՝ *Home Edition* – մասնավոր օգտագործ-ման նպատակով՝ անվճար, և *Professional Edition* – կազմակերպությունների համար՝ վճարովի:


Avast հակավիրուսային ծրագիրը տեղակայելով՝ օգտագործողն ազատվում է լրացնուիչ այլ հակավիրուսային միջոցներ օգտագործելու անհրաժեշտությունից:

Ծանոթանանք *Avast*-ի ոռուսական տարբերակին:

Avast հակավիրուսային ծրագիրը համակարգչին տեղակայելու համար նախ այցելեք <http://avast.ru> կայքը, ծանոթացնեք ծրագրի առանձնահատկություններին, ապա http://avast.ru/Free_Avast_home_edition_download.htm էջից բեռնավորեք <setuprus.exe> ֆայլը: Սրանից հետո *Avast*-ը կառաջարկի համակարգիչը վերաբեռնավորել, որի ընթացքում ծրագիրը կստուգի համակարգչի ողջ համակարգը:

Համակարգչի բեռնավորումից հետո էկրանի ներքին աջ անկյունում (Ժամացույցի մոտ) կհայտնվի  տարբերանշանը: Եթե այն պտտվում է, ապա դա վկայում է այն

մասին, որ համակարգիչը պաշտպանության տակ է: Այդ տարրերանշանի տիրույթում մկնաբառը աջ սեղմակով բացված ենքատեքստային մենյուի (նկ. 1.1) միջոցով կարելի է կառավարել հակավիրուսային ծրագրի աշխատանքը՝ աշխատեցնել *Avast* հակավիրուսային ծրագիրը՝ **Запустить**, ժամանակավորապես դադարեցնել ու անհրաժեշտության դեպքում նորից բողարկել հակավիրուսային ծրագրի բաղադրիչ տարրերից ցանկացածը՝ **Приостановить**, սահմանել ծրագրի աշխատանքային ուժիմները՝ **Настройки программы**, զանազան տեղեկություններ ստանալ ծրագրի մասին՝ **Об avast!** և այլն:



Նկ. 1.1. Avast հակավիրուսային ծրագրի կառավարման հարաբերակային մենյու

Запустить антивирус հրամանն ընտրելիս նախ իրականացվում է բեռնավորված ծրագրերի և հիշողության ստուգում, որից հետո համակարգը ներկայացնում է հակավիրուսային ծրագրի երկխոսային պատուհանը (նկ. 1.2), որտեղ կարելի է ընտրել ստուգման ենթակա օրյենտը, ստուգելու եղանակն ու տեսնել ստուգման արդյունքը՝ որքանն է ստուգվել, որքանն է վարակված և այլն:




Նկ. 1.2. Վիրուսների ստուգման երկխոսային պատուհան

Վիրուս հայտնաբերելու գործընթացն սկսելուց առաջ պետք է երկխոսային պատուհանի աջ մասում եղած կոճակների օգնությամբ ընտրել ստուգման ենթակա տեղամասը:

 **Համակարգչի կոչվ սկավառակները ստուգելու** համար անհրաժեշտ է ընտրել **(Локальные диски)** կոճակը:

Ծկուն սկավառակների և CD դիսկերի պարունակությունը սպուզելու նպատակով պետք է ընտրել  (**Сменные носители**) կոճակը:

Առանձին բղբապանակներ սպուզելու համար անհրաժեշտ է ընտրել **(Внешний накопитель)** կոճակն ու բացված պատուհանում (նկ. 1.3) մկնիկի ձախ սեղմակով ստուգման ենթակա բղբապանակների անվանը կից քառակուսի վանդակում նշում կատարել:




Նկ. 1.3. Թղբապանակների ընդունության պարունակ

Սպուզման զգայունությունը (խորությունը) կարելի է սահմանել այդ նպատակին ծառայող պատուհանի (նկ. 1.4) սողնակի տեղաշարժմամբ:

Avast հակավիրուսային ծրագիրը հնարավորություն է տալիս ընտրել զգայունության հետևյալ 3 մակարդակներից որևէ մեկը.

- Экспресс сканирование** – արագ, մակերեսային ստուգում,
- Обычное сканирование** – սովորական, միջին ստուգում,
- Полное сканирование** – բոլոր ֆայլերի մանրամասն ստուգում:

Արխիվային ֆայլերը սպուզելու նպատակով անհրաժեշտ է նկ. 1.4-ում բերված պատուհանի **Сканировать архивные** դաշտում նշում կատարել:



Նկ. 1.4. Սպուզման զգայունության ընդունություն


Վիրուս հայփարերելու գործընթացն սկսելու համար անհրաժեշտ է սեղմել  (**Запустить**) կոճակը:

Որպեսզի հակավիրուսային ծրագրի աշխատանքն ընթանա համակարգչի հետ տարվող ակտիվ ծրագրի աշխատանքին համբուղ, այսպես կոչված՝ **Ֆոնային ուժինություն**, պետք է Avast-ի ծրագրի աշխատանքի ընթացքում ծրագրի երկխոսային պատուհանի վրա մկնիկի աջ սեղմակի սեղմում կատարել և բացված ենթատեքստային

պատուհանում ընտրել **Перейти в фоновый режим** իրամանը: Ֆոնային ռեժիմին անցնելիս վիրուսների ստուգման գործընթացը դանդաղ կրնանա, որովհետև այս դեպքում համակարգիչը կատարման առաջնահերթությունը կտա ակտիվ ծրագրին:

Վիրուս հայտնաբերելիս հակավիրուսային ծրագրը հետագա աշխատանքի մի քանի տարբերակներ է առաջարկում (նկ. 1.5).

- **Переименовать...** – անվանափոխել ֆայլը,
- **Удалить...** – հեռացնել ֆայլը,
- **В Хранилище...** – հայտնաբերված վիրուսակիր ֆայլը տեղափոխել նման ֆայլերի պահեստարան՝ հետագայում բուժելու, զնշելու կամ տեղափոխելու համար,
- **Ничего не делать** – շարունակել ստուգումը՝ ֆայլը բոլորվ անփոփոխ:



Նկ. 1.5. Վիրուսի առկայության մասին նախազգուշացնող պատուհան

Ֆայլը զնշելիս օպերացիոն համակարգը պահանջում է ընտրել ստորև բերված տարրերակներից որևէ մեկն ու սեղմել **Удалить** կոճակը (նկ. 1.6).

- **Удалить файлы в корзину** – հեռացված ֆայլն ուղարկել *Recycle Bin*,
- **Удалить файлы навсегда** – ֆայլը զնշել:



Նկ. 1.6. Ֆայլը զնշելու ժեն ընկրենու պատուհան

Ստուգումն ավարտելուց հետո *Avast*-ը հաղորդագրություն է տալիս **սպուզման արդյունքի** վերաբերյալ:

Avast-ի ④ տարրերանշանի տիրույթում մկնիկի ձախ սեղմակի օգնությամբ բացվում է **ռեզիլինգային պաշտպանության** պատուհանը: *Avast*-ի ռեզիլինտային ծրագիրը հաճակարգչի աշխատանքի ողջ ընթացքում անընդհատ վերահսկում է օպերատիվ հիշողությունն ու բոլոր աշխատող ծրագրերը՝ հետևելով կասկած հարուցող գործընթացներին: Ռեզիլիննտային ծրագիրն ավտոմատ ակտիվանում է համակարգիչը միայնելուց անմիջապես հետո:

Ռեզիլինգային պաշտպանությունն ընդհանրելու, դադարեցնելու կամ զայտնությունը փոփոխելու համար անհրաժեշտ է մկնիկի ցուցիչը տեղադրել հակավիրուսային ծրագրի ④ տարրերանշանի վրա, սեղմել ձախ սեղմակն ու բացված պատուհանում ընտրել անհրաժեշտ տարրերակները:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՈՍԵԱԼ

- ◆ *Տերսպային բնույթ կրող ֆայլերը վիրուսակիր չեն լինում, սակայն վիրուսը կարող է փոփոխանուն ենթարկել դրանք:*
- ◆ *Avast ծրագրի 4.7 տարրերակը մուլտիպլազմա 13 Մբայթ ծավալ ունի:*



1. **Ի՞նչ է համակարգչային վիրուսը:**
2. **Վիրուսի ի՞նչ աղբյուրներ գիտեք:**
3. **Ի՞նչ դիպի համակարգչային վիրուսներ գիտեք:**
4. **Ի՞նչ է հակավիրուսային ծրագիրը:**
5. **Հակավիրուսային ծրագրերի ի՞նչ փառեթներ են չեզ հայդահ:**
6. **Վիրուսի առկայությունը բնորոշող ի՞նչ «ախտանիշներ» գիտեք:**

2.

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾԵԼՆԹԱՑՆԵՐ



§ 2.1 ԻՆՖՈՐՄԱՑԻԱ: ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն գիտեք, ինֆորմատիկան ուսումնասիրում է ինֆորմացիայի ստացման, պահպանման, ձևափոխման, փոխանցման և օգտագործման հմարավոր ասպեկտները: Ինֆորմատիկայի հիմնական հասկացությունն ինֆորմացիան է: Ինֆորմացիա են պարունակում գրքերը, ամսագրերն ու թերթերը, բանավոր խոսքը, ցանկացած ուսուցությունները և այլն: Ինֆորմացիան զգայարաններով ընկալելով՝ մարդին այն պահպանում ու մշակում է ուղեղին և կենտրոնական նյարդային համակարգի միջոցով:

Ինֆորմացիա հասկացության հետ սերտորեն առնչվում են **ազդանշան, հաղորդագրություն** և **գովազներ** հասկացությունները:

Ազդանշան ինֆորմացիա կրող ցանկացած գործընթաց է:

Հաղորդագրություն որոշակի ձևաչափով ներկայացված ինֆորմացիա է, որը ենթակա է փոխանցման:

Գովազներ այն նախնական «տարրերն» են, որոնք մշակելու արդյունքում որոշակի ինֆորմացիա է ստացվում:

Տարրերում են ինֆորմացիա ներկայացնելու երկու ձև՝ **անընդհատ** և **դիսկրետ**: Քանի որ ինֆորմացիայի կրիչները հիմնականում տարաբնույթ ազդանշաններն են, ապա վերջիններիս ֆիզիկական բնույթն էլ որոշում է ինֆորմացիան նկարագրելու ձևը: Ազդանշանն **անընդհատ** է, եթե այն նկարագրող պարամետրը կարող է տրված միջակայքի ցանկացած արժեք ընդունել, իսկ **դիսկրետ** ազդանշանի դեպքում՝ միայն առանձին սևեռված (ֆիքսված) արժեքները:

Ինֆորմատիկայի տեսանկյունից կարևորում են ինֆորմացիայի հետևյալ հատկությունները. **հավասարիություն, ամրողականություն, արդիականություն, նոյնականություն** (համապատասխանություն, աղեկվատություն) և **մարքելիություն**:

Ինֆորմացիան պետք է լինի **հավասար**, այսինքն՝ օրյեկտիվորեն արտացոլի ուսումնասիրման ենթակա օրյեկտը, գործընթացը կամ երևույթը: Այս հատկության խմաստն ինֆորմացիայի՝ իրականությանը համապատասխանելու չափի մեջ է: Ոչ հավատի ինֆորմացիան կարող է սխալ որոշումների ու ստեղծված իրավիճակին ոչ համապատասխան վճիռների կայացման պատճառ հանդիսանալ:

Ամրողականություն հիմնականում բնութագրում է ինֆորմացիայի որակն ու որոշում կայացնելու համար անհրաժեշտ տվյալների բավարար լինելը: Օրինակ՝ հագուստի հարցում կողմնորոշվելու համար առավոտյան անհրաժեշտ է տեղեկություն ունենալ ոչ միայն օրվա միջին ջերմաստիճանի, այլև քամու, հնարավոր տեղումների մասին և այլն:

Ինֆորմացիայի **արդիականությունը** որոշվում է նրանով, թե ստացված տեղեկությունները որքանով են համապատասխանում ստեղծված իրավիճակին և ինչքանով կարող են օգտակար լինել: Այս հատկությունը մեծապես կախված է ստացված ինֆորմացիայի բարձրությունից և քննարկվող վիճակի փոփոխման արագությունից: Օրինակ, եթե եղած տեղեկության համաձայն իմնագ օր առաջ եղանակը բոլորային է եղել, ապա դա չի կարող հավաստել ընթացիկ համապատասխան իրավիճակի մասին, և այդպիսի տեղեկությունն արդիական չէ:

Ինֆորմացիայի **նույնականությունը** կամ, որ նույն է, **աղեկվագությունը** իրական օրյեկտի, գործընթացի կամ երևույթի ու դրա վերաբերյալ առկա ինֆորմացիայի միջոցով կառուցվող պատկերի (ինֆորմացիոն մոդելի) համապատասխանությունն է: Իրականում համարյա անհնար է օրյեկտի ու դրա մոդելի միջև բացարձակ նույնականացման հասնել, և որքան մեծ է նույնականացման աստիճանը, այնքան ստեղծված իրավիճակին համապատասխան գործուն վճռի կայացման հավանականությունն իրական իրական:

Ինֆորմացիայի **մապչելիությունը** հնարավոր է դառնում առկա ինֆորմացիան համապատասխան ձևափոխումների ենթարկելու ճանապարհով: Օրինակ, եթե միայն հայերեն լեզվին տիրապետող անձը հայտնվել է լաբրինթոսում, որտեղից դրւու գալու համար տրված ցուցումներն անզերենով են, ապա դժվար թե նա այնտեղից կարողանա շուտով դրւու գալ: Իրավիճակը շահեկանորեն կփոխվի, եթե համապատասխան ցուցումները բարգմանվեն և տրամադրվեն հայերենով, դառնան մատչելի:

Ինֆորմացիայի քանակը չափելու տարրեր մոտեցումներ կան:

Դիտարկենք հաղորդագրության ծավալի չափման գործընթացը: Ինֆորմացիայի քանակը հատկապես կարևորվում է տեխնիկական համակարգեր նախազգծելիս: Այսպես, օրինակ, կապի համակարգեր նախազգծելիս ու դրանք գործարկելիս խիստ արժեքություն է այնպիսի սարքավորումների առկայությունը, որոնք բույլ են տալիս կարճ ժամանակահատվածում հնարավորին մեծ քանակությամբ ինֆորմացիա փոխանցել:

Եթե ինֆորմացիան 0-ների և 1-երի հաջորդականությունն է ներկայացնում, ապա որպես ինֆորմացիայի միավոր կարելի է համարել այդ հաջորդականության մեկ դիրքը, իսկ ինֆորմացիայի քանակ՝ հաջորդականության երկարությունը: Դիտարկենք հետևյալ օրինակը: Դիցուք, ծնողները որդուց ստացել են Ես ընդունվել եմ համալսարան հաղորդագրությունը: Եթե հաշվի առնենք, որ առաքված հաղորդագրությունը 25 պայմանանշան է պարունակում (ներառյալ բացատանիշները), իսկ համակարգչում յուրաքանչյուր պայմանանշան կողավորելու համար 8 քիթ է հատկացվում, ապա ստացված հաղորդագրությունը $25 \times 8 = 200$ քիթ ծավալով հիշողություն կգրադարձնի:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ ինֆորմացիայի քանակը պայմանավորվում է ինֆորմացիայի բովանդակությամբ: Այս դեպքում ինֆորմացիայի բովանդակային քանակը կապված է ինֆորմացիայի ստացման արդյունքում անորոշության աստիճանի կրծատման հետ, որն ուսումնասիրվում է ինֆորմացիայի տեսության մեթոդներով:

Որպես ինֆորմացիայի քանակի միավոր ընդունում են ինֆորմացիայի այն քանակությունը, որն անորոշությունը կրծագում է երկու անգամ:

Օրինակ՝ վեր նետված մետաղադրամը կարող է գետնին ընկնել **արծիվ** կամ **զիր** կողմերից որևէ մեկով: Քանի դեռ մետաղադրամը չի ընկել, երկու հնարավոր ելքերով անորոշություն ունենք: Մետաղադրամն ընկնելուց հետո անորոշությունը երկու անգամ կրճատվում է՝ հնարավոր տարբերակներից միայն մեկն է իրականանում:

**Ինֆորմացիայի այն քանակը, որը կարելի է սրանալ հարցի այն կամ
ոչ պարասիսներից որևէ մեկով, անվանում են **рիբ**:**

Վերը բերված օրինակում ստացվող ինֆորմացիայի քանակը հավասար է **1 ріб**: Նկարագրված եղանակով անորոշությունների տարբերակների ու դրանք վերացնելու համար անհրաժեշտ ինֆորմացիայի քանակի միջև կապը սահմանել է ամերիկացի ճարտարագետ Ո. Հարտլին 1928 թվականին: Դա արտահայտվում է հետևյալ քանաձևով.

$$N=2^k,$$

որտեղ N -ը անորոշությունների տարբերակների քանակն է, իսկ k -ն՝ ինֆորմացիայի քանակը բիթերով:

Օրինակ՝ 1-ից 100 միջակայքում ընկած ամբողջ թիվը գուշակելու նպատակով անհրաժեշտ ինֆորմացիայի քանակը կարելի է որոշել՝ լուծելով $100=2^k$ հավասարումը, որի արդյունքում $k \approx 6,644$ ինֆորմացիայի քանակը:

Հիշեցնենք, որ համակարգում 8 բիթերի համախումքն անվանում են **բայթ**: Ինֆորմացիայի քանակի չափման համար այլ միավորներ ևս գոյություն ունեն. **Կիլոբայթ** (Կբայթ), **մեգաբայթ** (Մբայթ), **գիգաբայթ** (Գբայթ), **տերաբայթ** (Տբայթ), **պետաբայթ** (Պբայթ) և այլն: Սրանց միջև հարաբերակցությունն այսպիսին է.

$$1 \text{ Կբայթ} = 1024 \text{ բայթ} = 2^{10} \text{ բայթ},$$

$$1 \text{ Մբայթ} = 1024 \text{ Կբայթ} = 2^{20} \text{ բայթ},$$

$$1 \text{ Գբայթ} = 1024 \text{ Մբայթ} = 2^{30} \text{ բայթ},$$

$$1 \text{ Տբայթ} = 1024 \text{ Գբայթ} = 2^{40} \text{ բայթ},$$

$$1 \text{ Պբայթ} = 1024 \text{ Տբայթ} = 2^{50} \text{ բայթ}:$$



1. **Ի՞նչ է ուսումնասիրում ինֆորմատիկան:**
2. **Ինֆորմացիայի ներկայացման ինչպիսի չեղեր գիտեք:**
3. **Ինֆորմացիայի ի՞նչ հարկություններ գիտեք:**
4. **Ինֆորմացիայի քանակի հաշվման ի՞նչ մողեցումներ գիտեք:**
5. **Ի՞նչ է բիթը:**
6. **Ինֆորմացիայի քանակի չափման ի՞նչ միավորներ գիտեք:**

§ 2.2 ԻՆՔՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐ

Ինֆորմացիայի **սպացումը, փոխանցումը, կուրսակումը, մշակումը, պահպանումն** ու **որոշումն** ինֆորմացիոն գործընթացներ են, որոնք կարևոր դեր ունեն ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ գիտության ու տեխնիկայի մեջ:

Ինֆորմացիայի սպացումը հետազողման հնարակա օրյեկտի, գործընթացի կամ երևոյթի վերաբերյալ գեղեկույթի սպացումն է:

Փորձն ինֆորմացիայի ստացման կարևորագույն մերողներից է: Փորձի կուտակման ու վերլուծման շնորհիվ մարդկությունը էական ձեռքբերումներ է ունեցել: Ինֆորմացիայի ստացման գործում էական է նաև **փորձարկումների և սխալների (էվրիստիկի)** մերողի նշանակությունը: Ըստ այս մոտեցման՝ բազմաթիվ փորձեր են իրականացվում, ապա ընտրվում արդյունքում առավել հաջողված տարբերակները: Ի տարբերություն սրա՝ **գիտական մեթոդի** դեպքում բոլոր հնարավոր տարբերակները փորձարկելու փոխարեն նախ և առաջ **նպարակառողջած որոշում** է իրականացվում. ուսումնափուլում են համապատասխան բնագավառում առկա ձեռքբերումները, վերլուծվում, այնուհետև ժամանակակից տեխնիկայի կիրառմամբ նպատակառողջած փորձեր են անցկացվում:

Ինֆորմացիայի ստացման խնդիրը չի կարելի որպես առանձին գործընթաց դիտարկել: Այն սերտորեն կապված է այլ գործընթացների՝ մասնավորապես **ինֆորմացիայի փոխանցման** հետ:

Փոխանցման գործընթացում ինֆորմացիան աղբյուրից հաղորդագրության գերպող առարկումն է սպացողին (ընդունողին):

Աղբյուրից ստացված ինֆորմացիան **կողավորող** սարքի միջոցով նախ վերածվում է հաղորդման ենթակա ազդանշանի (նկ. 2.1), ապա որոշակի միջոցներով (**կուպուլյանում**) առաքվում **ապակողավորող (վերծանույ)** սարքին, որտեղ ստանում է ընդունողին հասկանալի, անհրաժեշտ ձևով: Բանավոր հաղորդագրություն փոխանցելիս կապույին օդն է, որի միջոցով կատարվում է ձայնային ալիքների տարածումը, իսկ գրավոր հաղորդագրության դեպքում՝ տեքստ պարունակող թղթի թերթը: Հեռախոսային հաղորդակցության դեպքում ինֆորմացիայի աղբյուրը խոսողն է: Ձայնային ալիքները միկրոֆոնի միջոցով կողավորվում են էլեկտրական ազդակների, ապա հեռախոսալարերով (կապույիներով) փոխանցվում հաղորդակցի հեռախոսին: Ընդունված ինֆորմացիան այստեղ **սպակողավորում** և կրկին վերածվում է ձայնային ինֆորմացիայի: Այս ինֆորմացիոն համակարգն իր մեջ ներառում է հեռախոս (սար-

քավորում), հաղորդալար (միջոց, կապուղի) և ավտոմատ հեռախոսակայաններ (սարքավորումներ): Այսպիսի ինֆորմացիոն համակարգերն անվանում են **ինֆորմացիայի փոխակերպմամբ** աշխատող **ինֆորմացիոն համակարգեր**:


Ինֆորմացիա սպանալու, պահպանելու, մշակելու և փոխանակելու նպագակով կիրառվող միջոցների, սարքերի ու սարքավորումների ամրողությունն անվանում են ինֆորմացիոն համակարգ:

Հեռախոսն ինֆորմացիոն համակարգի մասնավոր օրինակ է:

Ինֆորմացիայի փոխանցումը կապուղիներով հաճախ է ուղեկցվում **ինֆորմացիաներով**, այսպես կոչված՝ «**աղմուկ»**-ով: Արդյունքում նախնական ինֆորմացիան աղավաղվում, երբեմն էլ կորուստներ է ունենում:

Ինֆորմացիոն համակարգերը բնութագրվում են ինֆորմացիա փոխանցելու **բողոքակուրյամբ**՝ միավոր ժամանակահատվածում փոխանցված ինֆորմացիայի քանակով (քիթ/վրկ): Ի պատճի հեռագրի գյուտի հեղինակի՝ բողոքակուրյան միավորին տրվել է **Բող անվանումը՝ 1 Բող = 1 քիթ/վրկ**: Ինֆորմացիոն համակարգի ինֆորմացիա փոխանցելու բողոքակուրյունը որոշվում է երկու մեծություններով՝ **Կարգայնությամբ** ու **հաճախուրյամբ**, և ուղիղ համեմատական է դրանց արտադրյալին: **Կարգայնությունն** ինֆորմացիոն կապուղում տեղափորվող ինֆորմացիայի առավելագույն քանակն է, իսկ **հաճախուրյունն** ցույց է տալիս, թե փոխանցվելիս ինֆորմացիայի քանի նման բաժիններ կարող են միավոր ժամանակահատվածում տեղափորվել կապուղում:

Հեռախոսային կապուղին միակարգ է. հեռախոսալարով կարելի է միաժամանակ միայն մեկ ազդանշան տեղափոխել՝ մեկ կամ *զրո* (ազդակ կամ չկա), սակայն նման կապուղու հաճախուրյունը կարող է վայրկյանում հասնել հարյուր հազարավոր շրջապտույտի: Այս հատկությունը հնարավորություն է տալիս հեռախոսային ցանցն օգտագործել համակարգիչների միջև կապ ստեղծելու նպատակով:



Նկ. 2.1. Ինֆորմացիոն համակարգի ընդհանուր սխեմա

Որպեսզի ընդունված ինֆորմացիան բազմակի օգտագործման հնարավորություն ունենա, այն պետք է պահպանել նյութական կրիչի վրա (համակարգիչ, մագնիտոֆոն, լուսանկար, կիմոննկար և այլն):

Ինֆորմացիայի նախնական գովյալների չև ավորման գործընթացն անվանում են ինֆորմացիայի կուպակում:

Հնարավոր է, որ կուտակված ինֆորմացիայի միայն որոշ մասն արժեք ներկայացնի:

Ինֆորմացիայի պահպանումը նախնական տվյալները պահելու գործընթաց է: Ինֆորմացիա պահպաններու գործընթացը նույնքան հիմն է, որքան քաղաքակրթությունը: Ինֆորմացիայի կուտակման, երկարաժամկետ պահպանման և փոխանցման համար տարրեր կրիչներ են օգտագործվում. **ԴՆԹ-ի մոլեկուլ**, բուդր, լոսանկար, տեսափիլմ, հիշողության միկրոսխեմա, մազնիսական և օպտիկական սկավառակ և այլն: **ԴՆԹ-ն** (դեօքսինիբոնուկլեինաթթու, անգլերեն՝ *Deoxyribonucleic acid – DNA*) նույնեինաթթու է, որը պարունակում է կենդանի օրգանիզմների և որոշ հարուցիչների զարգացման հիմնական գործընթացներին վերաբերող հրահանգները: **ԴՆԹ-մոլեկուլի** հիմնական դերն ինֆորմացիայի երկարատև պահպանումն է: **ԴՆԹ-ի** այն հատվածները, որոնք ծագումնաբանական ինֆորմացիա են պարունակում, կոչվում են **գեների**: **ԴՆԹ** մոլեկուլներն ինֆորմացիայի պահպանման մեջ ծավալ ունեն՝ 1 սմ³-ում մինչև 10^{21} բիթ: Համեմատության համար նշենք, որ ժամանակակից միկրոսխեմաները 1 սմ³-ում կարող են պահպանել մինչև 10^{10} բիթ ինֆորմացիա: Ինֆորմացիայի պահպանման գործընթացում կարևոր բնութագրեր են **պահպանման հուսալիուրյուններ** ու **գույնուրյուններ**. այս առումով ևս **ԴՆԹ-մոլեկուլներն** առավելություն ունեն: Մարդու **ԴՆԹ** մոլեկուլներն ունակ են գենետիկ որոշ ինֆորմացիա պահպաններու մինչև տասնյակ հազարավոր տարիներ, իսկ որոշ կենդանի օրգանիզմներ՝ նույնիսկ մինչև միլիոնավոր տարիներ:

Ինֆորմացիայի մշակումը գործընթաց է, որի դեպքում առկա ինֆորմացիայից որոշակի ալգորիթմների կիրառմամբ մեկ այլ՝ նպագակային ինֆորմացիա է ստացվում:

Մշակման գործընթացն ինֆորմացիայի ծավալի մեծացման և բազմազանության ստեղծման հիմնական միջոցն է: Ինֆորմացիայի մշակման միջոցներ են զանազան սարքերն ու համակարգերը, իսկ դրանց մեջ ամենակարևորը՝ համակարգիչը: Քանի որ մարդու կողմից ստեղծված ինֆորմացիան առավելապես ներկայացվում է թվային տվյալների տեսքով, ապա տրամաբանական է այն համակարգչի միջոցով մշակելը:


Ինֆորմացիայի որոնումն առկա տվյալներից անհրաժեշտ առանձնացնելու և ժամանակին այն դրամադրելու գործընթացն է:

Հսկայածավալ ինֆորմացիայից անհրաժեշտը որոնելը շատ բարդ է ու աշխատատար: Դա է պատճառը, որ այդ գործընթացում որոնման ժամանակակից միջոցների ու մեթոդների կիրառումն անհրաժեշտություն է:

Ինֆորմացիոն-որոնողական համակարգերում ինֆորմացիան ոչ միայն մուլտիպլուս, այլև համակարգում են, պահպանում և ինֆորմացիա փրամադրում՝ առանց դրանք փոփոխելու:

Օրինակ՝ ավիատոմսարկերի աշխատանքը սպասարկող որոնողական համակարգերը, ուղարկություններ տրամադրելուց բացի, տոմսավաճառներին ապահովում են տունս վաճառելու համար անհրաժեշտ ինֆորմացիայով: Ինֆորմացիոն-որոնողական համակարգ է սպասարկում նաև գրադարանների ընթերցողներին, որը նրանց հնարավորություն է տալիս քարտադրանում ցանկացած տպագիր նյութի վերաբերյալ ինֆորմացիա որոնել, իսկ գրադարանավարին էլ օգնում է համակարգել ընդունված հայցերը:

Ցանկացած ինֆորմացիոն համակարգ կարող է գործել **դեկազարման** այսպես կոչված, **բաց** կամ **փակ** սխեմայով: **Բաց ինֆորմացիոն համակարգից** օգտագործելով ըստ իր հայեցողության, ինֆորմացիոն համակարգում այլ տվյալներ չի ներդնում: Եթե համակարգի գործառույթն ընդունողից կախված չէ, այսինքն՝ ընդունողը դեկազարող դերակատարում չունի, ապա ինֆորմացիոն համակարգի աշխատանքի համապատասխան ռեժիմը բնութագրում են որպես **ինքնուրույն (ավտոմատ)** գործող **բաց ռեժիմ** (նկ. 2.2):




Նկ. 2.2. Բաց ինֆորմացիոն համակարգ

Գրադարաններում կամ ընթերցասրահներում տեղադրված է բաց ինֆորմացիոն համակարգչային տեղեկատու քարտադրանային համակարգ: Առկա տպագիր նյութի վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո ընթերցողն այլևս որևէ կերպ չի ազդում նման համակարգի վրա:

Փակ ինֆորմացիոն համակարգում (նկ. 2.3) օգտվողի և համակարգի գործառման միջև **հակադարձ կասպ** կա, որն իրականացվում է **հակադարձ կասպի ընդունիչի** միջոցով: Օգտվողը, համակարգից անհրաժեշտ տվյալները ստանալով, հակադարձ կասպի ընդունիչի միջոցով նոր տվյալներ է մուտքագրում համակարգ: Ներմուծվող այլ տվյալների հետ միասին նոր ուղարկված ինֆորմացիան վերամշակվում է համակարգի ծրագրային փաթեթների կողմից, և արդյունքում ստացված նոր տվյալները նորից փոխանցվում են հետ՝ օգտվողին:

Փակ ինֆորմացիոն համակարգի օրինակ է ավիատոմսարկերը, որը տեղեկություն-

Աեր է տրամադրում առկա տոմսերի վերաբերյալ: Հերթական տոմսի վաճառքից հետո տոնսավաճառն ինֆորմացիա է ներմուծում համակարգ, իսկ համապատասխան ծրագիրն ըստ այդ ինֆորմացիայի փոփոխություն է մտցնում առկա տոմսերի տվյալների հենքում: Այս փակ համակարգում հակադարձ կապն իրագործվում է վաճառված տոմսերի տեղեկույթի տեսքով:



Նկ. 2.3. Փակ ինֆորմացիոն համակարգ



1. **Ի՞նչ ինֆորմացիոն գործընթացներ գիտեք:**
2. **Ինֆորմացիայի սպասման ի՞նչ մերողներ գիտեք:**
3. **Ինչպես է իրականացվում ինֆորմացիայի փոխանցումը:**
4. **Ի՞նչ է ինֆորմացիոն համակարգի բողոքակությունը:**
5. **Ի՞նչ է Բողոք:**
6. **Ինֆորմացիան պահպանելու ի՞նչ կրիչներ գիտեք:**
7. **Ի՞նչ է ինֆորմացիոն-որոնողական համակարգը:**
8. **Ի՞նչ բաղադրիչներով է բնուրագրվում ինֆորմացիոն համակարգը:**
9. **Բնուրյունը մարդու գենը պահպանելու նպակակող ի՞նչ «կրիչ» է օգտագործում:**
10. **Ինֆորմացիոն համակարգի զեկավարման ի՞նչ սխեմաներ գիտեք:**
11. **Ինֆորմացիոն համակարգի գործառույթի և օգվագողի միջև ի՞նչ լրացուցիչ կապի միջոց է կիրառվում:**
12. **Բաց ինֆորմացիոն համակարգի որևէ օրինակ բերեք:**
13. **Փակ ինֆորմացիոն համակարգի որևէ օրինակ բերեք:**

3.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ



§ 3.1 ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ

Մարդիկ ինֆորմացիա փոխանակելու նպատակով բնական լեզուներ են օգտագործում՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, չինարեն և այլն: Այսպիսով, ինֆորմացիան նախ և առաջ ներկայացվում և փոխանցվում է բնական լեզուների միջոցով, որոնց հիմքում տարբեր այրութենաներ են ընկած: Այրութենք պայմանանշանների հավաքածու է, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում արտահայտելու յուրաքանչյուր լեզվին յուրահատու հնչյունների համակարգը: Հայերեն լեզվի հիմքում ընկած է 39 պայմանանշան (տառ) պարունակող այրութեն, անգլերենում՝ 26, ռուսերենում՝ 32, չինարենում՝ տասնյակ հազարավոր պայմանանշաններ պարունակող այրութեն: Այրութենի տառերով, ուղղագրության կանոնների համաձայն՝ կազմվում են լեզվի հիմնական բաղկացուցիչներ՝ բառերը, այնուհետև բառերի միջոցով, քերականության կանոնների համաձայն՝ նախադասությունները: Թե՛ քերականության, թե՛ ուղղագրության կանոնների համակարգերը պատմական հիմքեր ունեն, և, չնայած դրան, բոլոր բնական լեզուներն եւ այդ կանոններից բացառություններ են պարունակում:

Բնական լեզուներից բացի, մարդը ստեղծել է նաև մի շարք, այսպես կոչված, ֆորմալ լեզուներ՝ հաշվարկման համակարգեր, ծրագրավորման լեզուներ և այլն: Ֆորմալ լեզուները, ի տարբերություն բնական լեզուների, քերականության և ուղղագրության խիստ կանոններ ունեն: Ֆորմալ լեզուներում որպես նշաններ օգտագործում են ինչպես թվեր ու տառեր, այնպես էլ այլ միջոցներ՝ քիմիական բանաձևեր, նոտաներ, երթևեկության նշաններ և այլն:

Եթե բանավոր խոսքում ինֆորմացիան փոխանցվում է հիմնականում ձայնային ազդանշանների միջոցով, ապա համակարգչային ինֆորմացիան ներկայացվում և փոխանցվում է կողերի միջոցով:

Ինչպես արդեն գիտեք, **կողմանական** ինֆորմացիայի ներկայացման համար կիրառվող պայմանանշանների համախումբն է, իսկ կողմի տեսքով ինֆորմացիայի ներկայացման գործընթացը՝ **կողմանական աղյուսակի** միջոցով:

Կողագորելու գործընթացում երկու տարբեր նշանային համակարգերի պայմանանշանների միջև միարժեք կապը հաստատվում է, այսպես կոչված, **համապատասխանության աղյուսակի** միջոցով:

Համակարգչի կիրառմամբ ինֆորմացիա փոխանակելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում **կողմանական** և **ապակողմանական** գործողություններ իրականացնել: Ստեղնաշարից ցանկացած պայմանանշան ներմուծելիս ավտոմատ կերպով պայմանանշանի կողավորում է իրականացվում, այսինքն՝ ձևափոխվում է համապատասխան համակարգչային կողի, իսկ արտածելիս այն ենթարկվում է ապակողման, այսինքն՝ համակարգչային կողը համապատասխանեցվում է գրաֆիկական պատկերին՝ նշանին:

Ինչպես հիշում եք, թվերի գրության ու ներկայացման կանոնների համախումբն անվանում են **հաշվարկման համակարգ**, և լստ թվերի ներկայացման ձևի տարրերում են հաշվարկման **դիրքային** և **ոչ դիրքային** համակարգեր: Հաշվարկման ոչ դիրքային համակարգի միջոցով ներկայացված թվի գրության մեջ թիվ արտահայտող պայմանանշանի արժեքը կախված չէ իր գրաված դիրքից:

Դիրքային համակարգերի համար սահմանված որոշակի պարզ կանոնների օգնությամբ կարելի է ցանկացած թիվ միարժեքորեն ներկայացնել հաշվարկման որևէ այլ դիրքային համակարգում և ցանկացած թվաբանական գործողություն իրականացնել դրա հետ:

Հաշվարկման դիրքային համակարգերն առավել առաջադիմական են համարվում, քանի որ դրանցում թիվը ներկայացնելու համար ավելի քիչ պայմանանշաններ են կիրառվում: Բացի այդ, քանի որ դիրքային համակարգերում բազմանիշ թվերի հետ գործողություններն իրականացվում են դիրք առ դիրք, ապա այստեղ ցանկացած թվաբանական հաշվարկ կատարելու համար բավական է իմանալ միանիշ թվերի գործարման ու բազմապատկման աղյուսակներն ու սյուներով գործողություններ կատարելու կանոնները:

Ցանկացած դիրքային համակարգում թիվ ներկայացնելու համար թվանշանների որոշակի քանակ է կիրառվում. այդ թվանշանների քանակից կախված՝ համակարգը ստանում է իր անվանումը: Օրինակ, ինչպես գիտեք, տասական համակարգում օգտագործվում են հետևյալ տաս թվանշանները. **0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9:**

Այս դասընթացի շրջանակներում ուսումնասիրելու ենք համակարգչային տեխնիկայում առավել լայն կիրառում գտած հաշվարկման 2-ական, 8-ական և 16-ական համակարգերը:

Երկուական համակարգը հաշվարկման դիրքային համակարգերից պարզագույնն է. չ”որ այստեղ օգտագործվում են ընդամենը **0** և **1** թվանշանները: Երկուական համակարգը լայն կիրառում է ստացել համակարգչային տեխնիկայում, քանի որ էլեկտրոնային իրագործման տեսակետից սրա կողավորումը շատ հարմար է. «1»-ը էլեկտրոնային ազդանշանի առկայությունն է, «0»-ն՝ բացակայությունը:

Ութական համակարգում օգտագործվում են ութ հետևյալ թվանշանները՝ **0, 1, 2, 3, 4, 5, 6 և 7:**

Տասննեցական համակարգում օգտագործվում են **0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9** թվանշաններն ու **A, B, C, D, E, F** տառերը, որոնք համապատասխանաբար փոխարինում են տասական 10, 11, 12, 13, 14, 15 թվերին:



1. Ի՞նչ է այրութեանը:

2. Ի՞նչ է կողը:

3. Ի՞նչ է կողավորումը:

4. Ինչո՞վ են գրաբերվում դիրքային և ոչ դիրքային համակարգերը:

5. Ի՞նչ է հաշվարկման համակարգը: Ի՞նչ են անվանում հաշվարկման համակարգի հիմք:

6. Քանի՞ թվանշան է օգտագործվում հաշվարկման հետևյալ դիրքային համակարգերում ա) 2, բ) 8, գ) 10, դ) 16, ե) 256:

§ 3.2 ԹՎԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՄՅՈՒՄԸ

Թվերը մի համակարգից մյուսը փոխակերպելու հարցերն ուսումնասիրելուց առաջ նախ պարզենք, թե տասական թիվն իրականում ի՞նչ բաղադրիչներից է ձևավորվում: Օրինակ՝ 426 թիվն ուսումնասիրելիս նկատում ենք, որ այն պարունակում է 4 հարյուրակ, 2 տասնյակ և 6 միավոր: Այսպիսով՝ ստացվում է, որ

$$426 = 4 \cdot 100 + 2 \cdot 10 + 6 = 4 \cdot 10^2 + 2 \cdot 10^1 + 6 \cdot 10^0:$$

Նկատենք, որ կարևոր օրինաչափություն կա թվի մեջ թվանշանի դիրքի և 10-ի այն աստիճանի միջև, որի օգնությամբ ստացվում է յուրաքանչյուր գումարելի: Եթե թվանշանների դիրքերը համարակալենք աջից ձախ՝ սկսած 0 համարից, ապա 426 թվի 6 թվանշանը 0-րդ դիրքում է, 2-րդ՝ 1-ին, 4-րդ՝ 2-րդ:

Դժվար չէ նկատել, որ իրական թվի կոտորակային մասը նույնպես կարելի է ներկայացնել 10-ի, բայց արդեն բացասական աստիճանների միջոցով: Օրինակ՝ 0,3548 թիվը կներկայացվի հետևյալ կերպ:

$$0,3548 = 3 \cdot 10^{-1} + 5 \cdot 10^{-2} + 4 \cdot 10^{-3} + 8 \cdot 10^{-4}:$$

Այսպիսով կստանանք.

$$426,3548 = 4 \cdot 10^2 + 2 \cdot 10^1 + 6 \cdot 10^0 + 3 \cdot 10^{-1} + 5 \cdot 10^{-2} + 4 \cdot 10^{-3} + 8 \cdot 10^{-4}:$$

Ընդհանուր դեպքում ամբողջ մասի թվանշանների քանակն է, իսկ ո-ր՝ կոտորակային մասի թվանշանների քանակը:

$$a_{m-1} \cdot 10^{m-1} + a_{m-2} \cdot 10^{m-2} + \dots + a_0 \cdot 10^0 + a_{-1} \cdot 10^{-1} + a_{-2} \cdot 10^{-2} + \dots + a_{-n} \cdot 10^{-n}:$$

Այսուղ ո-ր թվի ամբողջ մասի թվանշանների քանակն է, իսկ ո-ր՝ կոտորակային մասի թվանշանների քանակը:

Այս մեթոդով կարելի է ցանկացած այլ հաշվարկման համակարգի թիվ ներկայացնել տասական համակարգում: Օրինակ՝ տասական համակարգում ներկայացնենք երկուական 1010,111 թիվը.

$$1010,111_2 = 1 \cdot 2^3 + 0 \cdot 2^2 + 1 \cdot 2^1 + 0 \cdot 2^0 + 1 \cdot 2^{-1} + 1 \cdot 2^{-2} + 1 \cdot 2^{-3} = 10,875_{10}:$$

Նման տրամարանությամբ հեշտ է տեսնել, որ

$$761,348 = 7 \cdot 8^2 + 6 \cdot 8^1 + 1 \cdot 8^0 + 3 \cdot 8^{-1} + 4 \cdot 8^{-2} = 7 \cdot 64 + 6 \cdot 8 + 1 \cdot 1 + 3/8 + 4/64 = 497,4375_{10},$$

$$A5F,E_{16} = A \cdot 16^2 + 5 \cdot 16^1 + F \cdot 16^0 + E \cdot 16^{-1} = 10 \cdot 16^2 + 5 \cdot 16^1 + 15 \cdot 16^0 + 14 \cdot 16^{-1} = 2655,875_{10}:$$

Այսպիսով, ***p-ական համակարգի թիվը պասական համակարգում ներկայացնելու համար*** անհրաժեշտ է կազմակերպել գումար, որի յուրաքանչյուր գումարելի ստացվում է թվի համապատասխան թվանշանը բազմապատկելով p -ի այն աստիճանով, որը հավասար է տվյալ թվանշանի գրաված դիրքի համարին: Թվի մեջ թվանշանների դիրքերի համարակալումն ամբողջ մասի համար կատարվում է աջից ձախ՝ սկսած 0 համարից, իսկ կոտորակային մասի համար՝ ձախից աջ, սկսած (-1) -ից:

Ընդհանուր դեպքում թվի ամբողջ և կոտորակային մասը կազմող բաղադրիչների համար մի համակարգից մյուսին անցնելու ալգորիթմները տարրեր են:

Ալգորիթմ 1: p-ական ամբողջ թիվը q-ական համակարգում ներկայացնելու համար անհրաժեշտ է հաջորդաբար իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Թիվը բաժանել գ-ի վրա՝ թվաբանական գործողությունները կատարելով p-ական համակարգի կանոններով:
2. Առանձնացնել բաժանման արդյունքում ստացված մնացորդը, իսկ քանորդը նորից բաժանել գ-ի վրա:
3. Բաժանելու ու մնացորդ առանձնացնելու գործընթացը կրկնել այնքան, քանի դեռ ստացվող քանորդը հավասար չէ 0-ի:
4. Թիվի զ-ական ներկայացումը ստանալ՝ առանձնացված մնացորդներն ըստ ստացման հաջորդականության վերջինից առաջինը հաջորդաբար կցագրելով:
5. Եթե $p > q$, ապա մնացորդները կցագրվում են նույնությամբ, հակառակ դեպքում կցագրվող մնացորդների արժեքները նախ պետք է փոխարինել դրանց զ-ական համարժեքներով:

Օրինակ՝ տասական 105 ամբողջ թիվը ներկայացնենք երկուական համակարգում.

Քանորդը	Մնացորդը
$105 : 2 =$	52
$52 : 2 =$	26
$26 : 2 =$	13
$13 : 2 =$	6
$6 : 2 =$	3
$3 : 2 =$	1
$1 : 2 =$	0

↑
1
0
0
1
0
1
1

Առանձնացված մնացորդների՝ վերջից դեպի սկիզբ հաջորդական կցագրմամբ կստանանք տասական 105 թվի երկուական գրառում՝ 1101001₂:

Բերված ալգորիթմով կարող ենք նաև ութական ու տասնվեցական թվերը ներկայացնել երկուական համակարգում:

Ալգորիթմ 2: p-ական համակարգի կոտորակային թիվը q-ական համակարգում ներկայացնելու համար անհրաժեշտ է հաջորդաբար իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Թիվը բազմապատկել գ-ով՝ թվաբանական գործողությունները կատարելով p-ական համակարգի կանոններով:
2. Առանձնացնել բազմապատկման արդյունքում ստացված ամբողջ մասը (որը կարող է լինել նաև զրո), իսկ կոտորակային մասը նորից բազմապատկել գ-ով:
3. Բազմապատկման ու ամբողջ մաս առանձնացնելու գործընթացը կրկնել այնքան, քանի դեռ կոտորակային մասը չի հավասարվել զրոյի կամ ավելի փոքր կանխորոշված որևէ թվի: Վերջին դեպքում համարվում է, որ կոտորակային մասի զ-հիմնային գրությունը ստացվել է որոշակի ճշտությամբ:
4. Թիվի զ-ական ներկայացումը ստացվում է առանձնացված ամբողջ մասերն ըստ ստացման կարգի հաջորդաբար կցագրելով:
5. Եթե $p > q$, ապա առանձնացված ամբողջ մասերը կցագրվում են անփոփոխ, հակառակ դեպքում կցագրելուց առաջ դրանք պետք է փոխարինել իրենց զ-ական համարժեքներով:

Օրինակ՝ տասական $0,03125$ կոտորակային թիվը ներկայացնենք երկուական համակարգում.

$$\begin{array}{l|l} 0,03125 \times 2 = & 0,06250 \\ 0,06250 \times 2 = & 0,12500 \\ 0,12500 \times 2 = & 0,25000 \\ 0,25000 \times 2 = & 0,50000 \\ 0,50000 \times 2 = & \downarrow 1,00000 \end{array}$$

Առանձնացված ամբողջ մասերի հաջորդական վերից վար կցազրմամբ կստանանք տրված թվի երկուական գրառումը.

$$0,03125_{10} = 0,00001_2:$$

Ստուգենք արդյունքը՝ ստացված երկուական թիվը նորից տասականի վերածելով.

$$0,00001_2 = 0 \cdot 2^{-1} + 0 \cdot 2^{-2} + 0 \cdot 2^{-3} + 0 \cdot 2^{-4} + 1 \cdot 2^{-5} = 1/32 = 0,03125_{10}:$$

Օրինակ՝ տասական $0,342$ կոտորակային թիվը ներկայացնենք երկուական համակարգում.

$$\begin{array}{l|l} 0,342 \times 2 = & 0,684 \\ 0,684 \times 2 = & 1,368 \\ 0,368 \times 2 = & 0,736 \\ 0,736 \times 2 = & 1,472 \\ 0,472 \times 2 = & 0,944 \\ 0,944 \times 2 = & 1,888 \\ 0,888 \times 2 = & 1,776 \\ 0,776 \times 2 = & \downarrow 1,552 \text{ և այլն:} \end{array}$$

Քանի որ բազմապատկման գործընթացն ընդհատեցինք նախքան կոտորակային մասի զրո դաշնալը, ապա տրված թվի 2-ական գրությունը ստացվել է որոշակի ճշտությամբ: Այսպիսով՝ $0,342_{10} \approx 0,01010111_2$:

Ալգորիթմ 3: p-ական խառը (ամբողջ և կոտորակային մաս պարունակող) թիվը q-ական համակարգում ներկայացնելու համար անհրաժեշտ է հաջորդաբար իրականացնել հետևյալ գործողությունները՝

1. թվի ամբողջ մասը q-ական համակարգում ներկայացնել ըստ ալգորիթմ 1-ի,
2. թվի կոտորակային մասը q-ական համակարգում ներկայացնել ըստ ալգորիթմ 2-ի,
3. ալգորիթմ 2-ում կոտորակային մասի համար ստացված արտահայտության մեջ 0 ամբողջի փոխարեն տեղադրել թվի ամբողջ մասի համար ալգորիթմ 1-ով ստացվածը:

Օրինակ՝ տասական $39,75$ կոտորակային թիվը ներկայացնենք երկուական համակարգում:

Նախ՝ ստանանք տրված թվի ամբողջ մասի երկուական տեսքը.

Մնացորդը

$$\begin{array}{r}
 39 : 2 = 19 \\
 19 : 2 = 9 \\
 9 : 2 = 4 \\
 4 : 2 = 2 \\
 2 : 2 = 1 \\
 1 : 2 = 0
 \end{array}
 \quad \begin{array}{c}
 \uparrow \\
 1 \\
 1 \\
 1 \\
 0 \\
 0 \\
 1
 \end{array}$$

Այսպիսով՝ $39_{10} = 100111_2$:

Այժմ կոտորակային մասը ձևափոխենք երկուականի.

$$0,75 \times 2 = 1,50$$

$$0,50 \times 2 = 1,00$$

Այսպիսով՝ $0,75_{10} = 0,11_2$:

Այստեղ 0 ամբողջը փոխարինելով 39 թվի համար վերը ստացված երկուական համարժեքով՝ ի վերջո կստանանք. $39,75_{10} = 100111,11_2$:

Երկուսի աստիճան հանդիսացող համակարգերի միջև թվերի փոխակերպման պարզեցված ալգորիթմներ

Ալգորիթմ 4: **Թիվը 8-ական համակարգից 2-ականի փոխակերպելու** համար անհրաժեշտ է դրա յուրաքանչյուր բաղադրիչ թվանշան փոխարինել 2-ական համակարգի եռանիշ համարժեք թվով և արդյունքները միևնույն հաջորդականությամբ կցել միմյանց: Օրինակ՝

$$435,27_8 = 100\ 011\ 101\ ,\ 010\ 111 = 100011101,010111_2$$

4 3 5 2 7

Ալգորիթմ 5: **Թիվը 16-ական համակարգից 2-ականի փոխակերպելու** համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բաղադրիչ թվանշան փոխարինել 2-ական համակարգի դրան համարժեք քառանիշ թվով և արդյունքները միևնույն հաջորդականությամբ կցել միմյանց: Օրինակ՝

$$5A,3E_{16} = 0101\ 1010\ ,\ 0011\ 1110 = 1011010,00111110_2$$

5 A 3 E

Ալգորիթմ 6: **Թիվը 2-ական համակարգից 8-ականի փոխակերպելու** համար անհրաժեշտ է թվի ստորակետի ձախ մասից դեպի սկիզբ և ստորակետի աջ մասից դեպի թվի վերջը բաժանել 3-ական նիշերի, ընդ որում, եթե եզրային նիշերի քանակը համապատասխան եռյակը չի լրացնում՝ պակաս նիշերը լրացնել 0-ներով: Թվի 8-ական համարժեքը կստացվի, եթե այս ձևով ստացված եռյակներից յուրաքանչյուրն այնուհետև փոխարինվի համապատասխան 8-ական թվանշաններով: Օրինակ՝

$$11'010,110'101_2 = 011\ 010\ ,\ 110\ 101 = 32,65_8$$

3 2 6 5

Ալգորիթմ 7: **Թիվը 2-ական համակարգից 16-ականի փոխակերպելու** համար անհրաժեշտ է թվի ստորակետի ձախ մասից դեպի սկիզբ և ստորակետի աջ մասից դեպի թվի վերջը բաժանել 4-ական նիշերի, ընդ որում, եթե եզրային նիշերի քանակը համապատասխան քառյակը չի լրացնում՝ պակաս նիշերը լրացնել 0-ներով: Թվի 16-

ական համարժեքը կստացվի, եթե այս ձևով ստացված քառյակներից յուրաքանչյուրն այնուհետև փոխարինվի համապատասխան 16-ական թվանշաններով: Օրինակ՝

$$10^1 1101,1111^1 1011_2 = 0010 \underset{2}{1} 1101, \underset{D}{1} 1111 \underset{F}{1} 1011 = 2D,FB_{16}$$

8-ական համակարգից թիվը 16-ականի փոխակերպելու համար կարելի է նախ 8-ական թիվը ներկայացնել 2-ական համակարգում (ալգորիթմ 4), ապա անցում կատարել 16-ականի (ալգորիթմ 7): Օրինակ՝

$$46,75_8 = 100 \underset{4}{1} 110, \underset{6}{1} 111 \underset{2}{1} 101_2 = 10^1 0110,1111^1 01 = 0010 \underset{2}{0} 110, \underset{6}{1} 111 \underset{F}{1} 0100 = 26,F4_{16}$$

Թիվը 16-ական համակարգից 8-ականի փոխակերպելու համար կարելի է նախ 16-ական թիվը ներկայացնել 2-ական համակարգում (ալգորիթմ 5), ապա անցում կատարել 8-ականի (ալգորիթմ 6): Օրինակ՝

$$F,7B_{16} = 1111 \underset{F}{,} 0111 \underset{7}{,} 1011_2 = 1^1 111,011^1 110^1 11_2 = 001 \underset{1}{1} 111 \underset{7}{,} 011 \underset{3}{1} 110 \underset{6}{1} 110_2 = 17,366_8:$$

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍԱՆ

- ♦ **Թիվն այլ դիրքային համակարգի բերելու համար կարելի է օգտվել նաև համակարգչային հաշվիչից:**



1. **Հեղինակ երկուական թվերը ներկայացրեք գրասական համակարգում**
ա) 10101101, թ) 110001101, զ) 10110.11, դ) 1010.011:
2. **Հեղինակ գրասական թվերը ներկայացրեք երկուական համակարգում**
ա) 87.4, թ) 98.6, զ) 91.45, դ) 345.5:
3. **Հեղինակ գրասնկեցական թվերը ներկայացրեք երկուական համակարգում**
ա) AB.C, թ) 9B.BA, զ) 8F.FD, դ) 39E.A:
4. **Հեղինակ ուրական թվերը ներկայացրեք երկուական համակարգում**
ա) 67.5, թ) 56.62, զ) 6.745, դ) 547.4:
5. **Հեղինակ երկուական թվերը ներկայացրեք ուրական համակարգում**
ա) 11011.01111, թ) 1010110.01010,
զ) 110111010.011, դ) 1101.1010110101:
6. **Հեղինակ երկուական թվերը ներկայացրեք գրասնկեցական համակարգում**
ա) 1101010.1110110, թ) 1010111.101011,
զ) 101.101110111, դ) 1011101010.101:
7. **Հեղինակ ուրական թվերը ներկայացրեք գրասնկեցական համակարգում**
ա) 34.6, թ) 765.54, զ) 34.56, դ) 762.31:
8. **Հեղինակ գրասնկեցական թվերը ներկայացրեք ուրական համակարգում**
ա) 7B.C, թ) F.9B, զ) A8.FD, դ) C3E.A:

§ 3.3 ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՄՐԿՄԱՆ ԴԻՐՔԱՅՑԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Հաշվարկման դիրքային համակարգերում թվաբանական գործողությունները կատարվում են միևնույն կանոններով՝ դիրք առ դիրք: Դրա համար բավական է իմանալ միանիշ թվերի գումարման ու բազմապատկման աղյուսակներն ու գործողությունները սյուներով կատարելու կանոնները: Քանի որ երկուական համակարգում ընդամենը 2 թվանշան կա՝ 0 և 1, ապա պարզության համար թվաբանական գործողությունները դիտարկենք այս համակարգում:

Երկուական համակարգում միանիշ թվերի գումարման աղյուսակն ունի հետևյալ տեսքը՝

$$0 + 0 = 0, \quad 1 + 0 = 1, \quad 0 + 1 = 0, \quad 1 + 1 = 10:$$

Կարևոր է հաշվի առնել, որ երբ գումարման արդյունքում ստացվում է հաշվարկման համակարգի հիմքից մեծ կամ դրան հավասար թիվ, ապա տեղի է ունենում կրտսեր դիրքից միավորի տեղափոխում ավագ դիրք: Օրինակ՝ երկուական համակարգում երկու մեկերի գումարման արդյունքում ստացվում է 2, որը հավասար է համակարգի հիմքին և $2_{10} = 1 \cdot 2^1 + 0 \cdot 2^0 = 10_2$:

Երկուական համակարգում բազմանիշ թվեր գումարելիս պետք է առաջնորդվել գումարման վերը բերված աղյուսակից: Օրինակ՝

$$\begin{array}{r} 101_2 \\ + \quad 111_2 \\ \hline 1100_2 \end{array}$$

Արդյունքի ճշտությունը ստուգենք՝ տասական համակարգի փոխարկելով գումարելիներն ու ստացված գումարը.

$$101_2 = 1 \cdot 2^2 + 0 \cdot 2^1 + 1 \cdot 2^0 = 5_{10},$$

$$111 = 1 \cdot 2^2 + 1 \cdot 2^1 + 1 \cdot 2^0 = 7_{10},$$

$$1100_2 = 1 \cdot 2^3 + 1 \cdot 2^2 + 0 \cdot 2^1 + 0 \cdot 2^0 = 12_{10}:$$

$$\text{Իսկապես՝ } 5_{10} + 7_{10} = 12_{10}:$$

Երկուական համակարգում միանիշ թվերի **համամակարգ** աղյուսակն ունի հետևյալ տեսքը.

$$0 - 0 = 0, \quad 1 - 0 = 1, \quad 0 - 1 = \overline{(1)} \quad 1, \quad 1 - 1 = 0$$

Ինչպես տասական համակարգում, այստեղ ևս, երբ հանելին մեծ է նվազելիից, ավագ կարգից համակարգի հիմքին հավասար միավոր է փոխ առնվում: Աղյուսակում փոխ առնելը նշվել է 1 զծիկով՝ (1):

Երկուական համակարգում բազմանիշ թվեր հանելիս անհրաժեշտ է օգտվել վերը բերված հանման աղյուսակից՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ավագ դիրքից փոխ առնելու սկզբունքը: Օրինակ՝

$$\begin{array}{r} 110_2 \\ - \quad 11_2 \\ \hline 11_2 \end{array}$$

Երկուական համակարգում միանիշ թվերի **բազմապատկման** աղյուսակն ունի հետևյալ տեսքը.

$$0 \cdot 0 = 0, \quad 1 \cdot 0 = 0, \quad 0 \cdot 1 = 0, \quad 1 \cdot 1 = 1$$

Երկուական համակարգում բազմանիշ թվերի **բազմապատկումն** իրականացվում է ինչպես տասական համակարգում: Օրինակ՝

$$\begin{array}{r} 101_2 \\ \times 11_2 \\ \hline 101 \\ + 101 \\ \hline 1111_2 \end{array}$$

Երկուական համակարգում թվերի **բաժանումը** կատարվում է տասական համակարգում բաժանման համար կիրառվող գործընթացի նմանությամբ: Օրինակ.

$$\begin{array}{r} 1111_2 \\ - 11_2 \quad \left| \begin{array}{c} 11_2 \\ 101_2 \end{array} \right. \\ \hline 11 \\ - 11 \\ \hline 0 \end{array}$$

Ութական և տասնվեցական համակարգերում թվարանական գործողություններն իրականացվում են վերը բերված ալգորիթմների համաձայն: Իհարկե, պետք է հիշել, որ գումարման ժամանակ ավագ դիրք տեղափոխվող, ինչպես նաև հանման դեպքում ավագ դիրքից փոխ առնվող միավորի մեջությունը որոշվում է հաշվարկման համակարգի հիմքով: Օրինակ՝

$$\begin{array}{r} + 3C_{16} \\ A5_{16} \\ \hline E1_{16} \end{array} \qquad \begin{array}{r} - 65_8 \\ 37_8 \\ \hline 26_8 \end{array}$$

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍՆԱԼ

- ◆ **Հաշվարկման որեւէ համակարգում թվի և համակարգի հիմքի մեծության բազմապատկման արդյունքում թվի ամրող մասը կովորակայինից բաժանող սպորակելիքը գեղաշարժվում է մեկ դիրքով աջ:** Օրինակ՝

$$12.24_{10} \cdot 10 = 122.4_{10}, \qquad 1011.11_2 \cdot 2 = 10111.1_2,$$

$$564.473_8 \cdot 8 = 5644.73_8, \qquad A5.C.B3_{16} \cdot 16 = A5CB.3_{16}:$$

- ◆ **Հաշվարկման որեւէ համակարգում թվի և համակարգի հիմքի հարաբերության արդյունքում թվի ամրող մասը կովորակայինից բաժանող սպորակելիքը գեղաշարժվում է մեկ դիրքով ձախ:** Օրինակ՝

$$12.4_{10} : 10 = 1.24_{10}, \qquad 101.11_2 : 2 = 10.111_2,$$

$$56.4_8 : 8 = 5.64_8, \qquad AC.B43_{16} : 16 = A.CB43_{16}:$$




1. Գումարեք պրված երկու թվերը.
ա) $101_2 + 111_2$, բ) $1101_2 + 1011_2$, գ) $75_8 + 24_8$, դ) $D4_{16} + 5A_{16}$:
2. Հաշվեք պրված երկու թվերի տարրելությունը.
ա) $11111_2 + 10101_2$, բ) $1101_2 + 1011_2$, գ) $75_8 + 24_8$, դ) $D4_{16} + 5A_{16}$:
3. Հաշվեք պրված երկու թվերի արդադրյալը.
ա) $110_2 \cdot 101_2$, բ) $101_2 \cdot 101_2$:
4. Հաշվեք պրված երկու թվերի քանորդը.
ա) $1000001_2 \cdot 101_2$, բ) $1001_2 \cdot 11_2$:

§ 3.4 ԶԱՅՆԱՅԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ՏԵՍԱԲՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄԸ

Ցանկացած ինֆորմացիա մշակելու համար համակարգիչն այն կոդավորում է: Դուք արդեն ծանոթ եք թվային, տեքստային և գրաֆիկական ինֆորմացիայի համակարգչային կոդավորման սկզբունքներին: Այժմ ծանոքանանք ձայնախճանքագիրում ու տեսախճանքագիրում կոդավորմանը:

Չայնախճանքագիրի կոդավորումը

Չայնային ազդանշանը փոփոխական ամպլիտուդով ու փոփոխական հաճախությամբ անընդհատ ալիք է: Որքան մեծ է ազդանշանի ամպլիտուդը, այնքան այն բարձր է հնչում մարդու համար, և որքան մեծ է ազդանշանի հաճախությունը, այնքան բարձր է ձայնի տոնայնությունը: Չայնային ինֆորմացիան կարող է ներկայացված լինել 2 եղանակով՝ **սանառողային** և **դիսկրետ**: Ընդհանրապես անալոգային եղանակի դեպքում ֆիզիկական մեծությունն ընդունում է անսահման բազմությամբ արժեքներ (արժեքները փոփոխվում են անընդհատ), իսկ դիսկրետ եղանակի դեպքում այն ընդունում է վերջավոր քանակությամբ արժեքները (արժեքները փոփոխվում են բոհշքածև): Որպեսզի համակարգիչը կարողանա ձայնային անընդհատ ազդանշանը մշակել, այն անհրաժեշտ է ներկայացնել մերենայի համար ընկալելի երկուական կոդով: Ինչպես է դա իրականացվում: Նախ ձայնը միկրոֆոնի միջոցով ձևափոխվում է էլեկտրական հոսանքի տատանումների: Այնուհետև ժամանակային փոքր տիրույթների համար (գործնականում վայրկյանում մի քանի տասնյակ հազար անգամ) որոշակի ճշտությամբ որոշվում է տատանումների ամպլիտուդը, որը ներկայացվում է երկուական կոդով: Այսպիսով՝ ազդանշանի ամպլիտուդի անընդհատ կախվածությունը ժամանակից փոփոխինվում է համապատասխան դիսկրետ հաջորդականությամբ: Նկ. 3.1-ում անընդհատ ազդանշանը պատկերվել է սև գույնով (հարք գրաֆիկի տեսքով), իսկ դիսկրետ ազդանշանը՝ կարմիր



Նկ. 3.1. Չայնային երկուական կոդավորում

գույնով (աստիճանաձև գրաֆիկի տեսքով): Այսպիսով՝ ձայնային ինֆորմացիայի կողավորումը վեր է ածվում համապատասխան դիսկրետ հաջորդականության կողավորման:

Տեսահնֆորմացիայի կողավորումը

Քանի որ մարդու աչքը կատարյալ չէ (այն դանդաղ է արձագանքում արագ կատարվող գործողություններին), ապա կարելի է պատկերի շարժման պատրանք ստեղծել արագ փոփոխվող հաջորդական նկարների միջոցով, որոնք ներկայացնում են իրականացվող շարժման հերթական փուլերը: Այս սկզբունքի վրա է հիմնված տեսահնֆորմացիայի համակարգչային կողավորումը: Դուք արդեն գիտեք, թե ինչպես է կողավորվում գրաֆիկական ինֆորմացիան: Ինց այդ եղանակով կողավորելով շարժումը կազմող բաղադրիչ կառլերից յուրաքանչյուրը և դրանք անհրաժեշտ արագությամբ հերթափոխելով՝ էկրանին սահուն շարժման պատրանք է ստեղծվում:

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱԿԱԼ

- ◆ **Անընդհակ ազդանշանք երկուական կողով ներկայացնելու համար անալոգա-թվային չեափոխիչ սարք է կիրառվում:**
- ◆ **Կողավորված ազդանշանն անընդհակ ազդանշանի է չեափոխում թվա-անալոգային չեափոխիչը:**
- ◆ **Համարվում է, որ մարդը լսում է այն չայները, որոնք ունեն 20-ից մինչև 20 000 հերց հաճախուրյուն:**
- ◆ **Երաժշուրունք կարելի է կողավորել մաս նույաների օգնությամբ:**



1. **Ի՞նչ է չայնային ազդանշանը:**
2. **Ի՞նչ եղանակով կարող է ներկայացվել չայնահնֆորմացիան:**
3. **Ինչպես է կողավորվում չայնային ինֆորմացիան:**
4. **Ինչպես է կողավորվում գրեահնֆորմացիան:**

4.

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



§ 4.1 ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

Դուք ծանոթ եք համակարգչի հիմնական սարքերին: Վերիշենք դրանք և ծանոթանանք դրանց տեխնիկական տվյալներին:

Ինչպես զիտեք՝ **մոնիթորը (դիսպլեյ)** համակարգչի տվյալներ արտածելու համար նախատեսված հիմնական սարքն է: Դեռևս մի քանի տարի առաջ մոնիթորները մեծանասամբ էլեկտրոնադառագայրային խողովակով էին, ներկայումս հիմնականում կիրառում են հեղուկարյուրեղային (LCD) մոնիթորներ, որոնք առողջության համար առավել անվնաս են: **Էկրանի անկյունագիծն** ու **լուծաչափը** մոնիթորների հիմնական բնուրագիշ պարամետրերն են: Էկրանի անկյունագիծը հիմնականում լինում է 14, 15, 17, 19, 20, 21 կամ 24 դյույմերի (1 դյույմը $\approx 2,5$ սմ): Մոնիթորի լուծաչափը էկրանի միավոր մակերեսին հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով լուսավորվող կետերի (փիքսելների) քանակն է. որքան շատ են դրանք, այնքան որակյալ է էկրանին արտածվող պատկերը: 15 և 17 դյույմանոց մոնիթորները հիմնականում ունեն 1024x768, իսկ 19 և 20 դյույմանոցները՝ 1280x1024 փիքսելներ: Մոնիթորների էկրանին պատկեր ստանալու համար կիրառվում է մի քաղաքիչ սարք, որը **լուսապարունակությունը** է: Էկրանին տվյալ պահին արտածնան ենթակա պատկերը մեքենայական կողի տեսքով տեղակայվում է տեսաքարտի օպերատիկ հիշողությունում, որն անվանում են **լուսապարունակություն**: Այսպիսով՝ մոնիթորի էկրանին պատկերն արտածելու համար նախ տեսահիշողությունից ընթերցվում է մեքենայական կողով պահպանված համապատասխան ինֆորմացիան, տեսադաշտերի օգնությամբ վերածվում մոնիթորին ներկայացվելիք տեսքի, ապա պատկերվում էկրանին: Տեսահիշողության ծավալը տեսաքարտի հիմնական պարամետրն է: Ժամանակակից տեսաքարտերն ունեն մինչև 1 Գրայըր ծավալով տեսահիշողություն:

Անհատական համակարգիչների հիմնական սարքը՝ **պրոցեսոր** (կենտրոնական պրոցեսոր), նախատեսված է թվարանական ու տրամաբանական գործողություններ իրականացնելու և համակարգչի աշխատանքը համակարգելու համար: Համակարգչի արագագործությունը հիմնականում պայմանավորված է պրոցեսորի աշխատանքի արագագործությամբ: Պրոցեսորի արագագործության կարևոր պարամետրն աշխատանքային (տակտային) հաճախությունն է. որքան մեծ է այն, այնքան մեծ է արագագործությունը: Ներկայումս հիմնականում թողարկում են 2-ից մինչև 4 գիգահերց հաճախությամբ պրոցեսորներ: Առավել մեծ հաճախությամբ աշխատող պրոցեսորները թույլատրվածից ավելի են տաքանում, որն էլ դրանց շուտ փշանալու պատճառ է հանդիսանում: Այժմ համակարգչի արագագործությունը փորձում են մեծացնել այլ ճանապարհներով: Ներկայումս սկսել են, այսպես կոչված, երկմիջուկային *Core 2 Duo* պրոցեսորներ արտադրել, որոնք գուգահեռ աշխատող երկու պրոցեսոր են պա-

բունակում: 4 պրոցեսորներով առավել հզոր միկրոսխեմաներն անվանում են *Core 2 Quad*: Արագագործությունը մեծացնելու նպատակով 32 կարգանի պրոցեսորների փոխարեն այժմ 64 կարգանի պրոցեսորներ են արտադրվում: Այսպես, օրինակ, պրոցեսորների արտադրության առաջատար *Intel* կորպորացիան *Xeon*, 64 կարգանի *Pentium 4*, *Core 2 Duo* և *Quad* պրոցեսորներ է արտադրում, իսկ *Intel*-ի լուրջ մրցակից *AMD* ֆիրման արտադրում է *Athlon* և *Sempron* պրոցեսորները:

Ինչպես արդեն գիտեք, համակարգչի կարևորագույն խնդիրներից մեկն ինֆորմացիայի պահպանումն է: Այդ նպատակին ծառայող հիշող սարքերը լինում են երկու տիպի՝ **օպերատիվ (կարճաժամկետ)** և **արդարին (երկարաժամկետ պահպանային)** հիշող սարքեր:

Օպերատիվ հիշողությունը (RAM) կարճաժամկետ հիշող սարք է, որը նախատեսված է համակարգչի կողմից տվյալ պահին մշակվող ինֆորմացիայի ու դրա համար անհրաժեշտ տվյալների պահպանման նպատակով: Օպերատիվ հիշող սարքն արագագործ է և գործնականում աշխատում է նույն արագությամբ, ինչ պրոցեսորը, սակայն համակարգիչն անջատելիս օպերատիվ հիշողությունում եղած ինֆորմացիան ոչնչանում է:

Արդարին հիշող սարքերը նախատեսված են ինֆորմացիայի երկարաժամկետ պահպանման համար: Անհատական համակարգիչներում դրանք գլխավորապես լազերային (օպտիկական), ձկուն մագնիսական և կոշտ սկավառակներն են:

Կոշտ սկավառակները (վիճչեստեր) իրենց արագագործությամբ և ինֆորմացիայի պահպանման ծավալով գերազանցում են թե՛ ձկուն և թե՛ լազերային սկավառակներին, սակայն աշխատում են շատ ավելի դանդաղ, քան օպերատիվ հիշողությունը: Ընդ որում՝ կոշտ սկավառակների վրա կարելի է պահպանել մի քանի հարյուր անգամ ավելի ինֆորմացիա, քան լազերային սկավառակների վրա:

Ներկայում համակարգիչների վրա տեղադրում են ինչպես 256 Մբայթ, այնպես էլ 512 Մբայթ կամ 1 Գբայթ ծավալով օպերատիվ հիշող սարքեր և 40, 120, 300, 500 Գբայթ ծավալներով կոշտ սկավառակներ:

Պրոցեսորը, օպերատիվ հիշողությունն ու կոշտ սկավառակը տեղադրվում են համակարգային բլոկում գտնվող, այսպես կոչված, **մայուսակն պլատայի (Motherboard)** վրա:

Տպող սարքը նախատեսված է համակարգում մշակվող և պահպանվող տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան թրի վրա տպելու համար: Տպող սարքի աշխատանքի համար կարևոր բնութագրիչներ են արագագործությունը, անաղմուկ աշխատելը, արտածման որակը: Ըստ աշխատանքի բնույթի տարբերում են մատրիցային, շիթային և լազերային տպող սարքեր:

Մատրիցային տպող սարքն աշխատում է հատուկ ասեղներով հարվածելով ներկող ժապավենին: Այս սարքի տպելու որակն ու արագագործությունը ցածր են, աշխատանքն ուղեկցվում է աղմուկով: Նման տպող սարքերը ներկայումս քիչ են գործածում:

Շիթային տպող սարքերում տպագրումն իրականացվում է հատուկ թանաքի միջոցով, որը փոքրիկ շիթերով ցայտեցվում է թրին: Այս տպող սարքերը կարող են լինել սև-սպիտակ կամ գունավոր տպագրության: Աշխատում են անաղմուկ, տպագրության որակն ու արագագործությունը բարձր են. մեկ էջ տպելու համար ծախսվում է 15-ից մինչև 100 վրկ (գունավոր ոեժիմում՝ մինչև 7 րոպե):

Լազերային տպող սարքն աշխատում է լազերային ճառագայթով, անաղմուկ, իսկ տպագրման որակն էլ բարձր է: Այն նաև արագագործ է. ներկայիս լազերային տպող սարքերը կարող են րոպեում 15-25 էջ տպել:

Ինչպես արդեն գիտեք, համակարգիչներն իրար հետ ցանցով կցելու համար **ցանցային քարտ (NIC)** է անհրաժեշտ: Ցանցային քարտերը կարող են իրար միացվել մալուխով: Ներկայումս լայն կիրառություն են ստանում անլար ցանցային քարտերը: Մրանք տվյալները փոխանցում են **ռազիոնալով (Wi-Fi)**. շենքի տարածքում նման կապի գործողության շառավիղը 10-ից 20 մետր է, իսկ բաց տարածքում՝ մինչև 100 մետր: Ցանցային քարտերն օգտագործվում են նաև լոկալ ցանցով ինտերնետին միանալիս: Տարբերում են ինֆորմացիայի փոխանցման 10 Մբիթ կամ 100 Մբիթ արագագործությամբ ցանցային քարտեր:

Քանի որ համակարգչում ինֆորմացիան դիմում կարենա է, իսկ հեռախոսալարով կարենի է փոխանցել միայն անընդհատ անալոգային ազդանշաններ, ապա հեռախոսային ցանցով համակարգիչների միջև ինֆորմացիա փոխանակելու համար անհրաժեշտ է հատուկ սարք՝ **մոդեմ** կիրառել: Մոդեմը համակարգչից ստացված թվային ինֆորմացիան ձևափոխում է անընդհատ ազդանշանի, որը և փոխանցվում է հեռախոսալարով: Ընդունու համակարգչին կցված մոդեմը ստացված մուտքային անընդհատ ազդանշանն այժմ ձևափոխում է թվային իմպուլսների հաջորդականության և փոխանցում համակարգչին:

Մոդեմների արագագործությունը մեծ չէ. վայրկյանում մինչև 56 Կրիթ:

Լոկալ ցանցի կազմում առանձին համակարգիչներ միավորելու համար հաշվիչ սարքերի **համակենտրոնիչ (HUB)** են օգտագործում: Համակենտրոնիչը սարք է, որը մուտքում ստացված ազդանշանն ուժեղացնում է և առաքում իր ելքերին միացված սարքավորումներին: Ներկայումս համակենտրոնիչ սարքին փոխարինելու է եկել **ցանցային կոմուլյատոր (Switch)** կամ, այլ խոսքով, **փոխարկիչը**: Եթե համակենտրոնիչը տվյալների հոսքը փոխանցում է իրեն միացված մնացած սարքավորումներին, ապա կոմուտատորը տվյալները փոխանցում է միայն կոնկրետ հասցեատիրոջը. սա մեծացնում է ցանցի արտադրողականությունն ու անվտանգությունը: Ներկայումս տարածված են տաս, հարյուր և հազար Մբիթ/Վրկ արագագործությամբ կոմուտատորները, որոնք սովորաբար քույլատրում են 4, 5, 6, 8, 16, 24 կամ 48 սարքավորումներ կցել:



1. **Թվարկեք համակարգային բլոկի չեզ հայտնի բաղադրիչները:**
2. **Ի՞նչ հիմնական սարքերից է բաղկացած համակարգիչը:**
3. **Ի՞նչ է մոդեմը:**
4. **Ի՞նչ է համակենտրոնիչը:**
5. **Ի՞նչ է կոմուլյատորը:**

§ 4.2 ՕՊԵՐԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Համակարգի ծրագրային ապահովման հիմքը **օպերացիոն համակարգը** է: Օպերացիոն համակարգի մեջ համակարգչային ու ծառայողական այնպիսի ծրագրային միջոցների հավաքածուներ են միավորվում, որոնք ոչ միայն այլ ծրագրերի աշխատանքն են ապահովում, այլև համակարգի ու այն կիրառողի համագործակցությունը:

Օպերացիոն համակարգն իր հերթին հիմնված է **BIOS (Basic Input / Output System)** համակարգում առկա բազային ծրագրային ապահովման վրա:

BIOS-ը փորձավակալ ծրագրերի հավաքածու է, որն իրականացնում է հաշվիչ մերժնայի ներմուծման ու արդածման ամենալարական գործողությունները:

BIOS-ը «ներկառուցվում» է համակարգչի հաստատում հիշող սարքում՝ մայրական պլատան կազմավորելիս:

Որպեսզի համակարգիչն ընդհանրապես կարողանա աշխատել՝ դրա կոչտ սկավառակի վրա պետք է օպերացիոն համակարգ տեղակայված լինի: Համակարգիչը հոսանքին միացնելուց անմիջապես հետո այն սկավառակից ընթերցվում է, բերվում օպերատիվ հիշողություն և պահպում այնտեղ մինչև համակարգի աշխատանքի ավարտը: Այս գործընթացն անվանում են **օպերացիոն համակարգի բերնայինում**:

Օպերացիոն համակարգերը կարելի են դասակարգել ըստ համակարգչի ռեսուրսները դեկավարելու առանձնահատկությունների ու կիրառման ոլորտների:

- Ըստ **պրոցեսորի դեկավարման** օպերացիոն համակարգերը լինում են՝
- միախանդիր և բազմախանդիր,
 - միակիրառողական և բազմակիրառողական,
 - միապոցեսորային և բազմապոցեսորային,
 - լոկալ և ցանցային:

Միախանդիր, այսինքն՝ միաժամանակ միայն մեկ խնդիր իրագործող համակարգերը, ինչպիսին ներկայումս գործածությունից դուրս մնված *MS-DOS*-ն է, ներառում են ֆայլային համակարգի դեկավարման, կիրառողի հետ երկխոսության և արտաքին սարքերը սպասարկելու միջոցներ: **Բազմախանդիր** օպերացիոն համակարգերը, ինչպիսիք են ներկայումս լայնորեն կիրառվող *OS/2*, *UNIX* և *WINDOWS* օպերացիոն համակարգերը, ներառելով միախանդիր օպերացիոն համակարգերին բնորոշ միջոցներ՝ դեկավարում են նաև մի քանի խնդիրների կողմից միաժամանակ օգտագործվող համակարգչային ռեսուրսների՝ պրոցեսորի, օպերատիվ հիշողության, ֆայլերի և արտաքին սարքերի բաժանման գործընթացը:

Բազմախանդիր օպերացիոն համակարգերն իրենց հերթին, ըստ կիրառման ոլորտների, լինում են՝

- փարեթային մշակման համակարգեր (*OC EC*),
- ժամանակի բաժանմամբ աշխատող համակարգեր (*UNIX*, *LINUX*, *WINDOWS*),

- իրական ժամանակով աշխատող համակարգեր (RT II):

Փարերային մշակման համակարգերը նպատակառությամբ են այնպիսի գործընթացներին, որոնք շտափ արդյունքներ չեն պահանջում: Նման համակարգերի որակը պայմանավորված է միավոր ժամանակամիջոցում միաժամանակ մշակվող խնդիրների քանակությամբ:

Ժամանակի բաժանմամբ աշխատող համակարգերը համակարգչի վրա միաժամանակ իրագործվող յուրաքանչյուր խնդիրն որոշակի կարճ ժամանակ են տրամադրում այնպես, որ յուրաքանչյուր խնդիրի համար պրոցեսորը հավասարապես է օգտագործվում: Եթե արված նման ժամանակահատվածը բավական փոքր է, այնպիսի պատրանք է ստեղծվում, թե խնդիրները միաժամանակ են իրագործվում:

Իրական ժամանակում աշխատող համակարգերն առավելապես կիրառվում են տեխնոլոգիական գործընթացների և տեխնիկական օբյեկտների ղեկավարման նպատակով, օրինակ՝ թռչող օբյեկտների, ավտոմատացված դազգահների ղեկավարման համար:

Ըստ համակարգիչը միաժամանակ կիրառողների քանակի՝ տարրերում են **միակիրառողական** (MS DOS) և **բազմակիրառողական** (UNIX, LINUX, WINDOWS 95, WINDOWS XP) **օպերացիոն համակարգեր**:

Բազմակիրառողական համակարգերում յուրաքանչյուր օգտվող կարող է իր աշխատանքային անկախ միջավայրը ստեղծել: Ընդ որում՝ ամեն օգտվողի համար անհատական տվյալների պաշտպանության հոսանքի համակարգ է ստեղծվում:

Օպերացիոն համակարգի ամենակարևոր հատկանիշներից է այն միջոցների առկայությունը, որոնք ուղղված են տվյալների **բազմասպոռցեսորային մշակման**: Նման միջոցներ կան OS/2, WINDOWS NT օպերացիոն համակարգերում:

Լոկալ օպերացիոն համակարգերը կիրառվում են ինքնուրույն (ավտոնոմ) աշխատող անհատական համակարգիչների և օգտվողի կարգավիճակով համակարգչային ցանցերում կիրառվող անհատական համակարգիչների վրա:

Ցանցային օպերացիոն համակարգերը նախատեսված են այնպիսի անհատական համակարգիչների ղեկավարման համար, որոնք ցանցին են միացված համատեղ օգտագործման նպատակով:

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍՍԱՆ

- ♦ **Օպերացիոն համակարգերը իիմնականում բաղկացած են լինում հեղևայալ բաղադրիչներից՝ մուլտի-ելքի բազային համակարգ (BIOS), օպերացիոն համակարգի բեռնավորիչ, օպերացիոն համակարգի միջուկ, արտաքին սարքերի դրայվերներ, հրամանային պրոցեսոր և արտաքին ֆայլային համակարգ:**
- ♦ **Սարքերի դրայվերները արտաքին սարքերի աշխատանքը ղեկավարող ծրագրեր են:**



1. **Ի՞նչ է BIOS-ը:**
2. **Ըստ պրոցեսորի ղեկավարման եղանակի բանի՝ դիսպիլ օպերացիոն համակարգեր գիտեք:**
3. **Բազմախնդիր օպերացիոն համակարգերը քանի չեն:**
4. **Թվարկեք ժամանակի բաժանմամբ աշխատող ծեզ հայտնի օպերացիոն համակարգերը:**

§ 4.3 ՀԱՄԱԿԱՐԳՎՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԵՂԱԿԱՑՈՒՄ


Ծրագրային փաքեթը, բացի պարտադիր բաղադրիչ ֆայլերից, պարունակում է նաև մեկ այլ՝ **պեղակայման (ինստալյացիայի)** հատուկ ծրագիր, որն ապահովում է համակարգում փաքեթի ներդրման գործընթացը: Քանի որ յուրաքանչյուր ծրագրային փաքեթի համար տեղակայման գործընթացը տարրեր եղանակներով է կարգավորվում, ապա յուրաքանչյուր ծրագրային փաքեթ (ներառյալ ցանկացած օպերացիոն համակարգի փաքեթ) ունի տեղակայման իր ծրագիր՝ այսպես կոչված, տեղակայիչը, որն ավտոմատ կարգավորում է տեղակայման աշխատանքների մեջ մասը: Որոշ ծրագրային փաքեթներ այնպես են կազմակերպված, որ դրանց տեղակայման գործընթացը հանգում է բաղադրիչ ֆայլերի պարզ պատճենմանը:

Դիտարկենք ***Microsoft Office 2003*** ծրագրային փաքեթի տեղակայման գործընթացը:

Սկավառակամդիչում համապատասխան ծրագրային փաքեթի տեղակայման (ինստալյացիայի) սկավառակը տեղադրելուց հետո *Office* փաքեթի բողարկիչն ավտոմատ սկսում է աշխատել: Եթե որևէ պատճառով դա տեղի չի ունենում, ապա անհրաժեշտ է.

- ընտրել *My Computer* տարրերանշանը,
- ընտրել լազերային սկավառակը,
- *Microsoft Office 2003* տարրերանշանի վրա մկնիկի ձախ սեղմակի կրկնակի սեղմում կատարել և ընտրել *Setup.exe* ֆայլը:

Աշխատանքը սկսելուց որոշ ժամանակ անց կհայտնվի նկ. 4.1-ում բերված պատուհանը, որն առաջարկում է ներմուծել փաքեթային արտադրանքի **լիցենզիոն քանակի** (*Product Key*), որը սովորաբար գրված է լինում լիցենզիոն սկավառակի տուփի հետնամասում: Քանային ներմուծելու գործընթացում սխալ բույլ տալու դեպքում համակարգը բանալին կրկին ներմուծելու հնարավորություն կտա:



Նկ. 4.1. *Product Key* բանալին ներմուծելու պայմուհան


Քանային ճիշտ ներմուծելուց հետո *Next* կոճակը սեղմելու դեպքում էլքրանին կհայտնվի նկ. 4.2-ում պատկերված պատուհանը, որի *User name* դաշտում պետք է տալ օգտագործողի (գրանցողի) անունը, *Initials* դաշտում՝ նրա ինիցիալները, իսկ *Organization* դաշտում՝ կազմակերպության անվանումը:

Տեղակայման գործընթացի հետագա շարունակման համար նորից պետք է ընտրել *Next*-ը: Այժմ կրերվի փաքեթի օգտագործման **լիցենզիոն համաձայնության պահպան**:

պուհան (նկ. 4.3), որի բովանդակությանը ծանոքանալուց հետո անհրաժեշտ է *I accept the terms in the License Agreement դաշտում նշում կատարել և սեղմել Next կոճակը:*



Նկ. 4.2. Օգտվողի տվյալները ներմուծելու պահուհան



Նկ. 4.3. Լիցենզիոն համաձայնության պահուհան

Հաջորդ փուլում բացված պատուհանում (նկ. 4.4) առաջարկվում է ընտրել փաթեթը տեղակայելու հետևյալ ձևերից որևէ մեկը.

- *Complete Install* (լրիվ տեղակայում) – Տեղակայել *Office* փաթեթն ամբողջությամբ;
- *Minimal Install* (նվազագույն տեղակայում) – Այս ձևությունը նշանակում է եղանակային տեղակայում, երբ կոչտ սկավառակն ազատ տեղ քիչ ունի:
- *Typical Install* (սովորական տեղակայում) – Այս դեպքում ավտոմատ ընտրվում են հաճախ կիրառվող բաղադրիչները՝ օգտվողին հետազայում այլ բաղադրիչ ավելացնելու կամ պակասեցնելու հնարավորություն ընձեռելով:
- *Custom Install* (ընտրովի տեղակայում) – Այս ձևությունը է տեղակայման ընթացքում փաթեթի դրոշակի բաղադրիչներ ընտրել:

Տեղակայման *Custom Install* ժեղ նախընտրելի է, եթե տեղակայողը գիտի, թե հետազայում փաթեթի ո՞ր բաղադրիչներն են անհրաժեշտ լինելու: *Custom Install* ձևությունը նշանակում է նկ. 4.5-ում պատկերված պատուհանը:



Նկ. 4.4. Տեղակայման ձևի ընդունության պարունական



Նկ. 4.5. Փառերի բաղադրիչներն ընդունության պարունական


Այստեղ անհրաժեշտ բաղադրիչներն ընտրելուց հետո *Next* կոճակով կրացվի նկ. 4.6-ում պատկերված պատուհանը:

Այս պատուհանը հնարավորություն է տալիս ընտրված յուրաքանչյուր բաղադրիչի տեղակայման համար տալ առաջարկվող հետևյալ տարրերակներից որևէ մեկը.

- Run from My Computer* – տեղակայել տվյալ բաղադրիչի հավելյալ ծրագրերի ստանդարտ հավաքածուն,
- Run all from My Computer* – տեղակայել տվյալ բաղադրիչի հավելվածն ամրող ջուրյամբ,
- Installed on First Use* – հավելվածը չի տեղակայվում՝ պայմանով, որ դրան դիմելու դեպքում հնարավորություն կընձեռվի տեղակայել լիցենզիոն սկավառակից,
- Not Available* – հավելվածը չի տեղակայվում, իսկ հետագայում անհրաժեշտության դեպքում պետք է կրկին բողարկել *Ms Office* տեղակայիչը:

Նկարագրված քայլերից հետո տեղակայման գործընթացը սկսելու համար պետք է սեղմել *Install* կոճակը: Տեղակայման գործընթացը եզրափակում է *ավարտի պա-*

պուհանը (նկ. 4.7): Եթե պատուհանի *Check the Web for updates and additional downloads* դաշտը նշվի, ապա ինտերնետում փաթեթի նոր տարրերակ հայտնվելու դեպքում փաթեթն ավտոմատ կրարմացվի: *Delete installation files*-ն ընտրելու դեպքում փաթեթը տեղակայող ֆայլերը կջնջվեն: Սա կարելի է ընտրել այն դեպքում, եթե օգտվողը համոզված է, որ հետագայում փաթեթը նորից տեղակայելու անհրաժեշտություն չի ծագի:



Նկ. 4.6. *Տեղակայման ձևի ընդունելու պարուհան*



Նկ. 4.7. *Տեղակայման ավարտի պարուհան*

Տեղակայված ծրագրային փաթեթը հեռացնելու համար անհրաժեշտ է.

- ընտրել *Start* գլխավոր մենյուի *Settings* ենթամենյուի *Control Panel* հրամանը,
- բացված պատուհանում ընտրել *Add or Remove Programs* հրամանը,
- բերված ցուցակից ընտրել հեռացման ենթակա փաթեթն ու սեղմել *Remove* կոճակը,
- հեռացման հրահանգը հաստատել *Yes* կոճակով:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍԵԱԼ

- ◆ *Ms Office 2003-ի InfoPath բաղադրիչ ծրագիրը նախադիսված է տվյալների նկատմաման արդյունավելու ջեներ պենզելու, իսկ Publisher-ը՝ հրապարակական աշխատանքների համար:*



- 1. Ի՞նչ է գեղակայումը:**
- 2. Ms Office փաքերի գեղակայման ի՞նչ չեն գիտեք:**
- 3. Ո՞ր ղեպում է նախադիսված գեղակայման Custom Install չելք:**
- 4. Ms Office փաքերի գեղակայման գործընթացում բաղադրիչ գեղակայելու ի՞նչ դարձերակներ գիտեք:**
- 5. Ի՞նչ իմաստ ունի գեղակայման ավարտի պատուհանում քերված առաջարկ-ներից յուրաքանչյուրը:**

§ 4.4 ԱՇԽԱՏԱՆՔ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԵՏ

Համակարգչային տվյալները պահպանելու և փոխանցելու գործընթացում կարևորագույն խնդիր է այդ տվյալների ծավալի փոքրացումը, այլ խոսքով՝ ֆայլի (թղթապանակի) **արխիվացումը**:

Եթեմն ֆայլերն ինֆորմացիայի կրկնվող հատվածներ են պարունակում. այդպիսի ֆայլերը խտացնելիս նման հատվածների նույնարար պահպանումը նպատակահարմար չէ: **Արխիվացում** կոչվող ծրագրերը գտնում են այդպիսի հատվածները և ֆայլն արխիվացնելիս դրանք փոխարինում մեկ այլ՝ հակիրճ ինֆորմացիայով այնպիս, որ հետագայում հնարավոր լինի վերականգնել ֆայլի նախնական տեսքը: Օրինակ, եթե ֆայլը պարունակում է իրար հաջորդող 18 հատ կետ, ապա արխիվատորը, տեքստի այդ հատվածը փոխարինելով 18 թվով ու կետ (.) պայմանանշանով, իիշողությունում նույն ինֆորմացիան պահպանելու համար նախկինում անհրաժեշտ 18 բայրի փոխարեն ընդամենը 2 բայր կգրադեցնի. այսպիսով՝ այս եղանակով սեղմելիս ինֆորմացիայի ծավալը 9 անգամ կփոքրանա:

Տեքստային, գրաֆիկական, ձայնային և տեսախճանքային յուրաքանչյուրի համար արխիվացման տարբեր եղանակներ են կիրառվում: Այդ պատճառով տարբեր տիպի ֆայլերն ինֆորմացիան խտացնելու տարբեր աստիճաններ կարող են ունենալ: Նկար չպարունակող տեքստային ֆայլերը միջին հաշվով կարող են խտացվել 3-ից 5 անգամ, սե-սպիտակ նկարներով .BMP ֆայլերը՝ 2-ից 4, որոշ դեպքերում՝ նույնիսկ 10 անգամ:

Ֆայլն արխիվացնելիս տվյալների բովանդակությունը կարող է փոփոխություն կրել, որի արդյունքում հնարավոր է անդարձ կերպով որոշակի ինֆորմացիա կորցնել: Այդ իմաստով պետք է զգուշանալ *JPG* ձևաչափով գրաֆիկական տվյալներ, *MPG* ձևաչափով տեսատվյալներ և *MP3* ձևաչափով ձայնային ինֆորմացիա արխիվացնելիս:

Գործնականում առավել տարածված են *ARJ*, *RAR*, *ZIP* (*DOS* տարրերակ), *WinZIP*, *WinRAR*, *WinARJ* (*WINDOWS* տարրերակ) ծրագիր-արխիվատորները: *RAR* արխիվատորի առավելությունն առավել նկատելի է .*EXE* և .*OBJ* ընդլայնումով ֆայլերի արխիվացման դեպքում: Չնայած *RAR* արխիվատորներն ունեն իրականացվող գործառույթների առավել մեծ ցանկ, սակայն դրանք տեխնիկական բնութագրերով զիջում են *ZIP* արխիվատորին: *ZIP*-ի հիմնական առավելությունն աշխատելու արագագործությունն է ու արխիվներում տվյալների պահպանման հուսալիությունը: Նշենք նաև, որ *ZIP* և *ARJ* արխիվատորներն ունեն ինֆորմացիան խտացնելու միևնույն աստիճանը:


WINDOWS-ում արխիվատորների հետ աշխատելու համար պետք է համակարգչում համապատասխան արխիվատոր-ծրագիր ունենալ:

Ուստինասիրենք *WinRAR* արխիվատորի աշխատանքը: Այն թույլ է տալիս արխիվի հետ բազմազան գործողություններ կատարել՝ արխիվում ֆայլ որոնել, դիտել, հեռացնել, բազմահատոր արխիվներ ստեղծել և այլն:

Արխիվ սրելղծելու համար անհրաժեշտ է.


- թողարկել *WinRAR* ծրագիրը,
- *WinRAR* արխիվատորի գլխավոր պատուհանում (նկ. 4.8) ընտրել այն ֆայլերը (թղթապանակները), որոնք պետք է արխիվացվեն,
- սեղմել *Add* կոճակը,
- բացված երկխոսային պատուհան (նկ. 4.9) ներմուծել ստեղծվող արխիվի անվանումը կամ բավարարվել համակարգչի կողմից առաջարկվող անվանումով,
- *Archive format* դաշտում ընտրել արխիվի *RAR* կամ *ZIP* ձևաչափն ու անհրաժեշտության դեպքում *Archiving options*, *Compression method* և *Split to volumes, bytes* դաշտերում նաև այլ պարամետրեր տալ,
- սեղմել *OK* կոճակը:

Այս գործողությունների արդյունքում արխիվը կստեղծվի ընթացիկ թղթապանակում, իսկ այլ սկավառակի ու թղթապանակի մեջ արխիվը պահպանելու համար կարելի է օգտվել *Browse* կոճակից:



Նկ. 4.8. WinRAR արխիվատորի գլխավոր պարունակ


Հաճախ անհրաժեշտություն է առաջանում այնպիսի արխիվներ ստեղծել, որոնք հնարավոր կլինի բացել (ապարխիվացնել) նույնիսկ համապատասխան ծրագիր-արխիվատոր չինելու դեպքում: Այդպիսի արխիվ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է *Archiving options риժնի Create SFX archive* դաշտում (նկ. 4.9) համապատասխան նշում կատարել:



Նկ. 4.9. Արխիվի պարամետրերը սահմանելու երկխոսային պարունակ

Ֆայլը (թղթապանակը) պարխիվացնելու համար անհրաժեշտ է.

- թողարկել *WinRAR* ծրագիրը,
- *WinRAR* արխիվատորի զիսավոր պատուհանում (նկ. 4.8) ընտրել այն ֆայլերը (թղթապանակները), որոնք անհրաժեշտ է ապարխիվացնել,
- սեղմել *Extract To* կոճակը,
- բացված պատուհանում (նկ. 4.10) ընտրել ապարխիվացվող ֆայլի (թղթապանակի) հետագա պահպանման ուղին ու պարամետրերը,
- սեղմել *OK* կոճակը:



Նկ. 4.10. Ապարխիվացման պարամետրերը սահմանելու երկխոսային պարունակ

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՍԱՆԱԼ

- ◆ **Ֆայլի (բղրապանակի) արխիվացման կամ ապարհիվացման նպատակով կարելի է օգտվել այդ ֆայլի (բղրապանակի) անվան փիրույքում մեջիկի աջ սեղմակով բացված ենթագիրսպային մեջուից:** Արխիվացման կամ ապարհիվացման նպատակով մի քանի ֆայլ կամ բղրապանակ կարելի է ընդունել օգտագործելով ***Ctrl*** սրեղմար:
- ◆ **Արխիվացման նպատակով ֆայլերի կամ բղրապանակների ընդույքունը կարելի է կատարել նաև արխիվագորի գլխավոր պատուհանի մեջուի վողի *File* ենթամեջուի հրամաններով:**



1. **Ի՞նչ է արխիվագորը:**
2. **Ի՞նչ արխիվագորներ գիտեք:**
3. **RAR և ZIP արխիվագորների ի՞նչ հավելույթուններ գիտեք:**



Հարորակոր աշխատանք 4.1 *Աշխատանք արխիվների հետ*

Քայլ առ քայլ կագարեք հետեւյալ զործողությունները.

1. **Խողարկեք WinRAR ծրագիրը:**
2. **Ուսուցի բոլոր գլխավոր արխիվագորի գլխավոր պատուհանում արխիվացման ենթակա որևէ ֆայլ ընդունեք:**
3. **Մկնիկի աջ սեղմակով բացեք ընդունեք բացված ֆայլի ենթագիրսպային մեջուն և ընդունեք Properties հրամանը:**
4. **General ներդիր պատուհանում ճշգրիք ֆայլի ծավալը:**
5. **Մեղմեք Add կոճակը:**
6. **Բացված երկխոսային պատուհանի Archive name դաշտում արխիվի համար ներմուծեք AAAA անվանումը:**
7. **Archive format դաշտում ընդունեք արխիվացման RAR ձևաչափն ու OK կոճակով ընդունեք ֆայլի համար ստեղծեք դրա AAAA արխիվացված գարքերակը:**
8. **AAAA ֆայլի համար կրկնեք 3-րդ և 4-րդ կետերի գործողությունները:**
9. **Համեմատեք ֆայլի ծավալներն արխիվացումից առաջ և հետո:**
10. **Այժմ կրկնեք բողարկեք WinRAR ծրագիրն ու արխիվագորի գլխավոր պատուհանում ընդունեք AAAA արխիվային ֆայլը:**
11. **Մեղմեք Extract To կոճակը, բացված պատուհանում ապարհիվացվող ֆայլի պահպանան համար մեկ այլ բղրապանակ ընդունեք ու սեղմեք OK կոճակը: Համեմատեք նախնական և ապարհիվացված ֆայլերի ծավալները:**
12. **Կրկնեք 2-րդ գործողությունները՝ այս անգամ սրեղմակով ZIP ձևաչափի արխիվային ֆայլ:**
13. **Համեմատեք RAR և ZIP ձևաչափերով սրեղմակած արխիվային ֆայլերի ծավալները:**
14. **Զնջեք սրեղմակած ֆայլերը:**

5.

ՏԵՔՍԱՅԻՆ ԽՄԲԱԳՐԻՉՆԵՐ



§ 5.1 MICROSOFT WORD ՏԵՔՍԱՅԻՆ ԽՄԲԱԳՐԻՉ


Նախորդ դասարաններում համապատասխան դասընթացի ուսումնասիրման արդյունքում դուք *MS Word* տեքստային խմբագրիչի միջավայրում աշխատելու որոշակի հմտություն ունեք: Այնուամենայնիվ, տեղին ենք համարում ձեզ արդեն հայտնի նյութից որոշ համառոտ մեջբերումներ անել:

Microsoft Word տեքստային խմբագրիչի միջավայրում էջի պարամետրերը սահմանելու համար անհրաժեշտ են:


- ընտրել մենյուի տողի *File* ենթամենյուի *Page Setup* հրամանն ու բացել էջի լուսանցքների սահմանման նպատակով նախատեսված *Margins* ներդիր պատուհանը (նկ. 5.1),
- սահմանել էջի լուսանցքների չափերը՝ ձախից (*Left*), աջից (*Right*), վերևից (*Top*) և ներքևից (*Bottom*),
- *Gutter* (կազմ) դաշտում տալ փաստաթուղթ կազմելու համար անհրաժեշտ լրացուցիչ տիրույթի չափը, որը *Gutter Position* (Կազմի դիրք) դաշտում նշվածի համաձայն՝ ավելացվում է *Left*-ում կամ *Top*-ում եղած մեծությանը,
- ընտրել էջում ինֆորմացիա արտածելու տեսքը (*Orientation*)՝ երկայնակի (*Portrait*) կամ լայնակի (*Landscape*),
- տպագրության նպատակով թերթի ոչ միայն դիմային, այլև հակառակ կողմն օգտագործելու համար *Multiple pages* դաշտում ընտրել *Mirror Margins* տարրերակը,
- անհրաժեշտության դեպքում *Apply to* դաշտում հետևյալ եղանակներից որևէ մեկի ընտրությամբ տալ փաստաթուղթի այն տիրույթը, որի համար սահմանվել է տվյալ ձևաչափը:
 - *This section* – ընթացիկ տիրույթը,
 - *Selected sections* – ընտրված տիրույթները,
 - *Whole Document* – ամբողջ փաստաթուղթը,
 - *This point forward* – մինչև նշված մասը:

Թղթի չափը սահմանելու համար պետք է՝

- ընտրել մենյուի տողի *File* ենթամենյուի *Page Setup* հրամանն ու բացել թղթի չափն ընտրելու համար նախատեսված *Paper* ներդիր պատուհանը (նկ. 5.2),
- *Paper size* դաշտում ընտրել թղթի չափը (ընտրություն չանելու դեպքում ավտոմատ կընտրվի *A4* չափը՝ 21x29,7 սմ):



Նկ. 5.1. Էջի պարամետրերը սահմանելու պարուհան



Նկ. 5.2. Թղթի չափն ընդունելու պարուհան

Պարբերության չիաչափի պարամետրերը կարելի է սահմանել մենյուի տողի Format ნերամենյուի Paragraph պատուհանի Indents and Spacing ներդիք պատուհանում (նկ. 5.3):

Պարբերության գերազանցության դաշտը համար անհրաժեշտ է բացել Alignment դաշտն ու բացված ցուցակում ընտրել հավասարեցման հետևյալ ձևերից որևէ մեկը՝ ըստ ձախ եզրի (Left), ըստ կենտրոնի (Centered), ըստ աջ եզրի (Right), հավասարաչափ հավասարեցում ըստ աջ և ձախ եզրերի (Justified):

Պարբերության չափը և աջ սահմանելուրը կարելի է տալ համապատասխանաբար Left և Right դաշտերում:


Պարբերության առաջին դրույթի սկիզբը սահմանելուրը նպատակով անհրաժեշտ է բացել Special դաշտն ու բացված ցուցակից նախ ընտրել First Line տարրերակը, ապա By դաշտ ներմուծել առաջին տողի սկիզբը որոշող թիվը:

Պարբերության ահյուրդող և հաջորդող լրացնուիչ միջակայքերը սահմանելուրը համար անհրաժեշտ է Before դաշտ ներմուծել պարբերությանը նախորդող, իսկ After դաշտ՝ դրան հաջորդող հեռավորությունների չափերը:

Պարբերության գերազանցության հեռավորությունը սահմանելու համար պետք է Line Spacing դաշտի միջոցով բացված ցուցակում ընտրել միջտողային հնարավոր հեռավորություններից որևէ մեկը՝ Single (մեկ), 1.5 Lines (մեկուկես) կամ Double Space (կրկնակի): Պարբերության տեքստի միջտողային հեռավորությունը կարելի է սահմանել նաև $=$ (Single Space), $=$ (1.5 Space), $=$ (Double Space) գործիքների միջոցով:

Տեքստային խմբագրիչներն ու հրատարակչական համակարգերն օգտագործում են ֆայլերի պահպանման հատուկ մշակված ձևաչափեր, որոնք որոշում են ինչպես դրանցում պահպանվող տվյալների տիպերը, այնպես էլ այլ ծրագրային միջոցների կողմից տվյալ ֆայլերի մշակման հնարավորություններն ու եղանակները: Հրատա-

բակչական համակարգերից հիմնականում օգտվում են հրատարակչները՝ պոլիգրաֆիական գործնաբացի պահանջներին բավարարող գրքերի, ամսագրերի և թերթերի նախանձուշները պատրաստելիս: Նման համակարգերից են *Quark Xpress*, *PageMaker*, *InDesign*, *FrameMaker* և *Corel Ventura* ծրագրերը:



Նկ. 5.3. Indents and Spacing ներդիր պայունակ

Word-ի յուրաքանչյուր նոր տարբերակ հնարավորություն է տալիս վերարտադրել *Word*-ի նաև նախորդ տարբերակների ձևաչափերով պահպանված ֆայլերը: Եթե ֆայլն անհրաժեշտ է պահպանել այնպես, որ այն վերարտադրելու հնարավորություն ունենան ինչպես *Word*-ի ավելի հիմ տարբերակների խմբագրիչները, այնպես էլ որոշ այլ ծրագրային հավելվածներ, այն պահպանելիս *Save As* պատուհանի *Save as type* դաշտում պետք է ընտրել անհրաժեշտ ձևաչափը:

Word-ը համապատասխան փոխարկիչի առկայության դեպքում հնարավորություն ունի աշխատել նաև այլ, օրինակ՝ *RTF*, *HTML* ձևաչափի ֆայլերի հետ: Նման դեպքերում ֆայլը բացելիս անհրաժեշտ է *Open* պատուհանի *File as type* դաշտում ընտրել համապատասխան ձևաչափը:



1. **Էջի ձևաչափի ի՞նչ պարամետրեր գիրքը:**
2. **Թվարկեք պարբերության ձևաչափի ձեզ հայդրնի պարամետրերը:**
3. **Բերեք գրեսպի որևէ օրինակ, որպես նպարակահարմար կլիման գրեսպի որևէ գիրքի հավասարեցում իրականացնել:**
4. **Ինչպես ու են սահմանվում պարբերության աջ և ձախ սահմանները:**
5. **Ինչպես ու են սահմանվում պարբերությանը նախորդող և հաջորդող հեռակորույնությունները:**


§ 5.2 ԷԶԵՐԻ ՀԱՍՏԱԲԿԱԼՄԱՆ ՀԱՍՎԱՐԳԱ: ԽՈՐՎԳԻՔ: ԾԱՆՈԹՎԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ծավալուն փաստաբղեք ստեղծելիս հարմար է էջերը համարակալել: Տեքստային խմբագրիչներում այդ նպատակով էջերի ավտոմատ համարակալման համակարգ կա: Ծանրանանք Microsoft Word տեքստային խմբագրիչի էջերի համարակալման համակարգին:


Փաստաբղութ էջերը համարակալելու համար անհրաժեշտ է.

- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Page Numbers* (էջերի համարներ) հրամանը,
- բացված պատուհանի (նկ. 5.4) *Position* (Դիրք) դաշտի ցուցակից ընտրել համարի դիրքը՝
 - *Top of Page* – էջի վերին մասում,
 - *Bottom of Page* – էջի ստորին մասում,
- պատուհանի *Alignment* (Հավասարեցում) դաշտի ցուցակից ընտրել համարի տեղադրման դիրքը՝
- համարակալման գործընթացը փաստաբղի առաջին էջից սկսելու համար էջերի համարակալման պատուհանում նշել *Show number on first page* դաշտը,
- համարի ձևաչափն ընտրելու համար նախ պետք է էջերի համարակալման պատուհանում (նկ. 5.4) ընտրել *Format* կոճակը, ապա բացված *Page Number Format* պատուհանի (նկ. 5.5) *Number format* դաշտում ընտրել համարի հնարավոր տարրերակներից անհրաժեշտը,
- *Start at* դաշտում (նկ. 5.5) նշել համարակալման մեջնարկային էջի համարը,
- կատարված ընտրությունները հաստատել *OK* կոճակով:

Եթեմն փաստաբղի էջերը **Խորագույք** են ունենում. սրանք հասուլ բովանդակությամբ տեքստային միավորներ են, որոնք կարող են իրենց մեջ ներառել էջի հերթական համարը, բաժնի անվանումը, ընթացիկ ամսաթիվը, ժամանակը, տվյալներ փաստաբղի հեղինակի վերաբերյալ, պատկերներ և այլն: Խորագրերը կարող են զետեղվել էջի ինչպես ստորին, այնպես էլ վերին մասերում:



Նկ. 5.4. Էջերի համարակալման
պատուհան



Նկ. 5.5. Էջի համարի ձևաչափն
ընտրելու պատուհան

Խորագիր պեղադրելու համար անհրաժեշտ է.

- ընտրել մենյոի տողի *View Ենթամենյոի Header and Footer* հրամանը: Այժմ փաստաթղթի հիմնական տեքստը ժամանակավորապես կդառնա «գունատ», իսկ էլերանի վերին մասում կհայտնվի խորագիր ստեղծելու գործիքաշարը (նկ. 5.6),
- Խորագրում ըստ անհրաժեշտության ներմուծել՝
 - անհրաժեշտ տեքստը,
 - (*Insert Date*) գործիքի օգնությամբ՝ ընթացիկ ամսաթիվը,
 - (*Insert Time*) գործիքի օգնությամբ՝ ընթացիկ ժամանակը,
 - (*Insert Page Number*) գործիքի օգնությամբ՝ էջի համարը,
- (*Format Page Number*) գործիքի օգնությամբ սահմանել էջի համարի ձևաչափը,
- *Close* գործիքով փակել խորագիր ստեղծելու պատուհանը:



Նկ. 5.6. Խորագիր ստեղծելու պատուհան


Տեքստի մեջ հանդիպող անձանոք բառերը կամ տերմինները բացատրելու նպատակով կիրառում են, այսպես կոչված, **ծանորագրությունները**, որոնք, որպես կանոն, տեղադրված են լինում էջի կամ երեսն էլ՝ փաստաթղթի վերջում: Տեքստային խմբագրիչի միջավայրում և ծանոթագրություն ստեղծելու հնարավորություն կա:

Ծանորագրությունները ստեղծելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել այն բառի վերջում, որի համար ծանոթագրություն է պետք ստեղծել,
- ընտրել մենյոի տողի *Insert Ենթամենյոի Reference* ենթամենյոի *Footnote* հրամանը,
- բացված *Footnote and Endnote* պատուհանի (նկ. 5.7) *Location* դաշտում ընտրել *Footnotes* (Էջի վերջ) կամ *Endnotes* (Փաստաթղթի վերջ) տարբերակներից որևէ մեկը,
- *Format դաշտի Number format* դաշտում ընտրել ծանոթագրության նշիչի ոճը,
- որպես նշիչ ծառայող պայմանանշանը կամ պայմանանշաններն ընտրել *Symbol* դաշտի օգնությամբ կամ ներմուծել *Custom mark* դաշտում,
- *Start at դաշտում* ընտրել ծանոթագրության մեկնարկային այն պայմանանշանը, որից պետք է սկսվի բացատրության ենթակա առաջին բառի համարը,
- *Numbering դաշտում* ընտրել առաջարկվող տարբերակներից որևէ մեկը՝ *Continuous* (յուրաքանչյուր հաջորդ ծանոթագրության հերթական նշիչը կամ օրինակ՝ թվային նշիչի նեպքում յուրաքանչյուր հաջորդ նշիչը կստացվի՝ նախորդին ավելացնելով մեկ), *Restart each section* (նշիչը կամ միայն տվյալ բաժնում), *Restart each page* (նշիչը կամ միայն տվյալ էջում, իսկ հաջորդ էջում ծանոթագրություն կատարելիս այն կրկին կսկսի մեկնարկային արժեքից),

- սեղմել *Insert* կոճակը,
- տեղադրված նշիչից հետո ներմուծել ծանոթագրությունը:

Ծանոթագրությունը ջնջելու համար անհրաժեշտ է նշել այն և սեղմել ստեղնաշարի *Delete* ստեղնը:



Նկ. 5.7. Ծանոթագրության պարամետրերը սահմանելու պարունական

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՍԱՆԱԼ

- ♦ **Տերևակային փաստաբուղքը կարելի է ցուցադրել կամ քարցնել (Show/Hide Document Text) գործիքի օգնությամբ:**
- ♦ **Խորագիրը վերինի կամ ստորինի կարելի է փոխարկել (Switch Between Header and Footer) գործիքի միջոցով:**



1. **Էջերի համարակալման գործընթացում հավասարեցման ի՞՞նչ չենք գիտեր:**
2. **Կարելի՞ է ասել, որ փաստաբուղքերում էջերի համարակալման մեկնարկային արժեքը միշտ հավասար է 1-ի:**
 3. **Ի՞նչ է խորագիրը:**
4. **Ի՞նչ կարելի է զետեղել խորագրերում:**
5. **Ի՞նչ է ծանոթագրությունը:**
6. **Ի՞նչ է ծանոթագրության նշիչը:**




Հարորակոր աշխատանք

5.1

Աշխատանք խորագրերի և ծանոթագրությունների հետ

Քայլ առ քայլ կապարեք հետեւյալ գործողությունները.

1. **Սկիզբ Microsoft Word գրեստային խմբագրիչ միջավայր:**
 2. **Ընդունելու պողի View ներամենյուի Header and Footer հրամանը:**
 3. **Ընդունելու Arial Armenian գառափեսակը, դրա 12 չափն ու հայկական այրութեանը:**
 4. **Խորագրություն (Insert Page Number) գործիքով գեղադրեք էջի ընթացիկ համարը, այնուհետև գրեստային խմբագրիչի գործիքների վահանակի (Center) գործիքով ընդունելու դրա կենտրոնի հավասարեցնելու գարբերակը:**
 5. **Enter-ով անցում կապարեք հաջորդ պողին:**
 6. **Խորագրի այս գողում ներմուծեք Տեքստային խմբագրիչներ գրեստը:**
 7. **Խորագրի դիրքերի փոխարկման (Switch Between Header and Footer) գործիքով բացեք սպորին խորագիրը:**
 8. **(Insert Time) գործիքի օգնությամբ ներմուծեք ընթացիկ ժամը:**
 9. **Մեղմնեք Tab սրելան ու (Insert Date) գործիքի օգնությամբ ներմուծեք ընթացիկ ամսաթիվը:**
 10. **Ընդունելու Close գործիքը:**
- Եթե ամեն ինչ ճիշտ եք կապարել, ապա վերին խորագիրը կընդունի**



Գետքը, իսկ սպորին խորագիրը, օրինակ, հետեւյալ գետքը.



11. **Տեքստային խմբագրիչի պատուհանի Formatting դաշտում ընդունելու Արևադարձակը Arial Armenian գառափեսակը, դրա 11 չափակը և ներմուծեք հետեւյալ գրեստը.**
Առօրյա կամքում յուրաքանչյուրս էլ անուղղակիորեն օգլուխում ենք այս կամ այն նպակակին ուղղված ալգորիթմներից:
12. **Մկնիկի ցուցիչը գեղադրեք ալգորիթմներից բառից հետո:**
13. **Ընդունելու պողի Insert ներամենյուի Reference ներամենյուի Footnote հրամանը:**

- 14. Բացված Footnote and Endnote պատուհանի Location դաշտում ընդունելու Format-ի Bootom of page տարրերակը:**
- 15. Format դաշտի Number Format դաշտում ընդունելու նշանը թվային ոճը (1, 2, 3, ...):**
- 16. Start at դաշտում ընդունելու ժամանակուրյան համարի մեջնարկային նիշը՝ 1:**
- 17. Numbering դաշտում ընդունելու Continuous տարրերակը:**
- 18. Ընդունելու Insert կոճակը. արդյունքում համակարգիչը ալգորիթմներից բառից հետո կդնի 1 նշանը՝ սպասելով, որ զվայլ էջի սպորին մասում գրված նշանը հետո ներմուծեք անհրաժեշտ ժամանակուրյունը: Որպես ժամանակուրյունն ներմուծեք հեղինակ անհաղատությունը.**

Ալգորիթմը գործողությունների կարգավորված հաջորդականություն է, որը հանգեցնում է սպասված արդյունքին:

Եթե ամեն ինչ ճիշդ եք կարարել, ապա ներմուծված տեքստը կը լրացնի հեղինակ պես:

Առօրյա կյանքում յուրաքանչյուր էլ անողություն կատարելու օգրվում էնք այս կամ այն մակարդակին ուղղված ալգորիթմներից¹:

Խսկ էջի ներբեռում գրված ժամանակուրյունը՝ հեղինակ.

¹ Ալգորիթմը գործողությունների կարգավորված հաջորդականություն է, որը հանգեցնում է սպասված արդյունքին:

§ 5.3 ԲՆՖՈՐՄԱՑԻՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՌՅՈՒՍԱԿՆԵՐՈՎ ԵՎ ՍՅՈՒՆԱԿՆԵՐՈՎ

Նախորդ դասարաններում ուսումնասիրած նյութից դուք արդեն գիտեք, որ մեծաքանակ թվային և տեքստային տվյալների մշակումն առավել դյուրին է դառնում, եթե դրանք ներկայացվում են աղյուսակի տեսքով: Տեքստային խմբագրիչները ևս աղյուսակ ստեղծելու և դրա հետ աշխատելու հնարավորություն ունեն. հիշեցնենք, որ աղյուսակը թույլ է տալիս տվյալները ներկայացնել տողերի և սյուների միջոցով: Այստեղ աղյուսակի յուրաքանչյուր քիչ կարող է տեքստային փաստաբուղք կազմող ցանկացած բաղադրիչ պարունակել, բացառությամբ այլ աղյուսակի: Ընդ որում՝ յուրաքանչյուր քիչ համար կարելի է պայմանանշանների և պարբերության ձևաչափի ուրույն պարամետրեր սահմանել: Այդուսակի բաժնանրար գծերը կարող են լինել տարրեր հաստության, գույնի և ձևի: Դրանք, անհրաժեշտության դեպքում, կարող են նաև անտեսանելի լինել:


Աղյուսակ սրելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստաբուղքի անհրաժեշտ մասում,
- ընտրել մենյուի տողի Table ենթանեցյուի Insert հրամանը (նկ. 5.8),
- բացված պատուհանում ընտրել Table հրամանը (նկ. 5.9),
- բացված Insert Table պատուհանի (նկ. 5.10) Number of columns դաշտում ներմուծել ստեղծվող աղյուսակի սյուների քանակը, իսկ Number of rows դաշտում՝ տողերի քանակը,
- Fixed column width դաշտում սահմանել սյան անհրաժեշտ լայնությունը (եթե


սահմանվի Auto տարրերակը, ապա էջի լայնությունը հավասարապես կրաշխվի սյուների միջև),

- սեղմել OK կոճակը:

Ստեղծված աղյուսակի սյուների և տողերի դիրքերը ցույց են տրվում հորիզոնական և ուղղահայաց քանոների վրա եղած նշիչների միջոցով (նկ. 5.11):




Նկ. 5.8. Table ենթանիկություն




Նկ. 5.9. Insert ենթանիկություն

Աղյուսակը կազմող գողերի և սյուների չափերը փոփոխելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել քանոնի համալսարական նշիչի վրա,
- ցուցիչը երկողով ալարի տեսք ընդունելուն պես մկնիկի օգնությամբ փոխել համապատասխան տողի կամ սյան չափերը:



Նկ. 5.10. Insert Table պատուհան



Նկ. 5.11. Աղյուսակի սյուներին և գողերին համապատասխան նշիչներ

Ողջ աղյուսակը կամ *աղյուսակի բջիջը, սյունը, պողը նշելու* համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել նշման ենթակա համապատասխան ուղղանկյուն տիրույթի որևէ անկյունային բջիջի վրա,
- ձախ սեղմակով իրականացնել անհրաժեշտ նշումը:

Աղյուսակի որևէ սյուն նշելու համար անհրաժեշտ է մկնիկի ցուցիչը տեղադրել սյան վերին եզրագծի վրա և, եթք ցուցիչը ընդունի սլաքի տեսք, սեղմել մկնիկի ձախ սեղմակը: Հարևան կից սյուներ նշելու համար անհրաժեշտ է վերը բերված եղանակով նշել տվյալ տիրույթի որևէ եզրային սյուն և, բաց շրողնելով սեղմակը, նշումը տարածել հարևան սյուների վրա ևս:

Աղյուսակի որևէ պող նշելու համար անհրաժեշտ է մկնիկի ցուցիչը տեղադրել սովորի ձախ եզրագծի մոտ և սեղմել ձախ սեղմակը: Հարևան տողեր նշելու համար անհրաժեշտ է բերված եղանակով նշել որևէ եզրային տող և, բաց շրողնելով սեղմակը, նշումը տարածել հարևան տողերի վրա:

Ողջ աղյուսակը կամ աղյուսակի բջիջը, սյունը, պողը հեռացնելու համար անհրաժեշտ է.

- նշել հեռացնան ենթակա տիրույթը,
- ընտրել մենյուի տողի *Table* ենթամենյուի *Delete* հրամանը,
- բացված պատուհանում (նկ. 5.12) ընտրել հեռացնան ենթակա տարրը. *Table* – աղյուսակը, *Column* – սյունը, *Rows* – տողը, *Cells* – բջիջը:

Աղյուսակում բջիջ, պող կամ *սյուն ավելացնելու* համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել աղյուսակի այն մասում, որտեղ պետք է ավելացվի համապատասխան տարրը,
- ընտրել մենյուի տողի *Table* ենթամենյուի *Insert* հրամանը,
- բացված պատուհանում (նկ. 5.9) ընտրել անհրաժեշտ տարրերակը.
 - *Column to the Left* – ավելացնել սյուն ձախից,
 - *Column to the Right* – ավելացնել սյուն աջից,
 - *Rows Above* – ավելացնել տող վերևից,
 - *Rows Below* – ավելացնել տող ներքևից,
 - *Cells* – ավելացնել բջիջ:

Աղյուսակի բջիջները միացնելու (միավորելու) համար անհրաժեշտ է.


- նշել միավորման ենթակա բջիջները,
- ընտրել մենյուի տողի *Table* ենթամենյուի *Merge Cells* հրամանը:

Աղյուսակի բջիջները մասնավելու համար անհրաժեշտ է.


- նշել մասնատման ենթակա վանդակը,
- ընտրել մենյուի տողի *Table* ենթամենյուի *Split Cells* հրամանը,
- բացված պատուհանի (նկ. 5.13) *Number of columns* դաշտում ընտրել սյուների, իսկ *Number cells before split* դաշտում՝ տողերի քանակը:

Աղյուսակը մասերի բաժանելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչով ընտրել աղյուսակի այն տողը, որից սկսած մնացած տողերը պետք է մտնեն այլ աղյուսակի մեջ,
- ընտրել մենյուի տողի *Table* ենթամենյուի *Split Table* հրամանը:



Նկ. 5.12. Delete պայունան



Նկ. 5.13. Split Cells պայունան

Աղյուսակի քիշում գերազի ուղղվածությունը (հորիզոնական կամ ուղղահայց) **փոխելու** համար անհրաժեշտ է.

- Աշել այն քիշը կամ քիշները, որոնց մեջ պետք է տեքստի ուղղվածությունը փոխվել,
- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Text Direction* հրամանը,
- բացված պատուհանում (նկ. 5.14) ընտրել տեքստի ուղղվածության անհրաժեշտ ձևը:

Աղյուսակի քիշում (քիշներում) գերազի հավասարեցման չել սահմանելու համար անհրաժեշտ է.

- Աշել անհրաժեշտ քիշը (քիշները),
- սեղմել մկնիկի աջ սեղմակը,
- ենթատեքստային մենյուից ընտրել *Cell Alignment* հրամանը,
- բացված պատուհանում (նկ. 5.15) ընտրել հավասարեցման առաջարկվող ձևերից անհրաժեշտը:




Նկ. 5.14. Text Direction պայունան



Նկ. 5.15. Cell Alignment պայունան

Աղյուսակի բաժանարար գծերը ցուցադրելու կամ բարցնելու համար անհրաժեշտ է.


- Աշել անհրաժեշտ քիշը կամ քիշները,
- ընտրել (*Outside Border*) զործիքը,
- բացված պատուհանում (նկ. 5.16) ընտրել եզրային զծի անհրաժեշտ տեսքը:



Նկ. 5.16. Outside Border պայունան

Աղյուսակի բաժանարար գծերի հասպությունը, գույնն ու չեղակացնելու համար անհրաժեշտ է.

- Աշել անհրաժեշտ քշիջը կամ քշիջները,
- ընտրել *Borders and Shading* հրամանը,
- *Borders* ներդիր պատուհանի (Ակ. 5.17) *Style* բաժնում ընտրել բաժանարար գծի ձևը, *Color* բաժնում՝ գույնը, իսկ *Width* բաժնում՝ գծի հաստությունը,
- սեղմել *OK* կոճակը:




Ակ. 5.17. Borders and Shadingպատուհանի Borders ներդիր պատուհան

Աղյուսակի քիջը (քիջները) ներկելիս գույնն ու չեղակացնելու համար անհրաժեշտ է.

- Աշել անհրաժեշտ քշիջը (քշիջները),
- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Borders and Shading* հրամանը,
- *Shading* ներդիր պատուհանի (Ակ. 5.18) *Fill* բաժնում ընտրել ներկելու գույնը, իսկ *Style* բաժնում՝ ձևը,
- սեղմել *OK* կոճակը:


Տերևական սեղմերով ներկայացնելու համար անհրաժեշտ է.

- Աշել տեքստի այն հատվածը, որը պետք է ներկայացվի սյունակներով,
- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Columns* հրամանը,
- քացված (Ակ. 5.19) պատուհանի *Number of columns* բաժնում ընտրել սյուների քանակը, *Presets* դաշտում՝ բաժանման ձևը, *Width and spacing* բաժնի *Width* դաշտում՝ սյան լայնությունը, իսկ *Spacing* դաշտում՝ տվյալ սյունից մինչև հաջորդ սյունը եղած հեռավորությունը,
- *Line between* դաշտում նշում կատարել, եթե անհրաժեշտ է սյուների միջև բաժանարար գծեր դնել,
- *Equal column width* դաշտում նշում կատարել, եթե անհրաժեշտ է էջի ողջ լայնությունը հավասարահեռ սյուներ ստեղծել:



Նկ. 5.18. Borders and Shadingպալուհանի Shading մերդիր պալուհան

- Apply to դաշտում ընտրել Selected sections տարրերակը, եթե պես է սյունակ-ներով ներկայացնել տեքստի նշված հատվածը, կամ ընտրել Selected text-ը, եթե ամբողջ տեքստն է անհրաժեշտ սյունակներով ներկայացնել,
- սեղմել OK կոճակը:



Նկ. 5.19. Columns պալուհան

ՕԳՏԱԿԱՐ Է ԽՍԱՆԱԼ

- ◆ Աղյուսակ կարելի է սրելուն նաև  գործիքի օգնությամբ:
- ◆ Մկնիկի ցուցիչը աղյուսակի վրա պահելու դեպքում աղյուսակի մուլտ երևացող  նշանի օգնությամբ՝ նշանի օգնությամբ՝ փոփոխել աղյուսակի չափերը:
- ◆ Աղյուսակը կազմող գողերի ու այուների չափերը կարելի է փոփոխել մենայուի գողի Table ենթամենյուի Table Properties հրամանով կամ հետեւյալ կերպ. մենայիկի ցուցիչը գեղադրել աղյուսակի բաժանարար գծի վրա և, եթե այն ընդունի  կամ  տեսքերից որևէ մեկը, մկնիկի շարժումով փոփոխել անհրաժեշտ չափերը:
- ◆ Աղյուսակը, քշիջը, այունը կամ գողը կարելի է նշել նաև մենայուի գողի Table ենթամենյուի Select հրամանով:
- ◆ Աղյուսակի գվլյալների հետ հաշվարկներ իրականացնելու համար կարելի է օգտվել մենայուի գողի Table ենթամենյուի Formula հրամանից:
- ◆ Աղյուսակի գվլյալներն ըստ աճման կամ նվազման կարելի է կարգավորել մենայուի գողի Table ենթամենյուի Sort հրամանով. Ascending՝ ըստ աճման, Descending՝ ըստ նվազման:
- ◆ Աղյուսակի գողերը համարակալելու համար անհրաժեշտ է նշել որևէ այուն (օրինակ՝ առաջինը) և ընդունել  (Numbering) գործիքը:
- ◆ Աղյուսակի վերնազիրը բոլոր էջերում ավտոմատ կերպով կրկնելու համար անհրաժեշտ է նշել առաջին էջում գեղակայված վերնազիրն ու ընդունել մենայուի գողի Table ենթամենյուի Heading Rows Repeat հրամանը:
- ◆ Տերևը այուներով կարելի է ներկայացնել նաև  գործիքի օգնությամբ:



1. **Ի՞նչ առավելություններ ունի իմֆորմացիայի աղյուսակային ներկայացումը:**
2. **Ո՞ր խմբագրիչի միջավայրում եք աշխատել աղյուսակների հետ:**
3. **Ի՞նչ գարրեր կարող է պարունակել աղյուսակի քշիջը:**
4. **Աղյուսակների հետ աշխատելու ի՞նչ հիմնական գործողություններ գիտեք:**



Հարորակոր աշխատանք

5.2

Աշխատանք աղյուսակի հետ

Տեքստային փաստարդի մեջ սպեկուլար հետևյալ աղյուսակը.

	Առարկա							
	Ինֆորմատիկա				Մաթեմատիկա			
	Նախարար	Նվազագույն	Նվազագույն	Նվազագույն	Նախարար	Նվազագույն	Նվազագույն	Նվազագույն
Արմեն	3	4	4	3	4	3	3	3
Գայանե	4	4	4	5	4	4	4	4
Կարինե	4	4	5	5	4	4	4	4
Լևոն	5	5	5	5	5	5	5	5

Քայլ առ քայլ կապարեք հետևյալ գործողությունները.

1. **Մտեք Microsoft Word տեքստային խմբագրիչի միջավայր:**
2. **Բացված պատճենահանի Formatting դաշտում ընդունեք Arial Armenian տառապեսակի 10 չափը:**
3. **Հայկական այրութենի ընդունեան նպատակով միաժամանակ օգտվեք «Alt», «Ctrl» և «Shift» սպեկուլարից:**
4. **Ընդունեք մենյոի վողի Table ներամենյուի Insert հրամանը:**
5. **Բացված պատճենահանում ընդունեք Table հրամանը:**
6. **Բացված Insert Table պատճենահանի Number of columns դաշտում ներմուծեք սպեկուլով աղյուսակի սյուների քանակը՝ 9, իսկ Number of rows դաշտում դուք դերի քանակը՝ 7:**
7. **Սեղմելով OK կոճակը՝ կսպանաք աղյուսակի հետևյալ կառուցվածքը.**

8. **Սկսած օգնությամբ նշեք առաջին վողի բոլոր բջիջները՝ բացառությամբ առաջինի:**

- 9. Մենայուի գողի Table ենթամենյուի Merge Cells հրամանով միաձուլելով նշված բջիջները՝ կապահանք հետևյալ աղյուսակը:**

- 10. Այժմ աշխագինար երկրորդ գողի հետ. Նշեք երկրորդից միաչև հիմնգերորդ բջիջները և մենայուի գողի Table ենթամենյուի Merge Cells հրամանով միավորեք դրանք:**
- 11. Նշեք երկրորդ գողի վեցերորդից միաչև իններորդ բջիջներն ու Merge Cells հրամանով դրանք ևս միաձուլեք: Եթե ամեն ինչ ճիշտ էք կարարել, կապահանք հետևյալ աղյուսակը.**

- 12. Նշեք առաջին սյան առաջին երեք բջիջներն ու մենայուի գողի Table ենթամենյուի Merge Cells հրամանով միաձուլելով նշված բջիջները՝ սպացեք հետևյալ աղյուսակը.**

- 13. Նշեք երրորդ գողի բոլոր բջիջները՝ բացառությամբ առաջինի:**
- 14. Մենայուի գողի Format ենթամենյուի Text Direction հրամանով ընդունեք գույքի ուղղահայց ուղղվածությունը:**
- 15. Կառուցված աղյուսակում ներմուծեք վերը բերված գվլյալներն ու չեավորեք աղյուսակը ձեր ճաշակությամբ:**
- 16. Սպեկտրալ աղյուսակը պարունակող փաստաթուղթը պահպանեք My Documents-ի գվլյալ դասարանի համար հայտկացված բղրապանակում Lab_10_5_2_* անունով, որպես *-ի գովազարք պես է ներմուծել աշակերտի դասամագրյան համարը:**
- 17. Տերսային խմբագրիչի հետ աշխագրանքն ավարտեք՝ օգտվելով պարունակած փակման սեղմակից:**

§ 5.4

ΦԱՍՏԱԹՂԹԻ ԲԱԺՎՆՈՒՄԸ ՄԱՍԵՐԻ: ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Չնայած *Word*-ը ներմուծված տեքստն ավտոմատ կերպով էջերի է բաժանում, այնուամենայիվ, խմբագրիչը լրացուցիչ հնարավորություն է ընձեռում **Էջերի միջև սուլա բաժանարար գիծը պեղադրելու փաստաթղթի ցանկացած մասում**: Դրա համար անհրաժեշտ է:

- նկայիկի ցուցիչը տեղադրել փաստաթղթի այն մասում, որտեղ պետք է տանել բաժանարար գիծը,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Break* հրամանը,
- բացված պատուհանի *Break types* բաժնում ընտրել *Page break* հրամանը,
- սեղմել *OK* կոճակը:

Բաժանարար գծի դիրքը կարելի է շտկել նաև տեքստում պարբերությունների դիրքերը փոփոխելով:

Պարբերությունների պեղադրաշխումն ըստ Էջերի կարգավորելու համար անհրաժեշտ է.

- նշել պարբերությունը,
- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Paragraph* հրամանը,
- բացել *Line and Page Breaks* ներդիր պատուհանը (նկ. 5.20),
- բացված պատուհանի *Pagination* բաժնում ընտրել առաջարկվող հետևյալ տարրերակներից որևէ մեկը.
 - *Widow/Orphan control* – արգելում է պարբերության առաջին տողը բողնել էջի վերջում կամ վերջին տողը՝ էջի սկզբում,
 - *Keep lines together* (չտրոհել պարբերությունը) – պարբերությունն էջում չտեղափոխելու դեպքում այն ամբողջությամբ տեղափոխում է հաջորդ էջ,
 - *Keep with next* (չբաժանել հաջորդից) – նշված պարբերությունը հաջորդ պարբերության հետ տեղափորել միևնույն էջում,
 - *Page break before* (նոր էջից) – նշված պարբերությունը տեղաբաշխել հաջորդ էջի սկզբում,
- սեղմել *OK* կոճակը:


Word-ի փաստաթղթը կարող է բաղկացած լինել տարրեր բաժիններից. բաժինը փաստաթղթի տիրույթ է, որի պարամետրերից բեկում մեկը տարբերվում է մնացածներից: Փաստաթղթի բաժիններն իրարից զատկում են բաժնի ավարտի նշանով՝ ամբողջ էջը հատող երկու հորիզոնական գծերով,

¶*Section Break (Continuous)*.....


որտեղ ¶ նշանը պարբերության ավարտի չտպագրվող նշանն է. փաստաթղթի չտպագրվող նշանները էլեկտրոնային տեսնելու համար անհրաժեշտ է սեղմել ¶ գործիքը:

Փաստարդում բաժին սղեղծելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստարդի այն մասում, որտեղ պետք է սկսվի բաժինը,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Break* հրամանը,
- բացված պատուհանի (նկ. 5.21) *Section break types* բաժնում ընտրել առաջարկվող հետևյալ տարրերակներից որևէ մեկը.
 - *Next page* – բաժինը կարող է սկսվել հաջորդ էջում,
 - *Continuous* – բաժինը կարող է սկսվել ընթացիկ էջում,
 - *Even page* – բաժինը կարող է սկսվել մոտակա զույգ համարով էջում,
 - *Odd page* – բաժինը կարող է սկսվել մոտակա կենտ համարով էջում,
- սեղմել *OK* կոճակը:




**Նկ. 5.20. Պարբերության ձևաչափի սահմանման
Line and Page Breaks ներդիր պայտուհան**




Նկ. 5.21. Break պայտուհան

Word տեքստային խմբագրիչում էջի պարամետրերը սահմանող մի շարք հրամաններում հնարավորություն կա նշելու փաստարդի այն տիրույթը, որի համար տվյալ ձևաչափը պետք է կիրառվի: Նման հնարավորության դուք հանդիպել եք *Page Setup* պատուհանում (տես § 5.1, նկ. 5.2), որտեղ *Apply to* դաշտի օգնությամբ տրվում է անհրաժեշտ մասը՝ նշված տիրույթը, ամբողջ փաստարությը և այլն:


Word տեքստային խմբագրիչը տարրեր ցուցակներ ստեղծելու ավտոմատ հնարավորություն ունի: Խմբագրիչում ցուցակների տարրեր տիպեր են նախատեսված՝ **համարակիր, նշիչակիր** և **բազմամակարդակ** (նկ. 5.22)



ա) համարակիր



բ) նշիչակիր



գ) բազմամակարդակ


Նկ. 5.22. Ցուցակների օրինակներ

Համարակիր ցուցակներում թվարկումներն ուղեկցվում են տառերով կամ թվերով (արարական, հոռմեական), իսկ Աշխակիր թվարկումները՝ նշիչ հանդիսացող հատուկ պայմանանշաններով: **Բազմամակարդակ** ցուցակները կազմվում են ներդրված ցուցակներից, որոնցից յուրաքանչյուրն իր տիպը կարող է ունենալ:

Ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ է.

- Նշել անհրաժեշտ թվարկումները,
 - ընտրել մենյուի տողի **Format** ենթամենյուի **Bullets and Numbering** հրամանն ու բացված պատուհանում (նկ. 5.23) ընտրել հետևյալ ներդիր պատուհաններից որևէ մեկը.
- **Bulleted** – նշիչակիր ցուցակների ստեղծում,
- **Numbered** – համարակիր ցուցակների ստեղծում,
- **Outline Numbered** – բազմամակարդակ ցուցակների ստեղծում,
- **List Styles** – ոճերի ցուցակների ստեղծում,
- սեղմել **OK** կոճակը:

Ցուցակներում առկա համարմերը կամ նշիչները կարելի է հանել *Bullets and Numbering* պատուհանի *None* կոճակով:



Նկ. 5.23. Ցուցակների ստեղծման պատուհան

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍՍՆՈՒ

- ◆ *Paragraph պատուհանի Line and Page Breaks ներդիր պատուհանի Don't hyphenate դաշտը ընդունելու դեպքում պարբերությունում ավտոմատ գողանցումը կարգելվի:*
- ◆ **Նշիչակիր ցուցակ կարելի է ստեղծել նաև** **գործիքով:**
- ◆ **Համարակիր ցուցակ կարելի է ստեղծել նաև** **գործիքով:**



1. Հնարավո՞ր է արդյոք էջերի միջև բաժանարար գիծը դեղադրել փաստարդի ցանկացած մասում:
2. Պարբերությունների փեղաբաշխման ի՞նչ չենք գիտեք:
3. Փաստարդի բաժնի դեղաբաշխման ի՞նչ չենք գիտեք:
4. Հնարավո՞ր է արդյոք, որ փաստարդի բարբեր գիրույթներ ունենան էջի բարբեր չեաչափեր:



Լարորակոր աշխատանք

5.3 Փաստարդի առանձին մասերի խմբագրում

Քայլ առ քայլ կապարեք հելքեյալ գործողությունները.

1. **Միներ Microsoft Word գերազային խմբագրիչի միջավայր:**
2. **Բացեք համակարգում պահպանված որևէ փաստարդուղ:**
3. **Մկնիկի ցուցիչը դեղադրեք փաստարդի այն մասում, որին ցանկանում եք փաստարդի բաժնարար գիծ պանել, ապա ընդունեք մենյուի գողի Insert ենթամենյուի Break հրամանն ու սեղմեք OK կոճակը:**
4. **Գործիքով փաստարդուղը վերադարձրեք նախկին դեսքիմ:**
5. **Նշեք փաստարդի որևէ պարբերություն և մենյուի գողի Format ենթամենյուի Paragraph հրամանով բացեք Line and Page Breaks ներդիր պալուիհանը:**
6. **Բացված պալուիհանի Pagination բաժնում հաջորդաբար ընդունեք առաջարկվող գարբերակներն ու հեղեղեք արդյունքին:**
7. **Փաստարդում բաժններ սփեռդելու համար մկնիկի ցուցիչը դեղադրեք փաստարդի որևէ մասում և ընդունեք մենյուի գողի Insert ենթամենյուի Break հրամանը:**
8. **Բացված պալուիհանի Section break types բաժնում հաջորդաբար ընդունեք առաջարկվող գարբերակներն ու հեղեղեք արդյունքին:**
9. **Փաստարդուղը փակեք՝ դրա չեափոխված բարբերակը չպահպանելով:**
10. **Կրկին միներ Microsoft Word գերազային խմբագրիչի միջավայր:**
11. **Ներմուծեք համադաստրանցիներից մի քանիսի ամուններն առանձին գողերով:**
12. **Ներմուծված գերազայից գործիքով նշեակիր, ապա գործիքի օգնությամբ համարակիր ցուցակներ սփեռդեք:**
13. **Փաստարդուղը փակեք՝ չպահպանելով դրա չեափոխված բարբերակը:**

§ 5.5 ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Եթե փաստաթղթի հետ աշխատելիս անհրաժեշտություն է առաջանալ անդրադառնալ փաստաթղթի նույն հատվածին, ապա նպատակահարմար է տվյալ մասում **Էջանշան** տեղադրել: Էջանշանը տառարթվային անվանում է, որն անպայման պետք է սկսվի տառով և պարունակի ամենաշատը 40 պայմանանշան: Էջանշանը, բացի տառերից ու թվերից, կարող է նաև ընդգծման նշան պարունակել:

Փաստարդում էջանշան պեղադրելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստաթղթի անհրաժեշտ մասում,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Bookmark* հրամանը կամ համատեղ սեղմել *Ctrl*, *Shift* և *F5* ստեղմերը,
- բացված պատուհանի (նկ. 5.24) *Bookmark* name դաշտում ներմուծել էջանշանի անվանումը,
- սեղմել *Add* կոճակը:

Փաստարդի էջանշան պարունակող դիրքին ամցում կապարելու համար անհրաժեշտ է.

- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Bookmark* հրամանը,
- բացված պատուհանում ընտրել անհրաժեշտ էջանշանը ու սեղմել *Go To* կոճակը կամ տվյալ էջանշանի վրա մկնիկի ձախ սեղմակի կրկնակի սեղմում կատարել,
- փակել բացված *Bookmark* պատուհանը:

Աշխատանքն ավարտելիս ստեղծված **Էջանշանը կարելի է հեռացնել** *Bookmark* պատուհանի *Delete* կոճակով:

Տերցտային փաստաթղթերին առնցքող դիտողություններ, լրացումներ անելու նպատակով կարելի է օգտվել **Մեկնարանուրյուններից**: Մեկնարանուրյունները վերցվում են ֆոնից տարբեր գույնի շրջանակների մեջ (նկ. 5.25): Նշենք, որ մեկնարանուրյունները փաստաթղթի նախնական դիտման ընթացքում և տպագրելիս չեն երևում:



Նկ. 5.24. Էջանշանի սպեհծման
Bookmark պատուհան



Նկ. 5.25. Մեկնարանուրյունների շրջանակ

Փաստաթղում **մեկնարանություններ գեղադրելու** համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստաթղի անհրաժեշտ մասում,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Comment* հրամանը,
- հայտնված *Comment* շրջանակում ներմուծել համապատասխան մեկնարանությունը:

Սեկնարանության շրջանակի վրա մկնիկի աջ սեղմակով բացված ենթատեքստային մենյուի *Font* հրամանով կարելի է սահմանել մեկնարանության տեքստի տառատեսակը, չափն ու գույնը, իսկ *Delete Comment* հրամանով՝ հեռացնել առկա մեկնարանությունը:

Ինչպես արդեն գիտեք, *Word* փաստաթղում կարելի է տարբեր ձևաչափերի նկարներ ներառնել:

Գրաֆիկական խմբագրիչի միջավայրից նկարը գերազագույն փաստաթղի անհրաժեշտ մասում գեղադրելու համար պետք է.

- գրաֆիկական խմբագրիչում նշել նկարն ու այն պատճենել փոխանակման բուֆերում,
- ակտիվացնել տեքստային խմբագրիչի միջավայրում առկա փաստաթղութքը,
- մկնիկի ցուցիչը տեղադրել անհրաժեշտ մասում և փոխանակման բուֆերից նկարը տեղադրել տեքստային փաստաթղում:

Տեքստային փաստաթղում MS Office-ի հավաքածուից որևէ նկար պատճենելու համար անհրաժեշտ է.

- մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Picture* ենթամենյուի *Clip Art* հրամանով բացված *Insert Clip Art* փահանակի *See also* քածնում ընտրել *Clip Organizer* հրամանը,
- բացված *Favorites* պատուհանի *Collection List* քածնի *Office Collections* թղթապանակից ընտրել անհրաժեշտ քեմայով թղթապանակը,
- նկարն ընտրելով՝ այն պատճենել փոխանակման բուֆերում,
- ակտիվացնել փաստաթղութքն ու դրա անհրաժեշտ մասում պատճենել փոխանակման բուֆերի պարունակությունը:


Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում **փաստաթղում հավույլ պայմանանշաներ գեղադրելու**: Դրա համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստաթղի այն մասում, որտեղ պետք է պայմանանշանը տեղադրել,
- մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Symbol* հրամանով բացված պատուհանում ընտրել անհրաժեշտ պայմանանշանը,
- ընտրված պայմանանշանը *Insert* կոճակով տեղադրել փաստաթղում,
- անհրաժեշտ պայմանանշանների պատճենումն ավարտել *Cancel* կոճակով:

Փաստաթղում ընթացիկ ամսարիվն ու ժամանակը նշելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստաթղի այն մասում, որտեղ պետք է ընթացիկ ամսաթիվն ու ժամանակը նշել,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Date and Time* հրամանը,
- բացված պատուհանի (նկ. 5.26) *Language* դաշտում ընտրել անհրաժեշտ լեզուն, իսկ *Available formats* դաշտում՝ ձևաչափը,
- սեղմել *OK* կոճակը:


Ներմուծված ամսաթիվն ու ժամանակը պատճենահանության նպատակով պետք է *Update automatically* դաշտում համապատասխան նշում կատարել:



Նկ. 5.26. Ընթացիկ ամսաթիվն ու ժամանակը սահմանելու պակուհան

Փաստարդում որևէ այլ փաստարդուոք ամրողությամբ ներդնելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել փաստարդի անհրաժեշտ մասում,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *File* հրամանը,
- բացված *Insert File* պատուհանի (նկ. 5.27) *Look in* դաշտում ընտրել ներդրվող ֆայլը,
- սեղմել *Insert* կոճակը:



Նկ. 5.27. Ֆայլն այլ փաստարդում ներդնելու պակուհան


MS Word տեքստային խմբագրիչում ներառված ***Microsoft Graph*** ծրագրային համալիրը նախատեսված է տեքստային փաստարդում ***դիագրամ*** ստեղծելու համար:

Փաստարդում դիագրամ ստեղծելու երկու ձևն են նախատեսված:

Առաջին դիացրում համակարգչում առկա ցանկացած տվյալների հենքային աղյուսակի համաձայն որևէ դիագրամ է կառուցվում: Այնուհետև աղյուսակում ներմու-

ծելով անհրաժեշտ ընթացիկ տվյալները՝ ստացվում է դիագրամի պահանջվող տեսքը: Այս եղանակով դիագրամ կառուցելու համար անհրաժեշտ է ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Object* ենթամենյուի *Microsoft Graph Chart* հրամանն ու բացված հենքային աղյուսակում (նկ. 5.28) ներմուծելով ընթացիկ տվյալները՝ ստանալ համապատասխան դիագրամն ու խմբագրել այն:

Երկրորդ դեպքում դիագրամը կառուցվում է փաստարդիքում նախապես ստեղծված աղյուսակի տվյալների հիման վրա: Այս դեպքում անհրաժեշտ է նաև նշել համապատասխան աղյուսակը, ապա ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Object* ենթամենյուի *Microsoft Graph Chart* հրամանը:



Նկ. 5.28. Դիագրամի կառուցում առկա տվյալների հենքով

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՍԱՆԱԼ

- ◆ **Փաստարդում հազոր պայմանանշաններ կարելի է ներմուծել նաև Start զրանքով մենյուի *Programs* ենթամենյուի *Accessories* ենթամենյուի *System Tools* ենթամենյուի *Character Map* պատուհանի օգնությամբ:**
- ◆ **Ընթացիկ ամսաթիվը զեղադրելու համար կարելի է համարել սեղմել *Alt*, *Shift* և *D*, իսկ ընթացիկ ժամանակի համար՝ *Alt*, *Shift* և *T* սրեղմերը:**



1. **Ի՞նչ նպագույն են փաստարդում էջանշան գեղադրում:**
2. **Էջանշանի անվանումը ի՞նչ պայմանանշաններ կարող է պարունակել:**
3. **Ի՞նչ է մեկնաբանությունը:**
4. **Ինչպես կարելի է փաստարդությունը ներմուծել ընթացիկ ժամանակն ու ամսաթիվը:**
5. **Փաստարդում դիագրամներ կառուցելու ի՞նչ եղանակներ գիրեր:**



Հարորակոր աշխատանք

5.4

Օժանդակ լրարրերի ներմուծում

Քայլ առ քայլ կապարեք հետեւյալ գործողությունները:

1. **Մղեք MS Word գերազային խմբագրիչի միջավայր և ուսուցչի բույլվությամբ համակարգչում պահպանված որևէ գերազային փաստարուղք բացեք:**
2. **Փաստարուում մեկնաբանություն ներմուծելու համար մկնիկի ցուցիչը գերադարձ փաստարուի որևէ մասում և ընդունեք մենյուի փողի Insert ենթամենյուի Comment հրամանը:**
3. **Տեքստում հայտնակած Comment շրջանակում ներմուծեք որևէ գերազական դաշտում:**
4. **Մղեղծված մեկնաբանության վրա մկնիկի աջ սեղմակով բացված ենթագրային պատուհանի Delete Comment հրամանով հեռացրեք աղեղծված մեկնաբանությունը:**
5. **Տեքստում փաստարուում MS Office-ի հավաքածուից որևէ նկար գեղադրելու համար ընդունեք մենյուի փողի Insert ենթամենյուի Picture ենթամենյուի Clip Art հրամանը, ապա բացված Insert Clip Art վահանակի See also բաժնի Clip Organizer հրամանը:**
6. **Ընդունեք բացված Favorites պատուհանի Collection List բաժնի Office Collections բղբապանակն ու հաջորդաբար բացելով բեմադրիկ բղբապանակները՝ դիմեք դրանցում ներառված նկարները:**
7. **Ընդունեք որևէ նկար ու փոխանակման բուֆերի օգնությամբ այն պատճեններ չեք փաստարուի որևէ մասում:**
8. **Ընդունեք մենյուի փողի Insert ենթամենյուի Object ենթամենյուի Microsoft Graph Chart հրամանն ու բացված բազային աղյուսակում պվյալներ ներմուծելով սրացեք համապատասխան դիագրամը: Աղյուսակում ներմուծված պվյալները փոփոխելով հետեւյալ դիագրամի գեների փոփոխմանը:**
9. **Մենյուի փողի Insert ենթամենյուի Symbol հրամանով բացեք համանուն պատուհանն ու ծանորացեք այնպես առաջարկվող պայմանանշաններին:**
10. **Insert պայմանանշանի օգնությամբ փորձեք որևէ պայմանանշան գեղադրել փաստարուում:**
11. **Cancel կոճակով փակեք բացված պատուհանը:**
12. **Մենյուի փողի Insert ենթամենյուի Date and Time հրամանով փաստարուում գեղադրեք ընթացքի ամսարիվն ու ժամանակը:**
13. **Փաստարուուրը փակեք՝ չպահպանելով կապարված փոփոխությունները:**

§ 5.6 ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՃԵՐ

Քանի որ փաստաթղթի ձևակորման գործընթացում անհրաժեշտ պարագաների սահմանումն աշխատատար է և հոգմեցուցիչ, ուստի MS Word տեքստային խմբագրի-ը մշակված ձևաչափերը պահպանելու և հետազայտմ կիրառելու հնարավորություն է ընձեռում:

**Պայմանականների, պարբերությունների և էջերի պահպանված
ձևաչափն անվանում են *ռեժիսոր*:**

Խմբագրիչը փորձառու մասնագետների կողմից ստեղծված բազմաթիվ պահպան-ված ոճեր ունի, որոնք խմբագրիչի միջավայրից օգտվողներին թույլատրում են ստանդարտ ոճերի փաստաթղթեր ստեղծել: Ցանկացած օգտվող նույնպես կարող է ոճեր ստեղծել ու պահպանել:

Ոճերի չորս հիմնական տեսակներ կան.

- **Պայմանանշանի ոճը** ներառում է պայմանանշանների ձևաչափի պարամետրերը՝ տառատեսակը, չափը, ձևը, գույնը, դիրքն ու միջտառային հեռավորությունը և այլն,
 - **Պարբերության ոճը** ներառում է պարբերությունների ձևաչափի պարամետրերը՝ միջտողային հեռավորությունը, ըստ եզրերի հավասարեցման ձևը, պարբերության սկիզբը, աղյուսակավորման դիրքերը և այլն: Պարբերության ոճը կարող է ներառել նաև պայմանանշանների ոճեր:
 - **Ցուցակների ոճը** նախատեսված է ցուցակների ձևաչափ սահմանելու համար, և այն կարելի է դիտարկել որպես պարբերության ոճի մասնավոր դեպք:
 - **Աղյուսակի ոճը** ներառում է աղյուսակի ձևաչափի պարամետրերը՝ չափերը, եզրագծերի ձևը, գույնը և այլն:


Ուերի առկա հավաքածուն բերվում է մենյուի *Format* ենթամենյուի *Styles and Formatting* հրամանով կամ  գործիքի ընտրությամբ (նկ. 5.29ա): Նոր փաստաբույր ստեղծելիս այն ներառում է սովորական տեքստ, *Վերևազիր 1*, *Վերևազիր 2* և *Վերևազիր 3* ոճերը (որոնց դուք ծանոք եք 9-րդ դասարանի համապատասխան նույթից), իսկ առողջական ստեղծելիս՝ աղյուսակի օանօք:

Ուժերից օգտվելիս կարևոր է *Ուժերի ցուցակ* պատուհանը (նկ. 5.29ը), որը կարելի է բազել զորդիքների վահանակի (Style) զորդիքով:

Ոճերի ցուցակում յուրաքանչյուր անվանում գրված է տվյալ ոճով սահմանված ձևաչափով: Ոճի անվանումից աջ գրվում են ոճերի տիպերը: *Ms Word* տեքստային խմբագրում ոճի տիպը նշելիս կիրառվում են հետևյալ հատուկ նշանները:

- ¶ – պարբերությունների ոճերի համար,
 - a – պայմանականների ոճերի համար,

- – ցուցակների ոճերի համար,
- – աղյուսակների ոճերի համար:



ա) Styles and Formatting պատուհան

բ) Ոճերի ցուցակ

Նկ. 5.29.

Փաստարդում որևէ ոճ կիրառելու համար անհրաժեշտ է.

- նշել փաստարդի անհրաժեշտ տիրույթը,
- բացել *Styles and Formatting* պատուհանը,
- առաջարկվող ոճերից ընտրել անհրաժեշտը:


Դիտարկենք **նոր ոճ սրեղծելու** երկու տարրերակ:

Տարրերակ 1.

- բացել *Styles and Formatting* պատուհանը,
- ընտրել *New Style* կոճակը,
- բացված պատուհանի (նկ. 5.30) *Name* դաշտում տալ նոր ոճի անվանումը,
- *Style type* դաշտում ընտրել ոճի տիպը՝ *Paragraph* (պարբերության), *Character* (պայմանանշանի), *Table* (աղյուսակի) կամ *List* (ցուցակի),
- ընտրել *Format* կոճակը,
- բացված մենյուից (նկ. 5.31) ընտրել անհրաժեշտ հրամաններն ու սահմանել համապատասխան ձևաչափերը,
- սեղմել *OK* կոճակը:

Տարրերակ 2.

- նշել տերստի անհրաժեշտ տիրույթը,
- ընտրել *New Style* կոճակը,
- բացված պատուհանի (նկ. 5.30) *Name* դաշտում ներմուծել նոր ոճի անվանումը,
- սեղմել *OK* կոճակը:



Նկ. 5.30. Նոր ոճ ստեղծելու պայմանագիրը



Նկ. 5.31. Format մեջյուն

Խմբագրիչում պահպանված **ոճը փոփոխելու** համար անհրաժեշտ է.

- բացել *Styles and Formatting* պատուհանը,
- մկնիկի ցուցիչը տեղադրել փոփոխման ենթակա ոճի անվան վրա ու սեղմել աջ սեղմակը,
- բացված պատուհանում ընտրել *Modify* հրամանը,
- բացված *Modify Style* պատուհանի բաղադրիչների օգնությամբ կատարել անհրաժեշտ փոփոխություններն ու սեղմել *OK* կոճակը:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՍԱՆԱԼ

- ◆ *Shift ստեղնքը սեղմած վիճակում ոճների ցուցակը բացելիս քերվում է ոճների լրիվ ցանկը:*
- ◆ *Պահպանված ոճը հեռացնելու (ջնջելու) համար անհրաժեշտ է հեռացման ենթակա ոճի անվան վրա սեղմել մկնիկի աջ սեղմակն ու ընդունել Delete հրամանը:*



1. **Ի՞նչ է ոճը:**
2. **Ոճների ի՞նչ գիտակներ գիտեք:**
3. **Ոճների ստեղծման ի՞նչ գարբերակ գիտեք:**



Հարորակոր աշխատանք

5.5

Աշխատանք ոճերի հետ

Քայլ առ քայլ կապարեք հետևյալ գործողությունները.

1. **Մտեք Word տեքստային խմբագրիչի միջավայր և ներմուծեք սպորև բերված տեքստը.**

Գոյուրուն ունեն ալգորիթմի նկարագրման տարրեր եղանակներ: Ծանոթանանք ալգորիթմների ներկայացման հետևյալ երկու եղանակների՝ բառարանաձևային և գրաֆիկական:

Ալգորիթմի բառարանաձևային նկարագրությունը խոսակցական լեզվի տարրերի (մասնատությունների) և բանաձևերի միջոցով նկարագրվող ալգորիթմ է:

Ալգորիթմների գրաֆիկական ներկայացումը բառարանաձևային նկարագրության համեմատ ավելի հալար է և դիլորդական:


2. **Ներմուծված տեքստի առաջին պարբերության համար սահմանեք այսպիսի ձևաչափ. կարմիր գույն, գրառապեսակի 10 չափ, Bold չե, միջդպողային 1,5 հեռավորություն:**
3. **Երկրորդ պարբերության համար սահմանեք այսպիսի ձևաչափ. կամաչ գույն, գրառապեսակի 14 չափ, Italic չե, միջդպողային 2 հեռավորություն:**
4. **Երրորդ պարբերության համար սահմանեք այսպիսի ձևաչափ. կապույտ գույն, գրառապեսակի 12 չափ, Underline չե, միջդպողային 1 հեռավորություն:**
5. **A գործիքով բացեք Styles and Formatting պատուհանն ու մկնիկի ցուցիչը հաջորդաբար տեղադրելով պարբերություններից յուրաքանչյուրի վրա՝ պատուհանի Pick formatting to apply դաշտում հետևյալ համապատասխան ոճերին:**
6. **Մկնիկի ցուցիչը տեղադրելով երրորդ պարբերության որևէ մասում և ընդունեք առաջին պարբերության ոճը:**
7. **Փոխեք երրորդ պարբերության ոճը՝ մկնիկի ցուցիչը տեղադրելով ոճի անվան վրա և սեղմելով աջ սեղմակը:**
8. **Բացված պատուհանում ընդունեք Modify իրամանը:**
9. **Բացված Modify Style պատուհանի բաղադրիչների օգնությամբ կապարեք փոփոխություններն ու սեղմեք OK կոճակը:**
10. **Ընդունեք առաջին պարբերության ոճը, ապա՝ Modify իրամանը:**
11. **Բացված պատուհանի Name դաշտում ներմուծեք նոր ոճի AAA անվանումն ու սեղմեք OK կոճակը:**
12. **Մկնիկի ցուցիչը տեղադրելով երրորդ պարբերության որևէ մասում ու դրա համար սահմանեք AAA ոճը:**
13. **Ընդունեք AAA անվանումով ոճն ու սեղմեք մկնիկի աջ սեղմակը:**
14. **Բացված մեջուի Delete իրամանով ջնջեք AAA ոճը:**
15. **Աշխատանքն ավարտեք՝ օգտվելով պատուհանի փակման սեղմակից:**

§ 5.7 ԲԱՆԱԳԵՎԻ ՆԵՐՍՈՒԾՈՒՄ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Հաճախ տեքստային փաստաբորում անհրաժեշտ է լինում մաքեմատիկական բանաձևեր ներմուծել: Այդ նպատակով Microsoft Word տեքստային խմբագրիչն ունի հասուն ներդիր միջոց՝ **Microsoft Equation բանաձևերի խմբագրիչ**: Այն հնարավորություն է տալիս **բանաձևերի օրյեկտներ** ստեղծել, դրանք տեղադրել տեքստային փաստաբորում և, անհրաժեշտության դեպքում, խմբագրել:


Microsoft Equation խմբագրիչի բողարկման համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել տեքստային փաստաբորի այն մասում, որ անհրաժեշտ է բանաձև ներմուծել,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Object* հրամանը,
- բացված պատուհանի *Create New* ներդիր պատուհանում (նկ. 5.32) ընտրել *Microsoft Equation* հրամանը:



Նկ. 5.32. *Create New* ներդիր պատուհան

Բանաձևերի խմբագրիչի բողարկումից հետո բացվում է խմբագրման պատուհան՝ **մենյուի բողով** և **ղեկավարման վահանակով** (նկ. 5.33):




Նկ. 5.33. *Բանաձևի խմբագրելու վահանակ*

Բանաձև ներմուծելու համար անհրաժեշտ է խմբագրիչը բողարկել և բացված դաշտում ներմուծել անհրաժեշտ բանաձևը:

*Equation պատուհանում **բանաձևի բաղկացույթի տարրերի դառապեսակներն ու դրանց չփերը սահմանելու** համար անհրաժեշտ է.*


- ընտրել մենյուի տողի *Style* ենթամենյուի *Define* հրամանը,
- բացված *Styles* պատուհանի (նկ. 5.34) *Font* դաշտում ընտրել յուրաքանչյուր տարրի տառատեսակը, իսկ *Character Format* դաշտում՝ վերջինիս ձևը (*Bold*, *Italic*):



Նկ. 5.34. **Բանաձևի տարրերի դառապեսակներն ու դրանց չփերը սահմանելու պակուհան**

Բանաձևի տարրերի չափերը սահմանելու համար անհրաժեշտ է.

- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Spacing* հրամանը,
- բացված պատուհանում (նկ. 5.35) սահմանել բանաձևի անհրաժեշտ տարրի չափը:



Նկ. 5.35. **Բանաձևի տարրերի չափերը սահմանելու պակուհան**

Այժմ ծանոթանանք *Equation*-ի դեկավարման վահանակի տարրերին (Ակ. 5.36):

Համեմատման նշաններ	Բազմատուրության բացատամարտիչներ	Տողակերպի նշաններ	Օպերատորներ	Արագույն	Տրամադրասանական պայմանների	Տարրերի պայմանաշամաններ	Չունական փոփոռատորներ	Չունական մեծատառեր
$\leq \geq \approx$	$\Delta \Delta \cdot \cdot$	$\times \times \equiv$	$\pm \circ \otimes$	$\rightarrow \Rightarrow \downarrow$	$\cdot \cdot \forall \exists$	$\neq \cap \subset$	$\partial \in \ell$	$\lambda \omega \theta$
$() []$	$\frac{\cdot}{\cdot} \sqrt{\cdot}$	$\bullet \bullet$	$\Sigma \Sigma \circ$	$\int \circ \oint \circ$	$\square \square$	$\rightarrow \leftarrow$	$\prod \cup$	$\cdots \cdots \cdots$
Փակագիր	Կոորդինատներ պրոյացուստ	Կերլըն ստորև հիմքներներ	Գումարներ	Ինտեգրալներ	Ընդգծում վերևություն լուսականություն	Պրոյացումներ բազմության նշաններ	Սառիցներ	

Նկ. 5.36. *Equation*-ի դեկավարման վահանակ

Արդեն ներմուծված բանաձևը խմբագրելու համար անհրաժեշտ է թողարկել բանաձևերի խմբագրիչը՝ բանաձևի վրա մկնիկի ձախ սեղմակի կրկնակի սեղմում կատարելով:

Բանաձևի դաշտերում տեղաշարժվելու համար կարելի է օգտվել կորտորի դեկավարման $\leftarrow, \rightarrow, \uparrow, \downarrow$ և *Tab* ստեղծերից կամ մկնիկից:

Բանաձև ներմուծելու և խմբագրելու գործընթացը կարելի է ավարտել *Esc* ստեղծով կամ բանաձևի ներմուծման դաշտից դրւում մկնիկի ձախ սեղմակի սեղմումով:

Բանաձևի օրյեկտները, ինչպես բոլոր օբյեկտները, կարելի է **տեղափոխել**, **պատճենել**, **հեռացնել** *Cut*, *Copy* և *Paste* գործիքների օգնությամբ: Դրա համար նախ պետք է նշել բանաձևի այն տարրը, որի հետ անհրաժեշտ է աշխատել:

Բանաձևի դաշտը նշելու համար անհրաժեշտ է սեղմել *Ctrl* ստեղնն ու մկնիկի ցույցիչը պարփ (↑) տեսք ստանալուն պես այն տեղադրել անհրաժեշտ տարրի վրա և ձախ սեղմակի կրկնակի սեղմում կատարել: Տարրը կարելի է նշել նաև մկնիկի ձախ սեղմակով:

Բանաձևի նշված **դաշտը կարելի է ջնջել** *Delete* ստեղմով:

ՕԳՏԱԿԱՐ Է ԽՄԱՆԱԼ

- ◆ Քանի որ բանաձեռք ներմուծելիս բացականիշ սպեղնը չի գործում, ապա անհրաժեշտության դեպքում պետք է օգտվել բազմակենդերի և բացականիշերի կոճակից ու ընդունել այսպես առաջարկվող 5 փարբեր չափի բացականիշերից անհրաժեշտը:
- ◆ Բանաձեռքի խմբագրիչը կարելի է բողարկել նաև գործիքների վահանակի մեջ՝ գործիքով:
- ◆ Բանաձեռք ներմուծելիս հայկական այբուբեն օգտագործելու համար անհրաժեշտ է ընդունել մենյուի գողի *Style* ենթամենյուի *Text համանակը*:



1. Ի՞նչ հնարավորություններ է ընձեռում Microsoft Equation խմբագրիչը:
2. Microsoft Equation խմբագրիչի պակուհանի ի՞նչ բաղադրիչներ գիտեք:
3. Ի՞նչ կոճակներ են գեղադրված դեկավարման վահանակի վերին և ստորին շարերում:



Հարորակոր աշխատանք 5.6

Բանաձևի ներմուծում և խմբագրում

Տեքստային փաստաթորում ներմուծեք $y = \frac{(\sqrt{x-2}-3)^2}{5-x^3}$ բանաձևը:

Քայլ առ քայլ կարարեք հետևյալ գործողությունները.

1. **Մտեք Microsoft Word գրքափային խմբագրիչի միջավայր:**
2. **✓ գործիքով բողարկեք բանաձեռքի խմբագրիչը:**
3. **Բանաձև ներմուծելու դաշտում ներմուծեք $y =$ արդահայտությունը:**
4. **Ընդունեք դեկավարման վահանակի (Լուսուրակի գծեր և արմագներ) կոճակն ու ընդունեք շարլոնը:**
5. **Կողորակի համարիչ ներկայացնող արդահայտությունը ներմուծելու համար նախ ընդունեք (փակագծեր) կոճակը, ապա շարլոնը:**

6. **Փակագծերի ներսում ընդունեք (կոպորտավոր գծեր և արմագներ) կոճակը, ապա քառակուսի արմագրի շարլոնն ու ներմուծեք արմագրավակ $x-2$ արգահայտությունը:**
7. **Ընդունեք կուրսորի ղեկավարման \rightarrow սրեղնը, ապա ներմուծեք -3 :**
8. **Կրկին ընդունեք կուրսորի ղեկավարման \rightarrow սրեղնը, ապա (վերին և սպորին ինդեքսներ) կոճակը:**
9. **Ընդունեք վերին ինդեքս ներմուծելու շարլոնն ու ներմուծեք 2 , այսինքն՝ համարիչում բերված արգահայտության քառակուսին:**
10. **Մկնիկի ցուցիչով անցում կազմարեք հայդրարին:**
11. **Ներմուծեք $5-x$ արգահայտությունը:**
12. **Ընդունեք (վերին և սպորին ինդեքսներ) կոճակը, ապա վերին ինդեքս ներմուծելու շարլոնը:**
13. **Ներմուծեք վերին 3 ինդեքսը, այսինքն՝ x -ի խորանարդը:**
14. **Բանաձևերի ներմուծումն ավարտելու համար բանաձև ներմուծելու դաշտից դուրս՝ փաստարդի որևէ մասում, սեղմեք մկնիկի չախ սեղմակը:**
- Իսկ այժմ խմբագրեք (փոփոխեք) բանաձևն ու այն դարձրեք $y = \frac{(\sqrt{x+2}-3)^2}{2+x}$:
15. **Բանաձեխի վրա կազմարելով մկնիկի չախ սեղմակի կրկնակի սեղմում կրկին մկնեք բանաձեւերի խմբագրիչի միջավայր:**
16. **Մկնիկի ցուցիչով ընդունեք արմագրավակ արգահայտության փակ առկա մինուս (-) նշանը, Delete սպեկոն ջնջեք այն, ապա ներմուծեք պլյուս (+) նշանը:**
17. **Կոպորտավոր հայդրարում բերված արգահայտությունը նշելու համար սեղմեք $Ctrl$ սպեկոնն ու երր մկնիկի ցուցիչը սպանա պարի (\wedge) դեպք, այն դեղադրեք հայդրարի վրա և չախ սեղմակի կրկնակի սեղմում կարարեք:**
18. **Delete սպեկոնվ ջնջեք նշանը արգահայտությունը:**
19. **Զնշվածի փոխարեն ներմուծեք $2+x$ արգահայտությունը:**
20. **Ներմուծման գործընթացն ավարտելու համար բանաձև ներմուծելու դաշտից դուրս սեղմեք մկնիկի չախ սեղմակը:**

§ 5.8 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ ԵՎ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ:

ՏԵՔՍՏ «ՃԱՆԱՀՈՂ» ԾՐԱԳՐԵՐ

Առօրյայում հաճախ է անհրաժեշտ լինում օգտվելու տարբեր նշանակության բառարաններից՝ մի լեզվից մյուսը թարգմանելիս, բառի հոմանիշներ փնտրելիս, որևէ նեղ մասնագիտական տերմինի բացադրություն ստանալու նպատակով և այլն:

Առաջին բառարանները ստեղծվել են շումերների կողմից մոտ 5 հազար տարի առաջ, դրանք կավի վրա գրառված երկու սյուների բաժանված այլուսակներ էին: Այյուսակի մի մասում գրում էին բառի շումերերեն, իսկ մյուսում՝ այլ լեզվով տարբերակը: Ներկայում լայնորեն կիրառվող տպագիր բառարանները նույնպիս կառուցվածքով հիմնականում աղյուսակային բնույթ են կրում. ընդ որում՝ տարբեր նշանակության հազարավոր բառարաններ գոյություն ունեն, որոնցից յուրաքանչյուրը տասնյակ հազարավոր քառ է պարունակում: Հասկանալի է, որ նման բառարան-գրքերը բավական հաստափոր են, իսկ դրանցից օգտվելը՝ աշխատատար գործընթաց: Մյուս կողմից ժամանակակից աշխարհում տարբեր երկրների միջև առկա սերտ կապերը համարյա ամեն քայլափոխի ստիպում են բարգմանության առավել արդյունավետ միջոցներ փնտրել:

Թարգմանության համար ստեղծված համակարգչային միջոցները բարգմանում են ցանկացած ինֆորմացիա՝ գործնական բռնակցություն, մասնագիտական տերսութեր, տեխնիկական փաստաթղթեր, նամակներ և այլն: Թարգմանության համակարգչային միջոցները բազմազան են, արագ և հարմար, քայլ պետք է հիշել, որ չի կարելի դրանց լիովին վստահել:

Առկա բազմաթիվ համակարգչային միջոցներից լայնորեն կիրառվում են *Lingvo* բառարանն ու *Promt*, *Google*, *Systran*, *Babelfish* թարգմանիչները: Ընդ որում նշենք, որ *Lingvo*-ի հայ-անգլերեն ընթացիկ տարբերակը պարունակում է 9500 քառ, իսկ անգլերեն-հայերենը՝ 7700 քառ:

Ինտերնետում եղած **Էլեկտրոնային բառարանները** շատ հաճախ հայտնի տպագիր բառարանների պատճեններն են: Բառարանները կարող են լինել **թեմատիկ**, և, բնականաբար, նեղ մասնագիտական բնույթի:

Այժմ առավել հանգամանորեն ծանոքանանք համակարգչային թարգմանիչների աշխատանքին:

Ինտերնետում գործող բազմաթեզում **Էլեկտրոնային բառարանները** միջոցով կարելի է թարգմանել ներմուծված կամ փոխանակման բոլորի միջոցով պատճենված տեքստը:

Այս դասընթացի շրջանակներում կուսումնասիրնենք ինտերնետում վերջերս ներդրված www.translator.am թարգմանիչ կայքը, որը թույլ է տալիս արևելահայերեն-արևմտահայերեն-անգլերեն լեզվուներով թարգմանություններ իրականացնել, ինչպես նաև արևելահայերենով և արևմտահայերենով գրված տեքստերը սրբագրելու վերլուծել:

Թարգմանիչ ծրագիրը թողարկելիս էլեկտրոնային բերվում է ցանցային թարգմանություններ կատարելու համար նախատեսված գլխավոր աշխատանքային էջը (նկ. 5.37):



Նկ. 5.37. Translator.am թարգմանիչ կայքի գլխավոր էջ

Տեքստի թարգմանում

- թարգմանիչ կայքի գլխավոր էջում ընտրել *Տեքստի թարգմանում* հղումը,
- *Խարգմանիլող դիէքսլիք* դաշտ ներմուծել թարգմանման ենթակա տեքստը,
- սեղմել *Խարգմանիկ* կոճակը:

Այս քայլերի արդյունքում կատարված թարգմանությունը կարտածվի *Խարգմանիկ* դիէքսլիք պատուհանում:

Եթե նախապես չի ընտրվում ուղղությունը (որ լեզվից՝ որին), ապա թարգմանությունն իրականացվում է միայն հայերեն ու անգլերեն լեզուների միջև։ ուղղությունը որոշվում է ավտոմատ՝ կախված այն բանից, թե թարգմանման ենթակա տեքստը որ լեզվով է գրված։ Եթե անհրաժեշտ է **թարգմանության այլ հնարավոր գարքերակը բնակչութեան**՝ անզերեն-արևմտահայերեն, արևելահայերեն-արևմտահայերեն, արևմտահայերեն-արևելահայերեն կամ արևելահայերեն-անգլերեն, ապա թարգմանման ուղղությունը պետք է ընտրել *Հնարավոր գարք. ուղղությունը* մենյուից։ Կայքը բույլատրում է առանց լրացուցիչ (KDWIN և այլն) ծրագրերի օժանդակության հայերեն տեքստ ներմուծել։ այդ նպատակով պետք է գլխավոր պատուհանում ընտրել *Հայկերեն (Esc)* վերահսկիչ դաշտը կամ սեղմել *Esc* կոճակը։ Այս միջոցից կարելի է օգտվել կայքի այն էջերում, որտեղ հայերեն լեզվով տեքստ ներմուծելու անհրաժեշտություն կա։

Արևելահայերեն դիէքսլիքի սրագրում իրականացնելու

- սրագրման ենթակա տեքստը ներմուծել *Խարգմանիլող դիէքսլիք* դաշտ,
- սեղմել *Ուղղել* տառասխալները կոճակը։

Բառարանից օգտվելու համար անհրաժեշտ է.

- բարգմանիչ կայքի գլխավոր էջում ընտրել **Բառարան** հղումը,
- բարգմանման ենթակա բառը ներմուծել **Թարգմանվող դիքսիդ դաշտ**,
- սեղմել **Թարգմանիկ** կոճակը:

Արդյունքում կատարված բարգմանությունը կարտածվի **Թարգմանված դիքսիդ պատուհանում**:

Ի տարբերություն ցանցային այլ բառարանների՝ այս կայքի բառարանը **բացապուհան** է: **Բառարանային ռեժիմն** ավտոմատ միանում է, եթե տեքստ բարգմանելու աշխատատիրույթ որևէ բառ է ներմուծվում:

Translator.am բարգմանիչ կայքը նաև կարևոր լեզվական և իմաստային ինֆորմացիա է տրամադրում: Եթե նախադասությունը քերականական, իմաստային կամ կառուցվածքային սխալներ է պարունակում, ապա համակարգը դրանք ուղղելու վերաբերյալ որոշակի առաջարկներ է ներկայացնում:

Translator.am բարգմանիչ կայքը բույատրում է նաև **Նախադասություն վերլուծել**՝ պարզել նախադասությունը կազմող բառերի խոսքի մասային պատկանելությունը, քերականական հատկանիշները՝ դեմքը, թիվը, ժամանակը, ինչպես նև նախադասության մեջ բառերն իրար լրացնում և այլն:

Նախադասություն վերլուծելու համար անհրաժեշտ է.

- կայքի գլխավոր էջում ընտրել **Նախադասության վերլուծում** հղումը,
- **Նախադասություն** պատուհանում ներմուծել անհրաժեշտ նախադասությունը,
- ընտրել **Սկզբան** կոճակը:

Համակարգից ստեղծելուց ի վեր մարդն իր գիտելիքները պահպանելու համար սկսեց օգտվել նաև էլեկտրոնային կրիչներից, և քանի որ մինչ այդ գիտելիքների հիմնական կրիչը գիրքն էր, ապա դրանցում պահպանված ինֆորմացիան էլեկտրոնային փաստաթղթի վերածելու խնդիր դրվեց:

Այդ նպատակով ստեղծված ծրագրային համակարգերն աշխատում են հետևյալ սկզբունքով. սկաների կամ թվային տեսախցիկի օգնությամբ նախ ստանում են տպագրված տեքստի գրաֆիկական պատճեն, այնուհետև հատուկ ծրագրային միջոցների օգնությամբ համակարգիչը վերլուծում է էջի վրա տեքստի տեղաբաշխման կառուցվածքը և առանձնացնում դրա տարրերը՝ աղյուսակները, նկարները և այլն: Գրաֆիկական ֆայլի առանձնացված տեքստային հատվածները **պայմանաշաների ճանաչման օպտիկական համակարգ** (*OCR – Optical Character Recognition*) օգնությամբ հետազոտում ճանափոխվում են տեքստային պայմանաշանների հաջորդականության: Համակարգը փաստաթղթում առկա նկարներն ու գծագրերը թողնում է անփոփոխ, իսկ աղյուսակներում առկա տեքստը ճանաչելիս՝ փորձում է պահպանել աղյուսակի սկզբնական կառուցվածքը:

Տեքստ ճանաչող ժամանակակից պրոֆեսիոնալ ծրագրերը կարող են բազմազու, բարդ արխիվային փաստաթղթեր ճանաչել: Փաստաթղթի բարդությունից և տեսագրնան որակից կախված՝ փաստաթղթի ճանաչման գործընթացի տևողությունը կարող է տարրեր լինել:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍԻԱԼ

◆ **Օգտակար հղումներ**

<http://www.rubricon.com> – հանրագիրարաններ, բառարաններ, լրեղեկարուններ

<http://www.slovari.ru> – ռուսական բառարաններ

<http://dic.academic.ru> – ցանցային հանրագիրարաններ և բառարաններ

<http://dictionary.hayastan.com> – հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն բառարան

<http://www.nayiri.com/> – հայերեն լեզվի համացանցային բառարան

<http://envisionarmenia.com/etymology/> – հայերենի սլուցարանական բառարան

www.coe.am/glossary.php – անգլերեն-հայերեն բառարան

www.skizb.am/soft.html#Bararan – անգլերեն-հայերեն, ռուսերեն-հայերեն բառարան

hayeren.hayastan.com/bararan.html – լրարքի բառարանների հղումներ

<http://envisionarmenia.com/etymology/> – արևմտահայերեն-անգլերեն բառարան

◆ **Տերապ ճանաչող համակարգերից են FineReader, CuneiForm, Readiris Pro7, OmniPage11 ծրագրերը:**




1. **Ի՞նչ է էլեկտրոնային բարգմանիչը:**
2. **Ցանցային ի՞նչ բարգմանիչներ են չեզ հայտնի:**
3. **Թարգմանելուց բացի, ի՞նչ հնարավորություններ է ընձեռում Translator.am ցանցային բարգմանիչը:**
4. **Ինչի՞ն համար են գերազ ճանաչող ծրագրերը:**
5. **Ի՞նչ սկզբունքով են աշխատում գերազ ճանաչող ծրագրերը:**

§ 5.9 ԽՄՔՎԳԲԻՉԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՍՏԱԿԵՐԳ

Options պատուհանում խմբագրիչի միջավայրի կառավարման բազմաթիվ տարրեր են կենտրոնացված: Այս պատուհանը կարելի է բացել մենյոի տողի *Tools* ենթամենյոի *Tools* իրամանով: Ինչպես երևում է նկ. 5.38-ում բերված նկարից՝ *Options* պատուհանը մի շաբթ ներդիր պատուհաններ է ներառում: Անհրաժեշտ է նշել, որ *Word* խմբագրիչի տարրերակից կախված՝ *Options* պատուհանը տարբեր արտաքին տեսքեր կարող է ունենալ:

Ծանոթանանք *Options*-ի ներդիր պատուհաններին և դրանցում ներառված որոշ պարամետրերի:

Տեքստային խմբագրիչի աշխատանքի ընդհանուր պարամետրերը կարելի է սահմանել *General* ներդիր պատուհանում (նկ. 5.38): Պատուհանի *Measurement units* դաշտը հնարավորություն է տալիս ընտրել չափման միավորը՝ *Centimeters* – սանտիմետր, *Millimeters* – միլիմետր, *Inches* – (1յույմ), *Points* – (1/72 յույմ), *Picas* – (1/60 յույմ): Հորիզոնական և ուղղահայաց քանոնների սանդղակները համապատասխանեցվում են ընտրված միավորին:




Նկ. 5.38. General ներդիր պատուհան

Խմբագրիչի պատուհանում փաստաթղթի ցուցադրման պարամետրերը կարելի է սահմանել View ներդիր պատուհանում (նկ. 5.39): Խմբագրիչի պատուհանում վիճակի տողի առկայությունը պայմանավորվում է View ներդիր պատուհանի Show բաժնի Status bar դաշտում կատարված նշումով: Ներդիր պատուհանում ներառված դաշտերով է պայմանավորված նաև խմբագրիչի պատուհանում հորիզոնական (Horizontal scroll bar), ուղղահայաց (Vertical scroll bar) անցքավազքի գոտիների և ուղղահայաց քանոնի (Vertical ruler) առկայությունը:

Options-ի User Information ներդիր պատուհանում կարելի է օգտվողի մասին տեղեկություններ պահպանել. Name (անուն և ազգանուն), Initials (ինիցիալները), Mailing address (փոստային հասցեն):

Ֆայլը պահպանելու պարամետրերը կարելի է սահմանել Save, իսկ տպագրելու ռեժիմները՝ Print ներդիր պատուհաններում:

Տեքստի ուղղագրությունն ու քերականությունը ստուգելու պարամետրերը կարելի է սահմանել Spelling & Grammar ներդիր պատուհանում:



Նկ. 5.39. View ներդիր պայունակներ

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՍԱՆԵԱԼ

- ◆ Word պեքսվային խմբագրիչի միջավայրում այլ խմբագրիչների կողմից սպառնած և այլ ձեռքափառ ուժեղություն հետ աշխատելու համար անհրաժեշտ պարամետրերը կարելի է սահմանել Compatibility ներդիր պայունակում:
- ◆ 1 դյույմը հավասար է 2,5 սմ-ի:



1. *Տեքստային խմբագրիչի միջավայրի կառավարման հիմնական դաշտը ո՞ր պայունակում են սահմանվում:*
2. *Options պայունակի ի՞նչ ներդիր պայունակներ զիգուեք:*

6.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԴՅՈՒՏԱԿՆԵՐ



§ 6.1 MS EXCEL ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԴՅՈՒՏԱԿՆԵՐ ԿԻՐԱՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

Դասագրքի այս բաժնում շարունակելու ենք էլեկտրոնային աղյուսակի նորանոր հնարավորություններ ուսումնասիրել: Մինչ այդ համառոտ վերիիշնք Excel էլեկտրոնային աղյուսակից ծեղ հայտնի նյութը:

Հիշեցնենք, որ Excel-ի միջավայրում ստեղծվող ֆայլը կարող է բազմաթիվ աշխատանքային թերթեր (*Sheet1*, *Sheet2*, *Sheet3*, ...) ներառել, որոնք, այսպէս կոչված, աշխատանքային գիրք են կազմում: Էլեկտրոնային աղյուսակի աշխատանքային թերթը բաղկացած է լատինական այբուբենի տառերով նշված սյուներից և բնական բվերով համարակալված տողերից: Տողի և սյան հատման մասն անվանում են **քառորդ**: Յուրաքանչյուր քառորդը ունի իր եզակի հասցեն, որը կազմվում է այն սյան անունով ու սույնի համարով, որոնց հատման մասում գտնվում է տվյալ քառօրդը: Անհրաժեշտության դեպքում նույն տողի կամ սյան վրա գտնվող հարեւան քառօրդը հնարավոր է **քառօրդերի բյուն** կազմել, որի հասցեն կարելի է գրել կուրսորի հասցեի դաշտում՝ նշելով բլոկը կազմող վերին ծախս և ստորին աջ քառօրդի հասցեները՝ դրանք իրարից բաժանելով երկու կետով, օրինակ՝ *A2:D4*:

Աղյուսակի քառօրդում հիմնականում կարող են պահպանվել երեք տիպի տվյալներ՝ տեքստային, թվային և բանաձևային: Լուծվող խնդրից կախված՝ երբեմն անհրաժեշտ է լինում տվյալների ներկայացման տարրեր ձևաչափեր կիրառել:

Թիվը կազմվում է $0, 1, 2, \dots, 9$ թվանշաններով և կարող է տասնորդական կետ պարունակել, օրինակ՝ $238, 34.97, +56, -23.45$: Եթե թիվը կազմող թվանշանները շատ են և չեն տեղափոխվում քառօրդում, ապա կիրառվում է թվի ներկայացման էքսպոնենտային եղանակը: Այս դեպքում թիվը ներկայացվում է 10 -ից փոքր՝ **մանիգիս** կոչվող արտադրիչի տեսքով, բազմապատկած 10 -ի անհրաժեշտ աստիճանով, որը կոչվում է **կառուց**: Այստեղ 10 -ի աստիճանը ներկայացվում է E տառով, որին հաջորդում է աստիճանացույցին հավասար թիվը՝ իր նշանով: Օրինակ՝ 126.56 թիվը կարելի է ներկայացնել $1.2656E+2$ տեսքով, որտեղ 1.2656 թիվը բազմապատկած է 10 -ի քառակուսով:

Տրամադրություն տառուղի կամ ապարարցող (‘) սկսվող պայմանանշանների հաջորդականություն է: Ապարարցը դրվում է այն դեպքերում, երբ այդ հաջորդականությունը սկսվում է թվով, $+$ կամ $-$ պայմանանշաններից որևէ մեկով, կամ հավասարության ($=$) նշանով: Օրինակ՝ ‘ $326, =a+b, -4.25$ ’:


Բանաձևեր պետք է սկսվի հավասարման ($=$) նշանով և կարող է ներառել թվեր, քառօրդի անուններ, ֆունկցիաներ, հանրահաշվական և տրամարանական գործողությունների նշաններ: Բանաձևը չի կարող տեքստ պարունակել: Բանաձև ներմու-

ծելիս բջիջում արտացոլվում է ոչ թե ներմուծվածը, այլ այդ բանաձևով հաշվարկված արդյունքը: Բանաձևում ներառված տվյալները փոփոխելիս արդյունքի ավտոմատ վերահաշվարկ է կատարվում:

Աղյուսակում տվյալներ ներկայացնելիս կարելի է նաև հատուկ մասնագիտական ձևաչափեր օգտագործել՝ հաշվապահական հաշվարկներում լայնորեն կիրառվող դրամային ժևաչափ (օրինակ՝ 450\$), ժամանակային տվյալներ պահպանելու համար՝ ամսարկի ու ժամանակի ժևաչափ (օրինակ՝ 21.05.57, 10:12:11) և այլն:

Տվյալների ժևաչափ ընդունություն համար անհրաժեշտ է.

- ընտրել անհրաժեշտ բջիջը կամ բջիջները, ապա մենյուի *Format* ենթամենյուի *Cells* հրամանը,
- բացված *Format Cells* պատուհանում ընտրել *Number* ներդիրը (նկ. 6.1),
- պատուհանի *Category* դաշտում ընտրել անհրաժեշտ ձևաչափը,
- բայց ճևաչափը ընտրելու դեպքում *Decimal places* դաշտում ընտրել ստորակետից հետո պահանջվող նիշերի քանակը, իսկ *Negative numbers* դաշտում՝ բացասական թվերի ներկայացման ձևը:



Նկ. 6.1. Ժևաչափի ընդունակ պատուհան

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆՆԱԼ

- ♦ **Թվեր ներկայացնելիս էլեկտրոնային աղյուսակը քայլութիւնից պահպան կրպող հավասարեցնում է ըստ ազ, իսկ պերսոնալ ներկայացնելիս՝ ըստ չափ սահմանի:**



1. **Ի՞նչ է բջիջը:**
2. **Sվյալների ի՞նչ տիպեր գիտեք:**
3. **Ի՞նչ պայմանանշաններով է կազմվում թիվը:**
4. **Ալյուսակում թիվ ներկայացնելու ի՞նչ ձևեր գիտեք:**
5. **Պայմանանշանների ո՞ր հաջորդականությունն են գիրսի անկանում:**
6. **Տերպը ո՞ր դեպքում է սկսվում ապարարցով:**
7. **Ի՞նչ կարող է իր մեջ ներառել բանաձեռ:**

§ 6.2

ԲԶԻՋՆԵՐԻ ՀԱՍՑԵՎԱՎՈՐՈՒՄ: ՀԱՍՑԵՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ

Ելեկտրոնային աղյուսակներում բանաձևը կարող է բջիջների հասցեներ պարունակել, հետևաբար՝ բանաձևի հաշվման արդյունքը կախված է նաև այդ բջիջներում պահպանված թվերի արժեքներից: Այդ պատճառով բանաձև պարունակող բջիջի պարունակությունը պատճենելիս կամ տեղափոխելիս պետք է զգուշանալ այն սխալներից, որոնք կարող են առաջանալ բանաձևներում օգտագործված բջիջների **հարաբերական կամ բացարձակ** հասցեավորումից:

Ասվածը պարզաբանելու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակը: Դիցուք, $A2$ բջիջում գրված բանաձևում հղում կա $B3$ բջիջին (օրինակ՝ $=B3+5$), որը գտնվում է $A2$ բջիջից մեկ սյուն աջ և մեկ տող ներքև: Եթե $A2$ բջիջում գրված բանաձևը պատճենենք $D5$ բջիջում, ապա բանաձևում առկա հղումն արդեն ուղղված կլինի $E6$ բջիջին ($=E6+5$), որն արդեն $D5$ բջիջից է գտնվում մեկ սյուն աջ և մեկ տող ներքև: Այդ բանաձևը ցանկացած այլ բջիջում պատճենելիս նշված օրինաչափությունը կպահպանվի: Բջիջի նման հասցեավորումը կոչվում է **հարաբերական հասցեավորում**: Պատճենվող բանաձևում օգտագործված բջիջների հասցեներն այսպիսի հասցեավորման դեպքում ավտոմատ վերափոխվում են և «հարմարեցվում» նոր դիրքին: Հարաբերական հասցեավորման ժամանակ հասցեն գրվում է մեզ հայտնի եղանակով՝ նշելով այն սյան անունը և տողի համարը, որոնց հատման տեղում գտնվում է տվյալ բջիջը: Օրինակ՝ $C5$, $D4:E7$, $A5+C8$:

Բացարձակ հասցեավորման դեպքում պատճենելիս բանաձևում կիրառված բջիջների հասցեները չեն փոփոխվում: Նման հասցե գրելու համար անհրաժեշտ է դոլարի (\$): Աշան տեղադրել հասցեի այն բաղադրիչից առաջ, որը պետք է անփոփոխ մնա: Օրինակ՝ հասցեի $\$B\8 գրառումը նշանակում է, որ պատճենելիս չեն փոփոխվի ոչ սյունը և ոչ էլ տողը, $\$B8$ գրառման դեպքում չի փոփոխվի միայն սյունը, իսկ $B\$8$ գրառման դեպքում՝ տողը:

**Բանաձեր դիտափոխելիս դրանում օգտագործված
հասցեները չեն փոխվում:**

**Բանաձեր պատճենելիս այնպեղ առկա բացարձակ հասցեները չեն
փոխվում, իսկ հարաբերական հասցեները փոխվում են:**

Ինչպես արդեն գիտեք, բջիջում բանաձև գրելու համար անհրաժեշտ է սկսել հավասարման (=) նշանով: Բանաձև ներմուծելու ընթացքում, եթե որևէ բջիջ մկնիկով ընտրենք, տվյալ բջիջի հասցեն ավտոմատ կհայտնվի բանաձևում: Բանաձևի մեջ բջիջների բլոկի հասցե գրելու համար պետք է մկնիկի ձախ սեղմակով նշել անհրաժեշտ բջիջների բլոկը:

Ընթացիկ աշխատանքային թերթի վրա մեկ այլ թերթի բջիջների հասցեներ պարունակող բանաձևեր ներմուծելու համար նախ անհրաժեշտ է մկնիկի ցուցիչով ընտրել անհրաժեշտ աշխատանքային պիտակն ու ակտիվացնել տվյալ թերթը, ապա մկնիկով ընտրել անհրաժեշտ բջիջը: Կարելի է նաև ստեղնաշարի օգնությամբ ներմուծել աշխատանքային թերթի անունը, հետո! Նշանը, ապա անհրաժեշտ բջիջի հասցեն և սեղմել Enter ստեղնը: Օրինակ՝ Sheet1 աշխատանքային թերթի A5 և Sheet2 աշխատանքային թերթի B5 բջիջների պարունակությունների տարրերությունը հաշվող բանաձևը կունենա հետևյալ տեսքը.


Sheet1!A5 – Sheet2!B5

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆԱԼ

- ♦ **Բանաձևում հասցեավորման ձևը կարելի է փոխել նաև հերկյալ կերպ. Աշել բջիջի հասցեն, հաջորդաբար սեղմել F4 սպեղնն ու առաջարկվող դարրերակերպից ընդունակ անհրաժեշտը:**



2. **Բջիջների հասցեավորման ի՞նչ ձևեր կան Excel էլեկտրոնային աղյուսակում:**
3. **Ի՞նչ է հարաբերական հասցեավորումը:**
4. **Ի՞նչ է բացարձակ հասցեավորումը:**
5. **Ինչպես ն կարելի է ընթացիկ աշխատանքային թերթի վրա այլ թերթի բջիջների հասցեներ պարունակող բանաձևեր ներմուծել:**



Հարորակոր աշխատանք

6.1 Աշխատանքը բջիջների հետ

1. **Մղեր Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:**
2. **Ներմուծեր սպոռի թերթած դվյալները.**

	A	B	C
1	7	2	7
2	4	3	4
3	3	8	6
4	6	1	3

3. *D1 բջիջ ներմուծեք A1, B1 և C1 բջիջների գումարի հաշվման (=A1+B1+C1) բանաձևն ու սեղմնեք Enter սպեղմնը: Արդյունքում D1 բջիջում կապացվի 16 թիվը:*
4. *D1 բջիջում գրված բանաձեռ տարածեք D2-ից D4 բջիջների վրա: Գրա համար մասին ընդունեք D1 բջիջը, ապա մեջմիկ ցուցիչը ցնեղադրեք D1 բջիջի սրորդին աջ գագարում գլուխող բառակուու վրա և, եթե այն կընդունի խաչի գնեսք, մեջմիկի չափ սեղմակով ընդունեք D2-ից D4 բջիջները: Կապահար հետևյալ արդյունքը.*

	A	B	C	D
1	7	2	7	16
2	4	3	4	11
3	3	8	6	17
4	6	1	3	10

5. *Մեջմիկի ցուցիչը հաջորդաբար տեղադրեք D2-ից D4 բջիջների վրա և համոզվեք, որ ընդունած բջիջներից յուրաքանչյուրում գրված է վայլ գողի վրա ընթացիկ բջիջից չափ գլուխող երեք հարկան բջիջների գումարի հաշվման բանաձեռը: Պարզաբն այն է, որ D1 բջիջ ներմուծված բանաձեռում հարաբերական հասցեավորման սկզբունքը է օգլագործվել, և այդ բանաձևն այլ բջիջների վրա տարածելու արդյունքում հասցեները փոփոխվել են:*
6. *Զնջեք D1-ից D4 բջիջների պարունակուրյունը. մեջմիկի ցուցիչով նշեք D1-ից D4 բջիջներն ու սեղմնեք Delete սպեղմնը:*
7. *D1 բջիջ կրկին ներմուծեք = նշանը, ապա \$A\$1+\$B\$1+\$C\$1 բանաձևն ու սեղմնեք Enter սպեղմնը: D1 բջիջում կապահար 16 թիվը, բանի որ այս դեպքում ևս հաշվել ենք A1, B1 և C1 բջիջների գումարը:*
8. *D1 բջիջում գրված բանաձեռ տարածելով D2-ից D4 բջիջների վրա՝ D2-ից D4 բջիջներից յուրաքանչյուրում կապահար միևնույն 16 թիվը, բանի որ D1 բջիջ ներմուծված բանաձեռում այս անգամ կիրառվել է բացարձակ հասցեավորման սկզբունքը, և այդ բանաձևն այլ բջիջների վրա տարածելու արդյունքում դրանում օգլագործված բջիջների հասցեները չեն փոխվել:*
9. *Զնջեք D1-ից D4 բջիջների պարունակուրյունը:*
10. *D1 բջիջում հաշվեք դրանից չափ գլուխող երկու բջիջների պարունակուրյունների գումարը: Գրա համար D1 բջիջ ներմուծեք =B1+C1 բանաձևն ու սեղմնեք Enter սպեղմնը: D1 բջիջում կապահար 9 թիվը:*
11. (Copy) և (Paste) գործիքների օգնությամբ D1 բջիջի պարունակուրյունը պատճենակեցրեք D2 բջիջում: Արդյունքում D2 բջիջում կապահար 7 թիվը, այսինքն՝ D2-ից չափ գլուխող երկու բջիջների պարունակուրյունների գումարը ($B2+C2$):
12. (Cut) և (Paste) գործիքների օգնությամբ D1 բջիջի պարունակուրյունը պատճառակեցրեք D3 բջիջը: Արդյունքում D3 բջիջում կապահար D1-ին հավասար 9 թիվը: Այսինքն՝ B1 և C1 բջիջների պարունակուրյունների գումարի արժեքը:
13. *Ընդունեք A1-ից A4 բջիջներն ու մենայուի գողի Format ենթամենյուի Cells հրամանը:*

- 14.** *Բացված Format Cells պատուհանում ընդունեք Number և ըստ ապահովականի Category դաշտում Number չեւազգի:*
- 15.** *Սպորակելիքից հետո պահանջվող նիշերի քանակը սահմանելու համար Decimal places դաշտում ընդունեք 2 թիվը:*
- 16.** *Սեղմելով OK կոճակը՝ համոզվեք, որ A1-ից A4 քարտառում արտածված թվերը ներկայացված են սպորակելիքի հետո 2 նիշ ճշգույքամբ:*

	A	B	C	D	E
1	7.00	2	7		
2	4.00	3	4	7	
3	3.00	8	6	9	
4	6.00	1	3		

- 17.** *Փաստաթուղթը պահպանեք My Documents-ի փայլալ դասարանի համար հապելացված բրազիլակում Lab_10_6_1_* անունով, որպես *-ի փոխարեն պետք է ներմուծել աշակերդի դասամասպյանի համարը:*
- 18.** *Ավարտեք աշխատանքը էլեկտրոնային աղյուսակի հետ՝ օգտվելով պատուհանի փակման սեղմակից:*

§ 6.3 ԲԶԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ ՏԱԼՔ

Ինչպես արդեն գիտեք, քարտառություն «դիմելը» ոչ միայն բնութագրում է տվյալների գտնվելու տեղը, այլև հնարավորություն է տալիս հաշվարկներ կատարել դրանցում եղած տվյալների հետ: Հաշվարկներ կատարելիս հասցեներ կիրառելը հարմար է, եթե բանաձևում օգտագործվող քարտառությունը կիրառողի տեսադաշտում են: Մեծ չափերի աղյուսակների հետ աշխատելիս, եթե անհրաժեշտ է լինում հղում կատարել կիրառողի տեսադաշտից դուրս գտնվող քարտառությունը, հարմար է դրանց հասցեների փոխարեն հեշտությամբ հիշվող անվանումներ կիրառել: Նման անվանումը տառով սկսվող պայմանանշանների հաջորդականություն է, որը չի կարող բացատանիշ պարունակել: Այսպիսով՝ գրյուրյուն ունի հասցեավորման ևս մեկ եղանակ՝ անվանում տալ քարտառությունը բառերում:

Բջիջին կամ քարտառի բլոկին անվանում դադուն համար անհրաժեշտ է.

- ընտրել բջիջը կամ քարտառների բլոկը,
- կուրսորի հասցեի դաշտում (նկ. 6.2) ներմուծել ընտրված բջիջի կամ քարտառի բլոկի անվանումը,
- սեղմել Enter ստեղնը:

Նկ. 6.2-ում բերված օրինակում C5 քարտառը արվել է GUMAR անվանումը:

Բջիջին կամ քարտառի բլոկին անվանում կարելի է դադուն նաև հետևյալ կերպ:


- ընտրել բջիջը կամ քարտառների բլոկը,
- ընտրել մենյուի տողի Insert ենթամենյուի Name իրամանը,
- բացված ցուցակից ընտրել Define տարրերակը,

- բացված *Define Name* պատուհանի (նկ. 6.3) *Names in workbook* դաշտում ներնուծել քիշի կամ քիշների բլոկի անվանումը,
- սեղմել *Add* կոճակը, եթե այլ քիշի կամ քիշների բլոկի ևս անհրաժեշտ է անվանում տալ, հակառակ դեպքում սեղմել *OK* կոճակը:

Քիշին կամ քիշների բլոկին անվանում տալուց հետո աղյուսակի ցանկացած մասից կարելի է դիմել տրված անվան միջոցով: Քիշին կամ քիշների բլոկին անվան միջոցով կարելի է դիմել նույնիսկ այլ աշխատանքային թերթից: Ընդ որում՝ կարիք չկա նշել այն աշխատանքային թերթի անունը, որին պատկանում է տվյալ քիշը կամ քիշների բլոկը, քանի որ մեկ աշխատանքային գրքի շրջանակներում անվանումները չեն կարող կրկնվել՝ եզակի են:

GUMAR			
A	B	C	D
1			5
2			4
3			6
4			8
5		23	
6			

Նկ. 6.2. Քիշին անվանում դառնու օրինակ



Նկ. 6.3. *Define Name* պատուհան

Անվան միջոցով տվյալ քիշին կամ քիշների բլոկին անցում կապարելու համար անհրաժեշտ է.

- անվան պատուհանի աջ մասում տեղակայված ▼ սլաքով բացել անուն ունեցող քիշների ցուցակը,
- ընտրել անհրաժեշտ անվանումը:

Քիշին կամ քիշների բլոկին անվանումը ջնջելու համար անհրաժեշտ է.

- ընտրել քիշը կամ քիշների բլոկը,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Name* հրամանը,
- բացված ցուցակից ընտրել *Define* տարրերակը,
- բացված *Define Name* պատուհանում (նկ. 6.3) ընտրել անհրաժեշտ անվանումը,
- սեղմել *Delete*, ապա *OK* կոճակները:

Բանաձևերում քիշի հասցեի փոխարեն կարելի է գրել դրա անվանումը, օրինակ, եթե *B1* քիշն անվանվել է *GUMAR*, ապա *=B1+2* բանաձևի փոխարեն կարելի է գրել *=GUMAR+2* բանաձևը:

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱԿԱԼ

- ◆ **Քիշը կամ քիշների բլոկը կարող է մի բանի անվանում ունենալ: Բոլոր անվանումները պրվում են այնպէս, ինչպէս առաջին անունը:**
- ◆ **Քիշին անվանումը ջնջելուց հետո այդ անվանը հղում պարունակող քիշներում սիսալ կառաջանանալ:**



1. Ո՞ր դեպքում է նպագրակահարմար բջիջին կամ բջիջների բլոկին անվանում փառուի՞ն:
2. Բջիջին կամ բջիջների բլոկին անվանում փառուի՞ն նշեր գիրեք:
3. Հնարավո՞ր է արդյոք ջնջել բջիջին կամ բջիջների բլոկին պրված անվանումը:
4. Կարո՞ղ է արդյոք բջիջը կամ բջիջների բլոկը մի քանի անվանում ունենալ:
5. Կարելի՞ է արդյոք բջիջին կամ բջիջների բլոկին դիմել առանց հասցեի կիրառման: Եթե այո, ապա ինչպե՞ս:



Հարորարոր աշխատանք

6.2 Աշխատանք անվանումների հետ

1. **Մղեք Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:**
2. Sheet1 աշխատանքային թերքի աղյուսակում ներմուծեք սղորե բերված պվյալները.

	A	B	C	D	E
1	2	5	4	6	1

3. **Ընդունեք A1 բջիջը:**
4. **Կորսորի հասցեի դաշտում ներմուծեք A1 բջիջի Sim անվանումն ու սեղմեք Enter սղելղներ:**
5. **Մկնիկի ցուցիչով ընդունեք որևէ այլ բջիջ:**
6. **Անվան պարուհանի աջ մասում գեղակայված ▼ սլարով բացեք աշխատանքային զրքի բջիջների ցուցակը և այդ ցուցակից ընդունելով Sim անվանումը՝ գեղակիութեալք A1 բջիջ:**
7. **Աշխատանքային թերքերի պիտակների դաշտից ընդունեք Sheet2-ը և գրմակելով դրա որևէ բջիջում՝ աշխատանքային զրքի բջիջների ցուցակից կրկին ընդունեք Sim անվանումն ու գեղակիութեալք Sheet1 աշխատանքային թերքի A1 բջիջ:**
8. **Ընդունեք Insert / Name/ Define հրամանը:**
9. **Բացված Define Name պարուհանում ընդունեք A1 բջիջի Sim անվանումն ու նախ Delete, ապա OK կոճակներով ջնջեք այդ անվանումը:**
10. **Ընդունեք A1-ից E1 բջիջները:**
11. **Ընդունեք Insert / Name / Define հրամանը:**
12. **Բացված Define Name պարուհանի Names in workbook դաշտում ներմուծեք A1-ից E1 բջիջների բլոկի Sim1 անվանումն ու սեղմեք OK կոճակը:**

13. *F1 բջիջում A1-ից E1 բջիջների պարունակությունների գումարը հաշվելու համար նախ ընդունեք F1 բջիջը, ապա Σ գործիքն ու արգումենտի դաշտում ներմուծեք A1:E1: Բանաձեռքի դաշտում կհայդնալի $SUM(A1:E1)$ բանաձեռք:*
14. *Enter սպեցիալ սեղմենուոց հետո F1 դաշտում կհայդնալի A1-ից E1 բջիջների պարունակությունների գումարը՝ 18:*
15. *Կրկնեք 13 և 14 կերպում նկարագրված գործողությունները՝ այժմ $SUM(A1:E1)$ բանաձեռք գրելով A1-ից E1 բջիջների *Sum1* անվանումը: Համոզվեք, որ երկու դեպքում էլ սպազվում է նույն (18) արդյունքը:*
16. *Փաստարուղը պահպանեք My Documents-ի տվյալ դասարանի համար հայտկացված բղավանակում *Lab_10_6_2_** անունով, որտեղ *-ի փոխարեն պետք է ներմուծել աշակերդի դասամարդյանի համարը:*
17. *Ավարտեք աշխատանքն էլեկտրոնային աղյուսակի հետ՝ օգտվելով պարունակման Σ սեղմակից:*

§ 6.4 ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ

Բանաձեռք և ֆունկցիաներ կիրառելու հնարավորություններ MS Excel էլեկտրոնային աղյուսակի հիմնական հավկություններից է:

Ինչպես արդեն նշվել է, աղյուսակի բջիջները կարող են պարունակել ինչպես որոշակի արժեքներ, այնպես էլ բանաձևեր: Բանաձևերը կազմվում են թվերի, թվարանական և տրամաբանական գործողությունների նշանների, բջիջների հասցեների, դրանց անվանումների, ֆունկցիաների կանչերի միջոցով: Արտահայտություններում գործողությունների կատարման սահմանվում է թվարանության կանոնների համաձայն:

Աղյուսակ 6.1-ում բերվել են MS Excel-ում կիրառելի թվարանական գործողությունները՝ ըստ առաջնահերթության նվազման:

Գործողությունների կատարման սահմանված առաջնահերթությունը կարելի է փակագծերի օգնությամբ փոխել. այս դեպքում առաջնահերթությունը կտրվի փակագծերում ներառված արտահայտության արժեքի հաշվարկմանը:

MS Excel էլեկտրոնային աղյուսակով տրամաբանական ֆունկցիաներ կազմելիս պայմանական արտահայտություններում կիրառում են համեմատման հետևյալ նշանները. > (մեծ), < (փոքր), = (հավասար), >= (մեծ կամ հավասար), <= (փոքր կամ հավասար), <> (հավասար չէ):

Պայմանական նշանակումը	Նշանակությունը
-	Մեկտեղանի մինուս
%	Տոկոսի հաշվում
^	Աստիճանի բարձրացում
*, /	Բազմապատկում, բաժանում
+, -	Գումարում, հանում

Բաղադրյալ պայմանի մեջ մի քանի պարզ պայմաններ միավորելու համար օգտագործում են **OR (ԿՍՍ), AND (ԵՎ), NOT (ՈՉ)** տրամաբանական ֆունկցիաները: **AND (ԵՎ)** շաղկապով կազմված բաղադրյալ պայմանը **ճշմարիկ է (իրական է)**, եթե ճշմարիտ են պայմանը կազմող պարզ պայմանները, հակառակ դեպքում բաղադրյալ պայմանը **կեղծ է: OR (ԿՍՍ)** շաղկապով կազմված բաղադրյալ պայմանը կեղծ է, եթե կեղծ են բաղադրիչ բոլոր պարզ պայմանները, հակառակ դեպքում բաղադրյալ պայմանը ճշմարիտ է:

Օրինակ՝ $X \geq 3$ և միաժամանակ $X < 5$ պայմանները կարելի է միավորել $AND(X \geq 3; X < 5)$, իսկ $X < 3$ կամ $X > 7$ պայմանները՝ $OR(X < 3; X > 7)$ բաղադրյալ պայմանների մեջ:

Գործողություններից և պայմաններից բացի, բանաձևերը կարող են նաև ֆունկցիաներ պարունակել: MS Excel-ում տարրեր նշանակության 200-ից ավելի ֆունկցաներ են սահմանված: Վերիիշենք որոշ մաքեմատիկական ֆունկցիաների նշանակությունները: Հիշեցնենք, որ Excel-ում որպես ֆունկցիայի արգումենտ կարող է հանդես գալ թիվը, ֆունկցիան, բջիջի հասցեն և սրանցով կազմված ցանկացած արտահայտություն:

ABS(x) (բացարձակ արժեք) – որոշում է x արգումենտի բացարձակ արժեքը:

INT(x) (ամրող թիվ) – վերադարձնում է x արգումենտը չգերազանցող և դրան ամենամոտ ամրող թիվը:

SQRT(x) (քառակուի արմագ) – հաշվում է x արգումենտի քառակուսի արմագը:

ROUND(x, N) (գումարողական կերպից հետո N նիշ ճշգրտյամբ թվի մոդալոր արժեքի պատճում) – x արգումենտի մեջ տասնորդական կետից հետո առաջին N թվանշանները պահպանվում են, մնացածները՝ դեն նետվում: Ընդ որում, եթե կետից հետո եղած $N+1$ -րդ թվանշանը փոքր չէ 5-ից, ապա N -րդ թվանշանի արժեքը մեծացվում է մեկով, հակառակ դեպքում մնում է նույնը:

ROUNDDOWN(x, N) (մոդալորություն ներքեցից) – x արգումենտի տասնորդական կետից աջ $N+1$ -րդ դիրքից սկսած բոլոր թվանշանները դեն են նետվում:

ROUNDUP(x;N) (մոդալորություն վերևից) – x արգումենտի տասնորդական կետից աջ $N+1$ -րդ դիրքից սկսած բոլոր թվանշանները դեն են նետվում, իսկ N -րդ դիրքի թվանշանը մեծացվում է մեկով:

SUM(x₁, x₂, x₃, ... x_n) (գումար) – հաշվում է $x_1, x_2, x_3, \dots x_n$ արգումենտների գումարը:

PRODUCT(x₁, x₂, x₃, ... x_n) (արդադրյալ) – հաշվում է $x_1, x_2, x_3, \dots x_n$ արգումենտների արտադրյալը:

MAX(x₁, x₂, x₃, ... x_n) (մեծագույնի) – որոշում է $x_1, x_2, x_3, \dots x_n$ արգումենտներից մեծագույնի արժեքը:

$MIN(x_1, x_2, x_3, \dots x_n)$ (փոքրագույն) – որոշում է $x_1, x_2, x_3, \dots x_n$ արգումենտներից փոքրագույնի արժեքը:

$AVERAGE(x_1, x_2, x_3, \dots x_n)$ (միջին արժեք) – հաշվում է $x_1, x_2, x_3, \dots x_n$ արգումենտների միջին թվաբանական արժեքը, որը հավասար է $x_1, x_2, x_3, \dots x_n$ թվերի գումարին՝ բաժանած գումարելիների քանակի՝ ո՞-ի վրա:

Պարզ և բաղադրյալ պայմաններն օգտագործվում են **IF** ֆունկցիայի մեջ, որն ունի հետևյալ տեսքը.

IF (պայման; արդահայտություն_1; արդահայտություն_2)


Այս ֆունկցիան նախ ստուգում է փակագծերում ներառված պայմանը և, եթե այն ճշմարիտ է, հաշվում է **արդահայտություն_1**-ի, հակառակ դեպքում՝ **արդահայտություն_2** -ի արժեքը:

Օրինակ՝ $IF(AND(X>3; X\leq 5); 2; 3)$ տրամարանական ֆունկցիայի արժեքը հավասար կլինի 2-ի, եթե $X \in (3; 5]$ միջակայքին, հակառակ դեպքում՝ 3-ի:

$IF(OR(X>4; X<1); 2; -2)$ տրամարանական ֆունկցիայի արժեքը հավասար կլինի 2-ի, եթե X -ի արժեքը մեծ է 4-ից, կամ փոքր 1-ից, հակառակ դեպքում հավասար կլինի -2-ի:

IF ֆունկցիան ընտրելուց հետո բանաձևների ներմուծման տողում հայտնվում է ֆունկցիայի **IF** անունը՝ արգումենտների ցուցակը ներառող փակագծերով, ու Էլրանին թերվում է արգումենտների ներմուծման *Function Arguments* պատուհանը (նկ. 6.4):

Պատուհանի *Logical_test* դաշտ պետք է ներմուծել **IF** ֆունկցիայի պայմանը, *Value_if_true* դաշտ՝ արտահայտություն_1-ը, իսկ *Value_if_false* դաշտ՝ արտահայտություն_2-ը:



Նկ. 6.4. Տրամարանական **IF** ֆունկցիայի արգումենտների ներմուծման պատուհան

ՕԳՏԱԿԱՐ Ե ԲՍԱՆԱԼ

- ◆ **Բաղադրյալ պայմանը սպուզելու նպատակով գործողությունների կազմակերպության որոշակի առաջնահերթությունն է սահմանված. նախ կազմարվում են համեմատման գործողությունները, այնուհետև բացասաման NOT ֆունկցիաները, որից հետո արդյունքները միացվում են առկա AND և OR ֆունկցիաներով:**
- ◆ **Բերենք Excel-ում բանաձեռներ կազմելիս բույլ պրված հնարավոր սիստեմի դեպքում առավել հաճախ համդիպող մի բանի հաղորդագրություններ.**

Կոդը	Հնարավոր պատճառը
###	Սյան լայնությունը չի բավարարում արժեքը ցուցադրելու համար
#NAME?	Հղում բջիջի գոյություն չունեցող անվանը
#DIV/0!	Զրոյի վրա բաժանելու փորձ
#VALUE!	Սխալ արգումենտի կիրառում
#N/A	Արտահայտության արժեքի հաշվման համար պահանջվող նախնական տվյալների բացակայություն
#REF!	Արդեն հեռացված (չնշված) բջիջին դիմելու փորձ
#NUM!	Հաշվման ընթացքում առաջացած դժվարություններ, օրինակ՝ շատ մեծ կամ շատ փոքր թվերի հետ կապված հաշվարկ
#NULL!	Ընդհանուր կետեր չունեցող տիրույթների հասում




- Ի՞նչ է բանաձևը:
- Թվարկեք MS Excel-ում կիրառելի բվարանական գործողություններն ըստ դրանց իրականացման առաջնահերթության աճման:
- Ինչպես են կազմվում բաղադրյալ պայմանները:
- Excel-ում կիրառվող ի՞նչ մաքենատիկական ֆունկցիաներ գիտեք:
- Ի՞նչ արժեքներ կրնակնեն սպորեն բերված ֆունկցիաներն աղյուսակային հեղինյալ պայմանների համար.

	A	B	C	D
1	625	3.254578	5	
2	1225	4.786571	7	
3	-4.6	-5	4	

ա) $ABS(A3)$, $ABS(B1)$,
բ) $INT(B1)$, $INT(B2)$,
զ) $SQRT(A1)$, $SQRT(A2)$,
դ) $ROUND(B1;3)$, $ROUND(B2;2)$,

- ե) $ROUNDDOWN(B1;1)$, $ROUNDDOWN(B2;2)$,
զ) $ROUNDUP(B1;3)$, $ROUNDUP(B2;4)$,
ի) $SUM(C1:C3)$, $SUM(C1,C2,A3)$,
ը) $PRODUCT(C1:C3)$, $PRODUCT(C1,C2)$,
Ժ) $MAX(C1:C3)$, $MAX(A1:C3)$,
ի) $MIN(C1:C3)$, $MIN(A1:C3)$,
Դ) $AVERAGE(C1:C3)$, $AVERAGE(C1,C2)$:



Հարորակոր աշխարհանք 6.3 Մաքենատիկական ֆունկցիաներ

Քայլ առ քայլ իրականացրեք հեղինյալ գործողությունները

- Մտեք Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:
- Sheet1 աշխատանքային թերթի աղյուսակում ներմուծեք սպորեն բերված պայմանները.

	A	B	C	D
1	-5	4.25467	6	
2	5	5.5657	2	
3	6.25	36.1456789	8	

3. D1 բջիջում հաշվեք A1 բջիջում պահված թվի քացարձակ արժեքը: Դրա համար նախ ընդունեք D1 բջիջը, ապա **fx** կոճակի օգնությամբ ABS ֆունկցիան և սեղմեք OK կոճակը: Բացված պարուիհանի Number դաշտը ներմուծեք A1 և սեղմեք OK կոճակը:
4. Ընդունեք D2 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ INT ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
5. Որպես ֆունկցիայի արգումենտ ընդունեք B1 բջիջն ու սեղմելով OK կոճակը համոզվեք, որ D2 բջիջում պատճառ B1 բջիջում պահված թիվը չգերազանցող ամենամեծ ամրող թիվը՝ 4:
6. D3 բջիջում հաշվեք A3 բջիջում պահված թվի քառակուսի արժմաքը: Դրա համար նախ ընդունեք D3 բջիջը, ապա **fx** կոճակի օգնությամբ SQRT ֆունկցիան և սեղմեք OK կոճակը: Բացված պարուիհանի Number դաշտը ներմուծեք A3, ու սեղմեք OK կոճակը: Այժմ համոզվեք, որ D3-ում պատճառ $2,5 (\sqrt{6.25} = 2.5)$:
7. Ընդունեք E1 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ ընդունեք ROUND ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
8. Բացված պարուիհանի Number դաշտը ներմուծեք B1, իսկ Num_digits դաշտը՝ 3 թիվն ու սեղմելով OK կոճակը՝ E1 բջիջում պատճեք 4,255 թիվը, որը B1 բջիջում պահված թիվն է, միայն այսպես 3-րդ թվանշանը՝ 4-ը, մնածացված է մեկով, իսկ դրան հաջորդող թվանշաններն անպեսպես են:
9. Ընդունեք E2 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ ROUNDOWN ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
10. Բացված պարուիհանի Number դաշտը ներմուծեք B3, իսկ Num_digits դաշտը՝ 4 թիվն ու սեղմելով OK կոճակը՝ E2 բջիջում պատճեք 36.1456 թիվը, որը B3 բջիջում պահված թիվն է, միայն այսպես 4-րդ թվանշանին հաջորդող նիշերն անդեպես են:
11. Ընդունեք E3 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ ROUNDUP ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
12. Բացված պարուիհանի Number դաշտը ներմուծեք B2, իսկ Num_digits դաշտը՝ 2 թիվն ու սեղմելով OK կոճակը՝ E3 բջիջում պատճեք 5.57 թիվը, որը B2 բջիջում պահված թիվն է, միայն այսպես սկզբանակետից աջ 2-րդ դիրքից սկսած բոլոր թվանշաններն անդեպես են, իսկ 2-րդ դիրքի թվանշանը՝ 6-ը, մնածացվել է մեկով:
13. Ընդունեք F1 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ SUM ֆունկցիան և սեղմեք OK կոճակը:
14. Բացված պարուիհանի Number1 դաշտը ներմուծեք C1:C3 ու սեղմելով OK կոճակը՝ F1 բջիջում պատճեք C1-ից մինչև C3 բջիջների պարունակությունների գումարը՝ 16:
15. Ընդունեք F2 բջիջն ու **fx** կոճակի օգնությամբ՝ PRODUCT ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
16. Բացված պարուիհանի Number1 դաշտը ներմուծեք C1, Number2 դաշտը՝ C2 ու սեղմելով OK կոճակը՝ F2 բջիջում պատճեք C1 և C2 բջիջների պարունակությունների արդարյալը՝ 12:

- 17.** Ընդունակը F3 բջիջն ու կոճակի օգնությամբ MAX ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
- 18.** Բացված պատուհանի Number1 դաշտը ներմուծեք A1:C1 ու սեղմելով OK կոճակը՝ F3 բջիջում սպացեք A1-ից մինչև C1 եղած բջիջների պարունակություններից մեծագույնի արժեքը՝ 6:
- 19.** Ընդունակը G1 բջիջն ու կոճակի օգնությամբ MIN ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
- 20.** Բացված պատուհանի Number1 դաշտը ներմուծեք C1:C3 ու սեղմելով OK կոճակը՝ G1 բջիջում սպացեք C1-ից մինչև C3 եղած բջիջների պարունակություններից փոքրագույնի արժեքը՝ 2:
- 21.** Ընդունակը G2 բջիջն ու կոճակի օգնությամբ AVERAGE ֆունկցիան, ապա սեղմեք OK կոճակը:
- 22.** Բացված պատուհանի Number1 դաշտը ներմուծեք C1:C2 ու սեղմելով OK կոճակը՝ G2 բջիջում սպացեք C1 և C2 բջիջների պարունակությունների միջին թվայինականը՝ 4:
- 23.** Փաստարությունը պահպանեք My Documents-ի փայլա դասարանի համար հավելացված բորբագանակում Lab_10_6_3_* անունով, որինեղ *-ի փոխարեն պետք է ներմուծել աշակերտի դասամադյանի համարը:
- 24.** Ավարտեք աշխատանքն էլեկտրոնային աղյուսակի հետ՝ օգտվելով պատուհանի փակման սեղմակից:
Եթե նշված գործողությունները ճիշտ եք կարտարել, ապա աշխատանքի ավարտին էլեկտրոնային աղյուսակի համապատասխան բջիջները կը ներդունեն հետեւյալ արժեքները.


	A	B	C	D	E	F	G
1	-5	4.25467	6	5	4.255	16	2
2	5	5.5657	2	4	36.1456	12	4
3	6.25	36.1456789	8	2.5	5.57	6	

§ 6.5 ԴԻՎԳՐԱՑՄՆԵՐԸ MS EXCEL-ՈՒՄ

Թվային տվյալները առավել համոզիչ և դիտողական դարձնելու համար հաճախ դրանք ներկայացնում են գրաֆիկորեն՝ **դիագրամներով**: Դիագրամը մշտապես կապված է այն տվյալների հետ, որոնց հիման վրա կառուցված է. տվյալները փոփոխելիս դիագրամն անմիջապես փոխում է իր տեսքը: Դիագրամներն ակնառու կերպով ցոյց են տալիս տվյալների միջև եղած կապերը, որը մեծապես հեշտացնում է տվյալների վերլուծման ու համեմատման գործընթացը:

Տվյալները ներկայացնելու համար դիագրամների տարրեր տիպեր են նախատեսված: Տվյալների յուրաքանչյուր հավաքածուի համար ստեղծվող դիագրամի տիպի ճիշտ ընտրությունը շատ կարևոր է: Օրինակ՝ տարրեր մեծությունների համեմատությունն ակնառու դարձնելու նպատակով հարմար է օգտագործել, այսպես կոչված, **գծավոր** դիագրամները (նկ. 6.5ա): Ընդհանուրի մեջ բաղադրիչ մասերի չափարարինների արտացոլման համար կիրառում են **շղանաչի** դիագրամները (նկ. 6.5բ): Դի-

ազգամի տիպ է նաև **գրաֆիկը** (նկ. 6.5գ), որը կիրառում են, եթե անհրաժեշտ է տվյալների փոփոխությունը ցուցադրել ժամանակի հավասար ժամանակահատվածների համար: Գրաֆիկները հնարավորություն են տալիս սահուն գծով միացնել կետերը, ինչը բույլատրում է հետևելու մեծության փոփոխման ընթացքին:




Նկ. 6.5. Գիտագրամների տիպեր

Excel-ում դիագրամ կառուցելու համար օգտագործվում է «**Գիտագրամի վարպետ**» ծրագիրը, որը կարելի է բողարկել գործիքի ընտրմանք կամ մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Chart* հրամանով:

Դիագրամների կառուցման գործընթացը հիմնականում կարելի է բաժանել չորս փուլերի:

Առաջին փուլ՝ դիագրամի տիպի ընտրություն

- բողարկել «Դիագրամի վարպետ» ծրագիրը,
- ընտրել *Standard Types* (Ստանդարտ տիպեր) ներդիր պատուհանը (նկ. 6.6),
- բացված պատուհանի *Chart type* դաշտում ընտրել դիագրամի անհրաժեշտ տիպը, իսկ *Chart sub-type* դաշտում՝ ենթատիպը,
- հաջորդ փուլ անցնելու համար սեղմել *Next* կոճակը:



Նկ. 6.6. Գիտագրամի տիպի ընտրություն


Custom Types (Ոչ ստանդարտ տիպեր) ներդիր պատուհանից կարելի է պատրաստի ձևաչափով դիագրամի տիպ ընտրել: Վերջնական արդյունքի գնահատման համար կարելի է օգտվել *Press and Hold to View Sample* կոճակից:

Երրորդ փուլ՝ դիագրամների ընդունություն:

Եթե դիագրամի կառուցման համար անհրաժեշտ տվյալները մեկ միասնական ուղղանկյուն տիրույթ են կազմում, ապա այդ տիրույթը հարմար է ընտրել *Data Range* (Տվյալների տիրույթ) ներդիր պատուհանի օգնությամբ, հակառակ դեպքում տվյալները կարելի է ընտրել *Series* պատուհանի օգնությամբ:

Եթե դիագրամի կառուցման համար անհրաժեշտ տվյալների տիրույթն ընտրված է առաջին փուլից առաջ, ապա նախնական դիտման պատուհանում կհայտնվի դիագրամի նախնական նեսքը (նկ. 6.7):

Երրորդ փուլ անցնելու համար կրկին պետք է ընտրել *Next* կոճակը:



Նկ. 6.7. Դիագրամում արդացողված դիագրամների ընդունություն

Երրորդ փուլ՝ դիագրամի բաղադրիչների չեսկերպություն:


Այս փուլում անհրաժեշտ է ձևակերպել դիագրամի հետևյալ 6 բաղադրիչները (նկ. 6.8):

- *Titles* – թույլատրում է դիագրամին և առանցքներին անվանումներ տալ,
- *Axes* – թույլատրում է միացնել կամ անջատել առանցքների գծանշման ռեժիմները,

- *Gridlines* – թույլատրում է ցուցադրել կամ չցուցադրել առանցքներին զուգահեռ ցանցի գծերը,
- *Legend* – թույլատրում է կարճ տեղեկատվություն արտածել դիագրամի մասին,
- *Data Labels* – թույլատրում է դիագրամի տարբեր բաղադրիչների վրա մակագրություններ կատարել,
- *Data Table* – հնարավորություն է տալս դիագրամի հետ համատեղ ցուցադրել դիագրամի կառուցման ընթացքում օգտագործված տվյալները:

Դիագրամի տեսքից կախված՝ վերը նշված որոշ բաղադրիչներ կարող են բացակայել:


Չորրորդ փուլ անցնելու համար կրկին պետք է օգտվել *Next* կոճակից:



Նկ. 6.8. Դիագրամի դասընթացում

Չորրորդ փուլ. դիագրամի դեղադրման պիրույժի ընդունում:

Դիագրամը նոր աշխատանքային թերթում տեղադրելու համար անհրաժեշտ է ընտրել բացված պատուհանի (նկ. 6.9) *As new sheet*, իսկ տվյալների թերթում տեղադրելու համար՝ *As object in* տարրերակը: Դիագրամի կառուցման և տեղադրման գործընթացն ավարտվում է *Finish* կոճակի ընտրմամբ:



Նկ. 6.9. Դիագրամի դեղադրման պիրույժի ընդունում

Դիագրամը կազմող գծերի գույնն ու չեղ խմբագրելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել կառուցված դիագրամի նկարագրության (*Legend* բաղադրիչ) վրա ու սեղմել ձախ սեղմակը,
- մկնիկի ցուցիչը նկարագրության դաշտում տեղադրել դիագրամի խմբագրման ենթակա գծի վրա ու սեղմել ձախ սեղմակը,

- սեղմել մկնիկի աջ սեղմակն ու բացված ենթատեքստային մենյուի մեջ ընտրել առաջարկվող հետևյալ տարրերակներից անհրաժեշտը.
 - *Format Legend* – բույլատրում է խմբագրել *Legend*-ի գծերի գույնն ու ձևը,
 - *Clear* – ջնջել ընտրված գիծը:

Դիագրամի որևէ օրյեկտ (անունը, նկարագրությունը, առանցքը, կառուցման տիրույթը) **փոփոխելու** համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել դիագրամի տեղաշարժման ենթակա օրյեկտի վրա ու սեղմել ձախ սեղմակը,
- ցուցիչը սպիտակ սլաքի տեսք ընդունելուն պես օրյեկտը ձախ սեղմակով տեղաշարժել անհրաժեշտ ուղղությամբ,
- բաց բողնել սեղմակը:

Դիագրամի որևէ օրյեկտի չափերը փոփոխելու նպատակով անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել դիագրամի այն օրյեկտի վրա, որի չափերը պետք է փոփոխել ու սեղմել ձախ սեղմակը,
- մկնիկի ցուցիչը տեղադրել օրյեկտը շրջափակող քառակուսի նշիչի վրա և, եթք ցուցիչը երկողմ սլաքի տեսք կընդունի, ձախ սեղմակով փոփոխել օրյեկտի չափերը,
- բաց բողնել սեղմակը:

Դիագրամի որևէ օրյեկտի չեաչափը փոփոխելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի աջ սեղմակով ընտրել դիագրամի այն օրյեկտը, որի ձևաչափը պետք է փոփոխել,
- բացված ենթատեքստային մենյուից ընտրել ձևաչափ սահմանելու հրամանը:

Դիագրամի օգնությամբ աղյուսակի գովազները փոփոխելու համար անհրաժեշտ է.

- մկնիկի ցուցիչը տեղադրել դիագրամի՝ փոփոխման ենթակա գծի վրա ու սեղմել ձախ սեղմակը,
- մկնիկի ցուցիչը տեղադրել նշված գծի անհրաժեշտ քառակուսի նշիչի վրա ու սեղմել ձախ սեղմակը,
- եթք մկնիկի ցուցիչը կընդունի երկողմ սլաքի տեսք՝ ձախ սեղմակով տեղաշարժել ընտրված նշիչը,
- բաց բողնել սեղմակը:

Մկնիկի սեղմակը բաց բողնելուն պես, դիագրամում կատարված փոփոխություններին համապատասխան, փոփոխություններ կկատարվեն նաև համապատասխան աղյուսակում:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍԱՆԻ

- ♦ **Դիագրամի վրա գներադավանելու համար պետք է դիագրամի վրա սեղմել մկնիկի չափ սեղմակը, ապա բանաձեռքի դողովում ներմուծել անհրաժեշտ գներադավ ու սեղմել *Enter* սպեհնը:**
- ♦ **Դիագրամի իմքագրման ընթացքում սիստեմամբ ջնջված օրյեկտը կարելի է նորից վերականգնել *Ctrl* ու չ սպեհների համարել սեղմումով:**



1. Քերեք առօրյայում ծագող այնպիսի խնդիրների օրինակներ, որոնցում դիագրամների կիրառումն օգտակար կլիներ:
2. Դիագրամների կառուցման քանի՞ փուլ գիտեք: Ո՞րևէ յուրաքանչյուր փուլի հիմնական նշանակությունը:
3. Դիագրամի ի՞նչ օբյեկտներ գիտեք:
4. Դիագրամի օգնությամբ ինչպես՞ սկզբանական համապատասխան աղյուսակի պայմանները:
5. Կարելի՞ է արդյոք աղյուսակում գովազներ փոփոխելով փոփոխելով համապատասխան դիագրամի գեսքը:



Հարորակոր աշխատանք

6.4

$y=ax^2+bx+c$ ֆունկցիայի արժեքների աղյուսակի և գրաֆիկի կառուցում

Այս աշխատանքի ընթացքում նախարեւակած է կառուցել և ուսումնասիրել $y=ax^2+bx+c$ ֆունկցիայի գրաֆիկը՝ $a=5$, $b=1$ և $c=1$ գործակիցների ու x արգումենտի $[-5;5]$ միջակայքի այն արժեքների համար, որոնք կարացվեն 1 քայլով:


Քայլ առ քայլ կարարեք հետևյալ գործողությունները.

1. Մտեք Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:
2. $A1, B1$ և $C1$ քայլներ ներմուծեք համապատասխանարար $5, 1$ և 1 թվերը, իսկ $E1$ դաշտ՝ $y = ax^2 + bx + c$ գրառումը:
3. $D2:D12$ քայլներ ներմուծեք -5 -ից 5 մինչև 5 արժեքները. դրա համար $D2$ և $D3$ քայլներ ներմուծեք համապատասխանարար -5 և -4 թվերը, նշեք $D2$ և $D3$ քայլներն ու մենիկի չախ սեղմակով գարածեք $D4$ -ից $D12$ քայլների վրա:
4. Տրված բանաձևով ֆունկցիայի արժեքները $E2:E12$ քայլներում հաշվելու համար x արգումենտի արժեքները պես է վերցնել $D2:D12$, իսկ $a\cdot h$, $b\cdot h$ և $c\cdot h$ արժեքները՝ $A1, B1$ և $C1$ քայլներից, ընդ որում պես է վերցնել $A1, B1$ և $C1$ քայլների բացառչակ հասցեները՝ $\$A\$1, \$B\1 և $\$C\1 : Այժմ $E2$ քայլ ներմուծեք $=\$A\$1*D2^2+ \$B\$1*D2+ \$C\1 բանաձևն ու այն գարածելով $E3:E12$ քայլների վրա՝ սրացեք հետևյալ աղյուսակը.


	A	B	C	D	E
1	5	1	1		$y=ax^2+bx+c$
2				-5	121
3				-4	77
4				-3	43
5				-2	19
6				-1	5
7				0	1
8				1	7
9				2	23
10				3	49
11				4	85
12				5	131

5. Նշեք $D1:E12$ քայլներն ու գործիքի ընկրտամբ բողարկեք «Դիագրամի վարպետ» ծրագիրը:

6. Աշխաղանքի առաջին փուլում Chart type դաշտում ընպրեք դիագրամի Line տիպը, Chart sub-type դաշտում Line ենթատիպն ու սեղմեք Next կոճակը:
7. Քանի որ ճախապես նշել էիր գվյալների բլոկը՝ երկրորդ փուլում անելիք չունեք: Next կոճակի ընդունամբ անցեք հաջորդ փուլ:
8. Երրորդ փուլում Titles ներդիր պակուհանի Chart title դաշտ ներմուծեք դիագրամի $y = ax^2 + bx + c$ անվանումը, Category (X) axis և Value (Y) axis դաշտերում առանցքների x ու y անվանումներն ու Next կոճակի ընդունամբ անցեք հաջորդ՝ չորրորդ փուլ:
9. Դիագրամը գվյալների հետ նոյն աշխաղանքային թերում գեղավորելու համար չորրորդ փուլում ընպրեք As object in գարքերակն ու սեղմեք Finish կոճակը:
- Եթե ամեն ինչ ճիշդ եք կարարել, ապա կունենաք $y = 5x^2 + x + 1$ ֆունկցիայի հենց գրաֆիկը.



10. A1 բջիջ ներմուծած 5 բվի փոխարեն -5 բիւլը ներմուծելիս գրաֆիկը կսպանա այլ գույքը.



11. Փոփոխեք A1, B1 և C1 բջիջներում պահպաժ a , b և c պարամետրերի արժեքներն ու հեղինեք, թե ինչպես դա կանդրադառն համապատասխան գրաֆիկների վրա:
12. Փաստաբուղը պահպանեք My Documents-ի գվյալ դասարանի համար հաղեցված թրապանակում Lab_10_6_4_* անունով, որտեղ *-ի փոխարեն պետք է ներմուծել աշակերտի դասամասդաշտի համարը:
13. Ավարտեք աշխաղանքն էլեկտրոնային աղյուսակի հետ՝ օգտվելով պակուհանի փակման սեղմակից:

§ 6.6 ԹՎԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Այս դասընթացի շրջանակներում աշխատելու ենք թվերի **միաչափ (պող)** կամ **սյուն** և **երկչափ (մաղրից)** զանգվածների հետ:

Թվային զանգվածն ուղղանկյուն խմբի մեջ միավորված թվերի հավաքածուն է: MS Excel-ի համարյա ցանկացած աղյուսակում ցանկության դեպքում կարելի է մեկ կամ մի քանի նման զանգվածներ գտնել:

n տող և *m* սյուն պարունակող *nxm* չափի մատրիցը աղյուսակ է, որը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$A = \begin{pmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1m} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} & a_{n2} & \dots & a_{nm} \end{pmatrix}$$

Մատրիցի տարրը թիվ է, որը տեղակայված է աղյուսակի *i*-րդ տողի և *j*-րդ սյան հատման մասում: Եթե մատրիցի տողերի և սյուների քանակները հավասար են (*nxn*), ապա մատրիցն անվանում են քառակուսային: Քառակուսային մատրիցների համար սահմանվում են գլխավոր և օժանդակ անկյունազդերի հասկացությունները: Գլխավոր անկյունագիծը մատրիցի վերին ձախ անկյունից դեպի ստորին աջ անկյունն իջնող անկյունագիծն է: Օժանդակ անկյունագիծը մատրիցի վերին աջ անկյունից դեպի ստորին ձախ անկյունն իջնող անկյունագիծն է:

nxm չափի երկու մատրիցների գումարի արդյունքում ստացվում է *nxm* չափի մատրից, որի *i*-րդ տողի *j*-րդ սյունում տեղակայված անդամը հավասար է մատրիցների *i*-րդ տողի և *j*-րդ սյան հատման մասերում գտնվող համապատասխան տարրերի գումարին՝ $c_{ij} = a_{ij} + b_{ij}$:

$$\begin{array}{c} A \\[10pt] \begin{pmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1m} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} & a_{n2} & \dots & a_{nm} \end{pmatrix} \end{array} + \begin{array}{c} B \\[10pt] \begin{pmatrix} b_{11} & b_{12} & \dots & b_{1m} \\ b_{21} & b_{22} & \dots & b_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ b_{n1} & b_{n2} & \dots & b_{nm} \end{pmatrix} \end{array} = \begin{array}{c} C \\[10pt] \begin{pmatrix} a_{11} + b_{11} & a_{12} + b_{12} & \dots & a_{1m} + b_{1m} \\ a_{21} + b_{21} & a_{22} + b_{22} & \dots & a_{2m} + b_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} + b_{n1} & a_{n2} + b_{n2} & \dots & a_{nm} + b_{nm} \end{pmatrix} \end{array}$$

Դիցուք, տրված են *nxm* և *nxp* չափերի *A* ու *B* մատրիցները՝

$$A = \begin{pmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1m} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} & a_{n2} & \dots & a_{nm} \end{pmatrix}, \quad B = \begin{pmatrix} b_{11} & b_{12} & \dots & b_{1p} \\ b_{21} & b_{22} & \dots & b_{2p} \\ \dots & \dots & \dots & \dots \\ b_{m1} & b_{m2} & \dots & b_{mp} \end{pmatrix}$$

A և *B* մատրիցների **արդյունքային** արդյունքում ստացվում է *nxp* չափի *C* մատրից, որի *i*-րդ տողի և *j*-րդ սյան հատման մասում գտնվող c_{ij} տարրը հավասար է *A* մատրիցի *i*-րդ տողի և *B* մատրիցի *j*-րդ սյան համապատասխան տարրերի արտադրյալների գումարին.

$$c_{ij} = a_{i1}b_{1j} + a_{i2}b_{2j} + \dots + a_{im}b_{mj} \quad (i=1, 2, \dots, n; j=1, 2, \dots, p);$$

Սատրիցը, որի գլխավոր անկյունազգի տարրերն ունեն 1 արժեք, իսկ մնացած տարրերը հավասար են 0-ի՝ անվանում են **միավոր** մատրից.

$$E = \begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{pmatrix}$$

Հակադարձ եմ անվանում այն A^{-1} մատրիցը, որի և եղակետային A մատրիցի բազմապատկման արդյունքում ստացվում է միավոր (E) մատրից.

$$A^{-1} \cdot A = A \cdot A^{-1} = E$$

Դիցուք, տրված է հետևյալ հանրահաշվական գծային հավասարումների համակարգը.

$$\begin{cases} a_{11}x_1 + a_{12}x_2 + \dots + a_{1n}x_n = b_1 \\ a_{21}x_1 + a_{22}x_2 + \dots + a_{2n}x_n = b_2 \\ \dots \\ a_{n1}x_1 + a_{n2}x_2 + \dots + a_{nn}x_n = b_n \end{cases}$$

Այս համակարգը կարելի է ներկայացնել $Ax = b$ տեսքով, որտեղ գործակիցների A մատրիցը, ազատ անդամների b և անհայտների x վեկտորներն ունեն հետևյալ տեսքը.

$$A = \begin{pmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1n} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2n} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} & a_{n2} & \dots & a_{nn} \end{pmatrix}, \quad b = \begin{pmatrix} b_1 \\ b_2 \\ \dots \\ b_n \end{pmatrix}, \quad x = \begin{pmatrix} x_1 \\ x_2 \\ \dots \\ x_n \end{pmatrix}$$

Ծանոթանանք գծային հավասարումների համակարգի լուծման (անհայտ մեծությունների որոշման) երկու մեթոդների հետ, որոնք իրենց կիրառումն են գտել *MS Excel*-ում:

Հակադարձ մապրիցի մեթոդ հավասարումների համակարգի անհայտները հաշվում են $x = A^{-1}b$ բանաձևով, որտեղ A^{-1} -ը A մատրիցի հակադարձ մատրիցն է, x -ը անհայտ մեծությունների վեկտորը, b -ն՝ ազատ անդամների վեկտորը:

Կրամմերի մեթոդ հավասարումների համակարգի անհայտները հաշվում են հետևյալ բանաձևով.

$$x_i = \frac{\Delta i}{\Delta}, \quad i=1, \dots, n$$

Որտեղ Δ -ն A մատրիցի որոշիչն է, իսկ Δi -ն այն մատրիցի **որոշիչը**, որը ստացվում է A մատրիցի i -րդ սյան փոխարեն գրելով b վեկտորը:

1 x 1 չափի մատրիցի որոշիչ է հանդիսանում այդ մատրիցի միակ տարրը.

$$\Delta = |\alpha_{11}| = \alpha_{11}:$$

2×2 չափի մատրիցի համար որոշիչը հաշվում է հետևյալ կերպ.

$$\Delta = \begin{vmatrix} \alpha_{11} & \alpha_{12} \\ \alpha_{21} & \alpha_{22} \end{vmatrix} = \alpha_{11}\alpha_{22} - \alpha_{12}\alpha_{21} :$$

ՕԳՏԱԿԱՐ Ե ԲՍԱՆԱԼ

- ◆ *A և B մագրիցների արդադրյալը հնարակոր է հաշվել միայն այն դեպքում, եթե A մագրիցի սյուների քանակը հավասար է B մագրիցի բողերի քանակին:*



1. *Ի՞նչ է թվային զանգվածը:*
2. *Ինչպիսի զանգվածներ են չեզ հայտնի:*
3. *Ո՞ր մագրիցն են անվանում քառակուսային:*
4. *Ո՞ր մագրիցն են անվանում միակոր:*
5. *Ի՞նչ է հակադարձ մագրիցը:*
6. *Ms Excel-ում գծային հանրահաշվական հավասարումների համակարգերի լուծման ի՞նչ եղանակներ գիտեք:*



Հարորակոր աշխատանք 6.5

Թվարանական գործողություններ մագրիցների հետ

Այս աշխատանքի ընթացքում նախապեսված է հաշվել $(A+2\cdot B)\cdot B$ արդահայտության արժեքը, որպես $A = \begin{pmatrix} 4 & 5 & -2 \\ 3 & -1 & 0 \\ 4 & 2 & 7 \end{pmatrix}$, $B = \begin{pmatrix} 2 & 1 & -1 \\ 0 & 1 & 3 \\ 5 & 7 & 3 \end{pmatrix}$: **Պահանջվող հաշվարկը կարող լու նպարակով քայլ առ քայլ իրազործեր հեղինյալը.**

1. *Մտեք Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:*
2. *Աղյուսակի A1:C3 և E1:G3 բջիջներ ներմուծեք 3×3 չափի A և B մագրիցների դարրերի արժեքները.*

	A	B	C	D	E	F	G
1	4	5	-2		2	1	-1
2	3	-1	0		0	1	3
3	4	2	7		5	7	3


3. *Ու բջիջում հաշվեր B մագրիցի առաջին բողի առաջին բարրի E1-ում պահպան թվի կրկնապարիկն ու դա բարածելով II:K3 բջիջների վրա՝ սպացեք $2\cdot B$ արդահայտության արժեքը.*

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K
1	4	5	-2		2	1	-1		4	2	-2
2	3	-1	0		0	1	3		0	2	6
3	4	2	7		5	7	3		10	14	6

4. A5:C7 բջիջնկում հաշվեք A (A1:C3) և 2·B (I1:K3) մագրիցների գումարը. լրացնելու համար նախ A5 բջիջում հաշվեք A1+I1 գումարը, ապա սպազված արդյունքը պարածեք A5:C7 բջիջների վրա.

.	A	B	C	D
5	8	7	-4	
6	3	1	6	
7	14	16	13	

5. A+2·B և B մագրիցների արդյունքը հաշվելու համար Աշեք E5:G7 բջիջները:
6. **Fix** գործիքով բացեք Insert Function պարուհան ու Or select a category լաշտում ընկած մաթեմատիկական ֆունկցիաների (Math & Trig) խումբը, ապա Select a function լաշտում մագրիցների բազմապարկման համար նախարկեաված MMULT ֆունկցիան, ու սեղմեք OK կոճակը:
7. **Բացված Function Arguments պարուհանի (նկ. 6.10)** Array1 դաշտը ներմուծեք A+2·B մագրիցի հասցեն՝ A5:C7, իսկ Array2 դաշտը՝ B մագրիցի հասցեն՝ E1:G3, և սեղմեք OK կոճակը:



Նկ. 6.10. Ֆունկցիայի արգումենտները ներմուծելու պարուհան

8. Արդյունքի արդյունքը E5:G7 բջիջների վրա պարածելու համար մկնիկի ցուցիչը պետք է սեղմանեք բանաձեռնի բողոքն ու սեղմեք չափ սեղմակը: Այնուհետև միաժամանակ սեղմենով Ctrl, Shift և Enter սեղմաները՝ E5:G7 բջիջներում պատճեք պահանջված արդյունքը.

	E	F	G
5	-4	-13	1
6	36	46	18
7	93	121	73
8			

9. Փաստարուղը պահպանեք My Documents-ի գրլյալ դասարանի համար հայտապահ բլրապահակում Lab_10_6_5_* անունով, որտեղ *-ի վորհարեն պետք է ներմուծել աշակերդի դասամապյանի համարը:
10. Ավարտեք աշխատանքն էլեկտրոնային աղյուսակի հետի օգլուշով պարուհանի փակման **X** սեղմակից:



1. Տրված են $A = \begin{pmatrix} 4 & 5 & -2 \\ 3 & -1 & 0 \\ 4 & 2 & 7 \end{pmatrix}$ և $B = \begin{pmatrix} 2 & 1 & -1 \\ 0 & 1 & 3 \\ 5 & 7 & 3 \end{pmatrix}$ մասրից ներք: Excel-ի միջա-

Վայրում իրականացրեք հեղևյալ հաշվարկները.

- | | |
|--|---|
| w) $3 \cdot A - (A + 2B) \cdot B$ | p) $3 \cdot A - (A + 2 \cdot B)$ |
| q) $2 \cdot (A + B) \cdot (2B - A)$ | q) $(A + B) \cdot (2A + B)$ |
| t) $2 \cdot (A - B) + B2$ | q) $3 \cdot (A - 2 \cdot B) + A \cdot B$ |
| t) $2 \cdot A + 3 \cdot (B - A)$ | p) $4 \cdot A \cdot B - (A + B)$ |
| p) $(A - B) \cdot A + 2 \cdot B$ | d) $3 \cdot (A - B) + A2$ |

$$2. \text{ Տրված են } A = \begin{pmatrix} 2 & 3 & -1 & 4 \\ 2 & 3 & -4 & 6 \\ 3 & 1 & 0 & -2 \\ -4 & 1 & 2 & 3 \end{pmatrix} \text{ և } B = \begin{pmatrix} 1 & 3 & -4 & 6 \\ -4 & 2 & 1 & 1 \\ 2 & 0 & 3 & 2 \\ -1 & 5 & 3 & 4 \end{pmatrix} \text{ մասրից ներք. կապարել}$$

հեղինակ հաշվարկները.

- | | |
|--|---|
| w) $3 \cdot A - (A + 2B) \cdot B$ | p) $3 \cdot A - (A + 2 \cdot B)$ |
| q) $2 \cdot (A + B) \cdot (2B - A)$ | q) $(A + B) \cdot (2A + B)$ |
| t) $2 \cdot (A - B) + B2$ | q) $3 \cdot (A - 2 \cdot B) + A \cdot B$ |
| t) $2 \cdot A + 3 \cdot (B - A)$ | p) $4 \cdot A \cdot B - (A + B)$ |
| p) $(A - B) \cdot A + 2 \cdot B$ | d) $3 \cdot (A - B) + A2$ |



Հարուսակոր աշխատանք

Կրամերի և հակադարձ մասրիցի մեթոդներով գծային հավասարումների համակարգի լուծում

Lniðkisip uynyrli ptepijiað

$$\begin{cases} 3x_1 + 2x_2 - x_3 + x_4 = 10 \\ 2x_1 - x_2 - x_3 + 4x_4 = 9 \\ -x_2 + x_3 + x_4 = -1 \\ 3x_1 + 4x_2 - x_3 = 12 \end{cases}$$

համաստումների համակարգը, որը կողմանական է և մարդիկ ու ազար անդամների եւ վեկանություն ունեն հետևյալ գույքերը.

$$A = \begin{pmatrix} 3 & 2 & -1 & 1 \\ 2 & -1 & -1 & 4 \\ 0 & -1 & 1 & 1 \\ 3 & 4 & -1 & 0 \end{pmatrix}, \quad b = \begin{pmatrix} 10 \\ 9 \\ -1 \\ 12 \end{pmatrix};$$

Խնդիրը նախ լուծենք Կրամերի մեթոդով:

- Մըկը Excel էլեկտրոնային աղյուսակի միջավայր:**
- Աղյուսակի A1:D4 բջիջներ ներմուծեք A մապրիցը, F1:F4 բջիջներ՝ b վեկտորը (նկ. 6.11):**

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N	O	P	Q	R	S	T	U	V	W	X	Y	Z
1	3	2	-1	1	10	10	2	-1	1	3	10	-1	1	3	2	10	1	3	2	-1	10					
2	2	-1	-1	4	9	9	-1	-1	4	2	9	-1	4	2	-1	9	4	2	-1	9						
3	0	-1	1	1	-1	-1	-1	1	1	0	-1	1	1	0	-1	-1	1	0	-1	1	0	-1	1	-1		
4	3	4	-1	0	12	12	4	-1	0	3	12	-1	0	3	4	12	0	3	4	-1	12					
5																										
6																										
7																										
8	1	-0	0	-1	1																					
9	-1	0	0	1	2																					
10	-0	-0	1	0	-1																					
11	-1	0	0	1	2																					

Նկ. 6.11. Կրամերի և հակադարձ մապրիցի մեթոդներով հավասարումների համակարգի հաշվման գործընթաց

- H1:K4 բջիջ ներմուծեք A1 մապրիցը, որը սպացվում է A մապրիցում առաջին սյան փոխարեն գրելով b վեկտորը (նկ. 6.11):**
- M1:P4 բջիջ ներմուծեք A2 մապրիցը, որը սպացվում է A մապրիցում երկրորդ սյան փոխարեն գրելով b վեկտորը (նկ. 6.11):**
- R1:U4 բջիջ ներմուծեք A3 մապրիցը, որը սպացվում է A մապրիցում երրորդ սյան փոխարեն գրելով b վեկտորը (նկ. 6.11):**
- W1:Z4 բջիջ ներմուծեք A4 մապրիցը, որը սպացվում է A մապրիցում չորրորդ սյան փոխարեն գրելով b վեկտորը (նկ. 6.11):**
- A մապրիցի որոշիչը հաշվելու համար ընկրեք C6 բջիջն ու գործիքով բացեք Insert Function պակուհանը: Or select a category դաշտում ընկրեք մաթեմատիկական ֆունկցիաների (Math & Trig) խումբը, իսկ Select a function դաշտում MDETERM ֆունկցիան, և սեղմեք OK կոճակը: Բացված Functions Arguments պակուհանի Array դաշտը ներմուծեք A մապրիցի հասցեն՝ A1:D4, ապա սեղմելով OK կոճակը՝ C6 բջիջում սպացեք A մապրիցի որոշիչը՝ -14:**
- Վերը նշված եղանակով J6, O6, T6, Y6 բջիջներում հաշվեք A1, A2, A3, A4 մապրիցների որոշիչները (նկ. 6.11):**
- J7 բջիջում հաշվեք հավասարման x1 անհայտը: Գրա համար A1 մապրիցի որոշիչը (J6 բջիջի պարունակությունը) բաժանեք A մապրիցի որոշիչի (C6 բջիջի պարունակության) վրա: Նման կարգով O7, T7, Y7 բջիջներում հաշվեք x2, x3 և x4 անհայտները (նկ. 6.11): Այսպիսով կստուգած պահանջված անհայտների x1 = 1, x2 = 2, x3 = -1, x4 = 2 արժեքները:**

Խնդրի լուծման հակադարձ մապրիցի մեթոդ, ասենք, որ համակարգը հակադարձ մապրիցի մեթոդով լուծելու համար նախ անհրաժեշտ է հաշվել A^{-1} հակադարձ մապրիցը: Քայլ առ քայլ իրազործեք հետևյալը.

- Նշեք A8:D11 բջիջները, որպես պետք է գրելակայի հակադարձ մապրիցը:**

2. գործիքով բացեք Insert Function պայունան ու Or select a category դաշտում ընդունեք մաթեմատիկական ֆունկցիաների (Math & Trig) խումբը, Select a function դաշտում հակադարձ մաքրիցի հաշվման համար նախադեպած MINVERSE ֆունկցիան, ու սեղմեք OK կոճակը:
3. Բացված Functions Arguments պայունանի Array դաշտ ներմուծեք պրված մաքրիցի հասցեն՝ A1:D4, ու սեղմեք OK կոճակը:
4. Արդյունքը A8:D11 բջիջների վրա գրառածելու համար մկնիկի ցուցիչը տեղադրեք բանաձեւերի գողում ու սեղմեք չափ սեղմակը: Այնուհետև միաժամանակ սեղմելով Ctrl, Shift և Enter սրելները՝ A8:D11 բջիջներում կարանաք պահանջվող հակադարձ մաքրիցը (նկ. 6.11):
5. Հակադարձ A^{-1} մաքրիցը ե վեկտորով բազմապատկելու համար նշեք F8:F11 բջիջները, որպես պեկը է գեղակայվի բազմապատկման արդյունքը:
6. գործիքով բացեք Insert Function պայունան ու Or select a category դաշտում ընդունեք մաթեմատիկական ֆունկցիաների (Math & Trig) խումբը, ապա Select a function դաշտում մաքրիցների բազմապատկման համար նախադեպած MMULT ֆունկցիան:
7. Բացված Functions Arguments պայունանի Array1 դաշտում ներմուծեք A^{-1} հակադարձ մաքրիցի հասցեն՝ A8:D11, իսկ Array2 դաշտում ե վեկտորի հասցեն՝ F1:F4, ու սեղմեք OK կոճակը:
8. Արդյունքայի արդյունքը նշված F8:F11 բջիջների վրա գրառածելու համար մկնիկի ցուցիչը տեղադրեք բանաձեւերի գողում ու սեղմեք չափ սեղմակը: Այնուհետև միաժամանակ սեղմելով Ctrl, Shift և Enter սրելները՝ F8:F11 բջիջներում կարանաք հավասարման անհայրները. $x_1 = 1, x_2 = 2, x_3 = -1, x_4 = 2$ (նկ. 6.11):
9. Փաստարուղը պահպանեք My Documents-ի փլյալ դասարանի համար հայդացված բղրապահներում Lab_10_6_6_* անունով, որպես *-ի փոխարեն պեկը է ներմուծել աշակերտի դասամակյանի համարը:
10. Ավարտեք աշխատանքն էլեկտրոնային աղյուսակի հետ՝ օգտվելով պայունանի փակման սեղմակից:



Կրամերի և հակադարձ մաքրիցի մերողներով լուծեք պրված հավասարումների համակարգը.

$$\begin{array}{l} 1. \quad \begin{cases} x_1 + 2x_2 + 3x_3 - 2x_4 = 6 \\ x_1 - x_2 - 2x_3 - 3x_4 = 8 \\ 3x_1 + 2x_2 - x_3 + 2x_4 = 4 \\ 2x_1 - 3x_2 + 2x_3 + x_4 = -8 \end{cases} \end{array}$$

$$\begin{array}{l} 2. \quad \begin{cases} x_1 + 3x_2 + 5x_3 + 7x_4 = 12 \\ 3x_1 + 5x_2 + 7x_3 + x_4 = 0 \\ 5x_1 + 7x_2 + x_3 + 3x_4 = 4 \\ 7x_1 + x_2 + 3x_3 + 5x_4 = 16 \end{cases} \end{array}$$

3.

$$\begin{cases} x_1 + 5x_2 + 3x_3 - 4x_4 = 20 \\ 3x_1 + x_2 - 2x_3 = 9 \\ 5x_1 - 7x_2 + 10x_4 = -9 \\ 3x_2 - 5x_3 = 1 \end{cases}$$

4.

$$\begin{cases} 2x_1 - x_2 + 3x_3 + 2x_4 = 4 \\ 3x_1 + 3x_2 + 3x_3 + 2x_4 = 6 \\ 3x_1 - x_2 - x_3 + 2x_4 = 6 \\ 3x_1 - x_2 + 3x_3 - x_4 = 6 \end{cases}$$

5.

$$\begin{cases} x_1 + x_2 + 2x_3 + 3x_4 = 1 \\ 3x_1 - x_2 - x_3 - 2x_4 = -4 \\ 2x_1 + 3x_2 - x_3 - x_4 = -6 \\ x_1 + 2x_2 + 3x_3 - x_4 = -4 \end{cases}$$

6.

$$\begin{cases} 2x_1 + x_2 - 5x_3 + x_4 = 8 \\ x_1 - 3x_2 - 6x_4 = 9 \\ 2x_2 - x_3 + 2x_4 = -5 \\ x_1 + 4x_2 - 7x_3 + 6x_4 = 0 \end{cases}$$

7.

$$\begin{cases} x_2 - 3x_3 + 4x_4 = -5 \\ x_1 - 2x_3 + 3x_4 = -4 \\ 3x_1 + 2x_2 - 5x_4 = 12 \\ 4x_1 + 3x_2 - 5x_3 = 5 \end{cases}$$

8.

$$\begin{cases} x_1 + 2x_2 - x_3 + x_4 = 8 \\ 2x_1 + x_2 + x_3 + x_4 = 5 \\ x_1 - x_2 + 2x_3 + x_4 = -1 \\ x_1 + x_2 - x_3 + 3x_4 = 10 \end{cases}$$

9.

$$\begin{cases} x_1 + 2x_2 + 3x_3 + 4x_4 = 5 \\ 2x_1 + x_2 + 2x_3 + 3x_4 = 1 \\ 3x_1 + 2x_2 + x_3 + 2x_4 = 1 \\ 4x_1 + 3x_2 + 2x_3 + x_4 = -5 \end{cases}$$

10.

$$\begin{cases} 2x_1 - x_3 - 2x_4 = -1 \\ x_2 + 2x_3 - x_4 = 2 \\ x_1 - x_2 - x_4 = -1 \\ -x_1 + 3x_2 - 2x_3 = 0 \end{cases}$$

11.

$$\begin{cases} -x_1 + x_2 + x_3 + x_4 = 4 \\ 2x_1 + x_2 + 2x_3 + 3x_4 = 1 \\ 3x_1 + 2x_2 + x_3 + 2x_4 = 1 \\ 4x_1 + 3x_2 + 2x_3 + x_4 = -5 \end{cases}$$

12.

$$\begin{cases} 4x_1 - 2x_2 + x_3 - 4x_4 = 3 \\ 2x_1 - x_2 + x_3 - x_4 = 1 \\ 3x_1 - x_3 + x_4 = -3 \\ 2x_1 + 2x_2 - 2x_3 + 5x_4 = -6 \end{cases}$$

13.
$$\begin{cases} x_1 + 5x_2 = 2 \\ 2x_1 - x_2 + 3x_2 + 2x_4 = 4 \\ 3x_1 - x_2 - x_3 + 2x_4 = 6 \\ 3x_1 - x_2 + 3x_3 - x_4 = 6 \end{cases}$$

14.
$$\begin{cases} 2x_1 - 6x_2 + 2x_3 + 2x_4 = 12 \\ x_1 + 3x_2 + 5x_3 + 7x_4 = 12 \\ 3x_1 + 5x_2 + 7x_3 + x_4 = 0 \\ 5x_1 + 7x_2 + x_3 + 3x_4 = 4 \end{cases}$$

15.
$$\begin{cases} 5x_1 - x_2 + x_3 + 3x_4 = -4 \\ x_1 + 2x_2 + 3x_3 - 2x_4 = 6 \\ 2x_1 - x_2 - 2x_3 - 3x_4 = 8 \\ 3x_1 + 2x_2 - x_3 + 2x_4 = 4 \end{cases}$$

16.
$$\begin{cases} x_1 - 4x_2 - x_4 = 2 \\ x_1 + x_2 + 2x_3 + 3x_4 = 1 \\ 2x_1 + 3x_2 - x_3 - x_4 = -6 \\ x_1 + 2x_2 + 3x_3 - x_4 = -4 \end{cases}$$

17.
$$\begin{cases} 2x_1 + x_3 + 4x_4 = 9 \\ x_1 + 2x_2 - x_3 + x_4 = 8 \\ 2x_1 + x_2 + x_3 + x_4 = 5 \\ x_1 - x_2 + 2x_3 + x_4 = -1 \end{cases}$$

18.
$$\begin{cases} 5x_1 + x_2 - x_4 = -9 \\ 3x_1 - 3x_2 + x_3 + 4x_4 = -7 \\ 3x_1 - 2x_3 + x_4 = -16 \\ x_1 - 4x_2 + x_4 = 0 \end{cases}$$

19.
$$\begin{cases} x_1 + x_2 - x_3 - x_4 = 0 \\ x_2 + 2x_3 - x_4 = 2 \\ x_1 - x_2 - x_4 = -1 \\ -x_1 + 3x_2 - 2x_3 = 0 \end{cases}$$

20.
$$\begin{cases} 2x_1 - x_2 + x_3 - x_4 = 1 \\ 2x_1 - x_2 - 3x_4 = 2 \\ 3x_1 - x_3 + x_4 = -3 \\ 2x_1 + 2x_2 - 2x_3 + 5x_4 = -6 \end{cases}$$

7. ՀԱՅՈՐՍԱՑԻՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ



§ 7.1 ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ուսումնասիրվող նյութի ընկալման արդյունավետությունն էապես շահում է դրաքանակությունը բացատրությանը համընթաց տարվող համապատասխան էլեկտրոնային **ցուցադրույթունից**: Ներկայացվող նյութի պատկերային հագեցվածությունն այն դարձնում է դյուրմբոնելի, համոզիչ և հնարավորություն է տալիս լսարանի ուշադրությունը բներել շարադրվող ինֆորմացիայի առավել էական մանրամասներին:

Համակարգչային ցուցադրումների (Presentation) կիրառումը մատչելի դարձնելու նպատակով հատուկ ծրագրային համալիրներ են ստեղծվում: Նման ծրագրային համալիր է 1987 թվականին ստեղծված **Microsoft PowerPoint** (հետագայում՝ *MS PowerPoint* կամ՝ *PowerPoint*) ծրագիրը, որը *Microsoft Office* փաթեթի բաղադրիչներից է:

Ծրագիր-համալիրները թույլատրում են իրար տրամարանորեն կապված **էլեկտրոնային էջեր**, այսպես կոչված, սլայդներ ստեղծել:

PowerPoint ծրագրի օգնությամբ ստեղծված համակարգչային ցուցադրումը պայդաների որոշակի հաջորդականություն է, որը կարող է պարունակել ներկայացվող ինֆորմացիան լրացրանող բանավոր խոսքի (ելույթի) ծրագիրը, արծարծվող նյութի հիմնական դրույթները, այնտեղ ներառված աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, սխեմաները, նկարները և այլն: Ցուցադրման մեջ, անհրաժեշտության դեպքում, կարելի է մտցնել նաև ճայնային ու տեսաէֆեկտներ, օգտագործել կիրառական այլ ծրագրերի միջոցով կատարված մշակումների արդյունքներ, օրինակ՝ *Word*-ի աղյուսակներ, *Excel*-ի գրաֆիկներ և այլն:

PowerPoint ծրագրում սլայդի չեավորման բարրերի համախումբն անվանում են չեավորման շարլոթ, իսկ օգլագործվող գույների հակարածությունը՝ գույնային սիսեմ:

PowerPoint ծրագիրը պրոֆեսիոնալ դիզայներների կողմից ստեղծված **չեավորման սլայդարդի շարլոթներ** և **գույնային մշակված սիսեմներ** պարունակում ցուցադրումներ է առաջարկում, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են փոփոխման ենթարկվելով հարմարեցվել:

Սկզբունքորեն համակարգչային ցուցադրումը կարող է բաղկացած լինել մեկ սլայդից, սակայն այն սովորաբար պարունակում է բազմաթիվ սլայդներ: Ցուցադրումը սկսվում է **պիլողոսային սլայդով**, որը հիմնականում պարունակում է **ցուցադրման վերնագիրներ** ու հնարավոր լնդիանուր բնույթի հարցեր:

PowerPoint ծրագրում ցուցադրումների համար օգտագործվող է ֆեկտները կոչվում են **անհնացիայի շարլունելիք**: Ծրագրում անհնացիաների ստանդարտ շարլոններ կան, որոնք, ցանկության դեպքում, կարելի է կիրառել ստեղծվող ցուցադրումների մեջ:

Ծանոթանանք *PowerPoint* ծրագրի աշխատանքին:

MS PowerPoint ծրագրի միջավայր մտնելու համար պետք է մկնիկի օգնությամբ հաջորդաբար իրականացնել հետևյալ քայլերը.

Start → Programs Microsoft →PowerPoint

MS PowerPoint ծրագրի հիմնական պատուհանը ևս *WINDOWS*-ին հատուկ ստանդարտ կառուցվածք ունի (նկ. 7.1): Այն ներառում է վերնագիր, մենյուի տողը և աշխատանքային տիրույթը, որը կարող է տարբեր գործիքների վահանակներ, վիճակի տողը, ուղղահայց և հորիզոնական քանոններ, անցավազի գոտիներ, սլայդների և ցուցադրումների մշակման տիրույթներ ներառել: *PowerPoint 2002*-ում ծրագրի պատուհանը, վերը թվարկածից բացի, կարող է ունենալ նաև **խաղիքների պիրույք**, որը համակարգչային ցուցադրումներ ստեղծելու և դրանք դիտելու գործնարկաց հեշտացնող կառավարման տարրեր է ներառում:

Համակարգչային ցուցադրումների հետ կապված աշխատանքը հեշտացնելու համար տարբեր ռեժիմները կան: Անիրամեշտ ռեժիմն ընտրելու նպատակով կարելի է օգտվել *PowerPoint* պատուհանի (նկ. 7.1) ստորին ձախ մասում տեղակայված սլայդների դիտման ռեժիմների դեկավարման սեղմակներից: Հիմնական, առավել հաճախ օգտագործվող ռեժիմը, որը կիրառվում է սլայդների հետ տարբող աշխատանքների գերակշիռ մասի համար՝ **սովորական ռեժիմն** է: Այս ռեժիմին անցնելու համար պետք է ընտրել  սեղմակը, կամ մենյուի տողի *View* ենթամենյուի *Normal* հրամանը: Սովորական ռեժիմում պարտադիր կերպով ցուցադրվում են **սլայդի ու հղումների պիրույքները**: Սլայդի տիրույթից ձախ ցուցադրվում է **կառուցվածքի պիրույքը** կամ **սլայդների պիրույքը** (նկ. 7.1-ում սլայդների տիրույթը): Նշված տիրույթներից անհրաժեշտը կարելի է ընտրել հետևյալ սեղմակների օգնությամբ՝


 – կառուցվածքի տիրույթ,

 – սլայդների տիրույթ:

Կառուցվածքի տիրույթը հարմար միջավայր է ապահովում ցուցադրման մեջ առկա տեքստերի հետ աշխատելու համար:

Սլայդների տիրույթի միջոցով կարելի է դիմել ցուցադրման բոլոր սլայդները՝ էսքիզների տեսքով: Տիրույթի միջոցով հեշտորեն կարելի է տեղաշարժվել ցուցադրման սահմաններում և դիտել ձևավորման ցանկացած տարրը: Սլայդները կարելի է դրա սկզբանին, հեռացնել, անիրամեշտ մասում **նոր սլայդ սկզբանել**: Տիրույթից դուրս գալու նպատակով կարելի է օգտվել  սեղմակից: Տիրույթը կրկին կարելի է բացել  սեղմակով կամ մենյուի տողի *View* ենթամենյուի *Normal* հրամանով:

Սլայդների տեսակավորման ռեժիմում էկրանին ներկայացվում են ցուցադրման բոլոր սլայդները, ինչը հեշտացնում է ցուցադրման ընթացքում սլայդներ ավելացնելու, տեղափոխելու և հեռացնելու գործնարկացները:



Նկ.7.1 MS PowerPoint ծրագրի հիմնական պարունակ

Ալայդների գլուխակալորման ռեժիմին կարելի է անցնել սեղմակով կամ մեջմտի տողի *View* ենթամենյուի *Slide Sorter* հրամանով:

Ցուցադրումը դիպելու համար օգտագործվում է **Ալայդների դիպման ռեժիմը**: Այս ռեժիմում կարելի է դիտել և լսել ցուցադրման մեջ ներառված ձայնային և տեսական տեսակները:

Ալայդների դիտման ռեժիմին կարելի է անցնել սեղմակով կամ մեջմութիւնում *View* ենթամենյուի *Slide Show* հրամանով:

Նոր ստեղծվող ցուցադրումը պարունակող ֆայլը սկավառակի վրա անհրաժեշտ անվանք կարելի է պահպանել գործիքի կամ մեջմութիւնում *File* ենթամենյուի *Save As* հրամանի օգնությամբ: Սկավառակի վրա պահպանված ցուցադրում պարունակող ֆայլը խմբագրելուց հետո նախկին անվանք կարելի է նորից պահպանել մեջմութիւնում *File* ենթամենյուի *Save* հրամանով կամ գործիքով:

MS PowerPoint ծրագիրն իր միջավայրում ստեղծված ցուցադրումը պահպանելու նպատակով ստեղծվող ֆայլերին տալիս է *PPT* ընդլայնումը:

Նախկինում ստեղծված ցուցադրումը պարունակող ֆայլը կարելի է բացել գործիքով կամ մեջմութիւնում *File* ենթամենյուի *Open* հրամանով:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲԱՍԵԱԼ

- ◆ Յուցադրում պարունակող ֆայլը քո ընդլայնումով պահպանելու դեպքում կարելի է հեղագայում որպես շարլոն օգտագործել:
- ◆ Յուցադրում պարունակող ֆայլը մեջյուի գրողի *File ենթամենյուի Save as Web Page* հրամանով կարելի է պահպանել և որպես *Web*-էջ օգտագործել ինքեր-ներում:



1. **Ի՞նչ է համակարգչային ցուցադրումը:**
2. **MS PowerPoint ծրագրի պատուհանի ի՞նչ բաղադրիչներ զիտեք:**
3. **Սլայդների դիզայնի ի՞նչ ռեժիմներ զիտեք:**

§ 7.2

ՑՈՒՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂ ԾՈՒՄ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Յուցադրումներ ստեղծելու աշխատանքը կարելի է սկսել մենյուի տողի *File ենթամենյուի New* հրամանով, կամ գործիքների վահանակի գործիքով: Արդյունքում պատուհանի աջ մասում առաջանում է *New Presentation* դաշտը: Այժմ *PowerPoint*-ը սպասում է հետևյալ հրահանգներից որևէ մեկին.

- բացել գոյություն ունեցող որևէ ցուցադրում (*Open a presentation*),
- ստեղծել նոր ցուցադրում (*New*):

Գոյուրյուն ունեցող ցուցադրումներից որևէ մեկը բացելու համար անհրաժեշտ է՝

- *Open a Presentation* դաշտում ընտրել անհրաժեշտ ֆայլը,
- եթե բացված ցուցակում անհրաժեշտ ֆայլը չկա, ապա որոնումն իրականացնել կոճակով:

Նոր ցուցադրում կարելի է ստեղծել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- **Blank Presentation** – ցուցադրման ստեղծում տեքստ և դիզայն չունեցող **պարկ բլանի** օգնությամբ:
- **From Design Tempate** – ցուցադրման ստեղծում առկա շարլուների օգնությամբ. այս դեպքում խնդիրների տիրույթը է բերվում *Slide Design* վահանակը, որտեղ առկա բազմաթիվ շարլուներից կարելի է ընտրել անհրաժեշտը:
- **From AutoContent Wizard** – ցուցադրման ստեղծում **ինքնապարունակուրյան վարպետից** օգնությամբ: Ծրագիրն օգտվողից ստանալով տրված հաջորդական հարցերի պատասխանները՝ հիշողությունում եղած օրինակների հիման վրա ստեղծում է անհրաժեշտ ցուցադրումը:

Յուցադրման դիզայնն ընդունելու համար անհրաժեշտ է՝

- ընտրել մենյուի տողի *Format ենթամենյուի Slide Design* հրամանը կամ գործիքը,

- Խնդիրների տիրույթում բացված *Slide Design* վահանակից ընտրել անհրաժեշտը:

Սլայդի մակերևույթի ընդունում համար անհրաժեշտ է՝

- ընտրել մենյուի տողի *Format* ենթամենյուի *Slide Layout* հրամանը կամ գործիքը,
- խնդիրների տիրույթում բացված *Slide Layout* վահանակից ընտրել անհրաժեշտը:

Նոր սլայդ պատճենելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել պատճենման ենթակա սլայդը,
- ընտրել այն սլայդը, որից հետո անհրաժեշտ է ավելացնել նորը,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *New Slide* հրամանը կամ գործիքը:

Սլայդ պատճենելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել պատճենման ենթակա սլայդը,
- պատճենումն իրականացնել մենյուի տողի *Edit* ենթամենյուի *Copy* և *Paste* հրամանների կամ դրանց համապատասխան (*Copy*) և (*Paste*) գործիքների օգնությամբ:

Սլայդ փեղափոխելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել տեղափոխման ենթակա սլայդը,
- տեղափոխումն իրականացնել մենյուի տողի *Edit* ենթամենյուի *Cut* և *Paste* հրամանների, կամ դրանց համապատասխան (*Cut*) և (*Paste*) գործիքների օգնությամբ, կամ մկնիկի տեղաշարժմամբ:

Սլայդ հեռացնելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել հեռացման ենթակա սլայդը,
- Delete* ստողնով հեռացնել այն:

Սլայդ բարցնելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել անհրաժեշտ սլայդը,
- ընտրել մենյուի տողի *Slide Show* ենթամենյուի *Hide Slide* հրամանը կամ գործիքը:

Թարցված սլայդը նորից ցուցադրելու համար անհրաժեշտ է՝

- տեսակավորման ռեժիմում ընտրել թարցված սլայդը,
- նորից ընտրել մենյուի տողի *Slide Show* ենթամենյուի *Hide Slide* հրամանը կամ գործիքը:

ՕԳՏԱԿԱՐ Է ԲՈՍԵԱԼ

- Մի քանի սլայդ միաժամանակ հեռացնելու համար անհրաժեշտ է *Shift* սկել-նը սկզբանական նախ ընդունուել հեռացման ենթակա սլայդները, ապա *Delete* սկել-նով հեռացնել դրանք:



1. Ինչպե՞ս սպեղծել նոր ցուցադրում:
2. Ինչպե՞ս բացել գոյություն ունեցող որևէ ցուցադրում:
3. Նոր ցուցադրում սպեղծելու քանի՞ եղանակ գիրեք:
4. Սյայդների հետ աշխատելու ի՞նչ հիմնական գործողություններ են ձեզ հայրենի:

§ 7.3 ՍԼԱՅԴ-ՈՒՄ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒՄ ՈՒ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Սլայդներում առկա նկարները, աղյուսակները, դիագրամներն ու գրաֆիկական օբյեկտները ցուցադրումն առավել պատկերավոր են դարձնում: Նշենք, որ սլայդում օյյեկտ կարելի է ավելացնել միայն այն դեպքում, եթե սլայդի համար ընտրված մակետում նման օյյեկտի համար տիրույթ է նախատեսված (նկ. 7.2):

Սլայդում նկար դեղադրելու համար անհրաժեշտ է՝


- նկայիկի ցուցիչը տեղադրել սլայդում նկարի համար նախատեսված տիրույթի սահմաններում,
- ձախ սեղմակի կրկնակի սեղմումով քողարկել նկարների *Insert Clip Art* գրադարանը,
- այստեղ առաջարկվող հավաքածուից ընտրել անհրաժեշտը:

Սլայդում աղյուսակ սպեղծելու համար անհրաժեշտ է.


- ընտրել սլայդի այն բաժինը, որտեղ պետք է ստեղծել աղյուսակը,
- ընտրել մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Table* հրամանը կամ գործիքը,
- բացված *Insert Table* պատուհանում (նկ. 7.3) ընտրել ստեղծվող աղյուսակի սյուների և տողերի քանակներն ու սեղմել *OK* կոճակը:

Սլայդում դիագրամ կառուցելու համար անհրաժեշտ է.

- ընտրել սլայդի այն բաժինը, որտեղ պետք է ստեղծել դիագրամը,
- ձախ սեղմակի կրկնակի սեղմումով կամ մենյուի տողի *Insert* ենթամենյուի *Chart* հրամանով քողարկել դիագրամն ու դրա հետ կապված տվյալների աղյուսակը,
- աղյուսակ ներմուծելով անհրաժեշտ տվյալները՝ ստանալ համապատասխան դիագրամը:



Նկ. 7.2. Սլայդում նկար պարունակող մակետի օրինակներ



Նկ. 7.3. Աղյուսակի գործիքի և այլումերի քանակն ընդունելու պարուհան


Սլայդում կարելի է նաև MS Excel-ի միջավայրում ստեղծված դիագրամներ տեղադրել:

Սլայդում գրաֆիկական օբյեկտներ դիզայնելու համար անհրաժեշտ է.

- ընտրել սլայդի այն բաժինը, որտեղ պետք է գրաֆիկական օբյեկտը տեղադրել,
- նկարչության վահանակից ընտրել AutoShapes վահանակի (նկ. 7.4) անհրաժեշտ գործիքաշարը,
- բացված գործիքաշարից ընտրելով անհրաժեշտ օբյեկտը՝ մկնիկի շարժումով տեղադրել սլայդի վրա:

Սլայդում կառուցվածքային դիագրամներ պահպանելու համար անհրաժեշտ է.

- ընտրել սլայդի այն բաժինը, որտեղ պետք է ստեղծել դիագրամը,
- նկարչության վահանակից ընտրել  (Insert Diagram or Organization Chart) գործիքը,
- բացված Diagram Gallery պատուհանում (նկ. 7.5) անհրաժեշտ դիագրամի վրա մկնիկի ձախ սեղմակի կրկնակի սեղմում կատարել,
- խմբագրել սլայդում հայտնված դիագրամը:



Նկ. 7.4. Գրաֆիկական օբյեկտներ ընդունելու պահուհան



Նկ. 7.5. Կառուցվածքային դիագրամի ընդունելու պահուհան

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆԵԱԼ

- ♦ Սլայդում ոչ միայն կարելի է առկա նկարների գրադարանից ցանկացած օբյեկտ, այլև ցանկացած այլ լուսանկար կամ գրաֆիկական խմբագրիչի միջավայրում պահպանված պատրեր դիզայներլ:
- ♦ Սլայդի մեջ կարելի է նաև նկարչության գործիքների վահանակի  (Insert WordArt) գործիքի միջոցով չեավորված դիզայներլ:



1. Ո՞րն է ցուցադրման մեջ օբյեկտներ գեղադրելու հիմնական իմաստը:
2. Մլայդներում գեղադրվող ի՞նչ օբյեկտներ զիգեր:



Հարորակոր աշխատանք

7.1


Պարզ ցուցադրման սրեղծում

«Ազորիմներ» թեմայով համակարգչային ցուցադրում սրեղծեք: Դրա համար հաջորդաբար իրականացրեք հետևյալ քայլերը.

1. **Միկրո MS PowerPoint ծրագրի միջավայր:**
2. **Ընդունել մենյուի փողի File ենթամենյուի New հրամանն ու նոր ցուցադրում սրեղծեք: Դրա համար պատուհանի աջ մասում քացված New Presentation պատուհանի New քաժնում ընդունեք Blank Presentation պարբերակը:**
3. **Slide Layout պատուհանում ընդունեք Title Only մակերպը.**



4. **Օգտվելով Alt, Ctrl և Shift սրեղմներից՝ ընդունեք հայկական այրութեանը:**
5. **Ընդունեք Arial Armenian գաղտադրեակն ու դրա 24 չափը:**
6. **Click to add title գրառումը պարունակող քաժնում ներմուծեք սրեղծվող ներկայացման ԱԼ ԳՈՐԻԹՄՈՒԵՐԸ վերնագիրը:**
7. **>New Slide գործիքով քացեք հաջորդ՝ երկրորդ պայման:**
8. **Slide Layout պատուհանում ընդունեք Title and text մակերպը.**



9. **Մլայդի վերին մասում վերնագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ԱԼ ԳՈՐԻԹՄՈՒԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ վերնագիրը, իսկ հաջորդ քաժին՝ հետևյալ հավկուրյունները:**
 - որոշակիություն,
 - մասայականություն,
 - արդյունավելություն,
 - դիսկրետություն:

10. **New Slide գործիքով քացեք հաջորդ՝ երրորդ պայման:**
11. **Slide Layout պատուհանում կրկին ընդունեք Title and text մակերպը:**
12. **Մլայդի վերնագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ԱԼ ԳՈՐԻԹՄՈՒԵՐԸ**

ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՆԱԿՆԵՐԸ ՎԵՐԱՎԱԳԻՐԸ, ԽԱՂ ՀԱՉՈՐԻ ՔԱԺԻԱՌ
ՀԵԿԱՋԱԼ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ

- բառաբանաձևային,
- գրաֆիկական:

13. գործիքով բացեք հաջորդ՝ չորրորդ պայմղը:
14. Սլայդի վերագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ԲԼՈԿ-ՍԽԵՄԱ
վերագրի, խաղ հաջորդ քաժնում գործիքով ստեղծեք 6 այտն և 2 պող
պարունակող աղյուսակ:
15. Երկրորդ կտորում անհրաժեշտ բլոկները գեղադրելու նպատակով լրացրեք
աղյուսակը՝ օգտվելով նկարչության վահանակի AutoShapes վահանակի
FlowChart գործիքաշարից:

Բլոկի անվանումը	Գործընթաց	Պայման	Մուտք-ելք	Մոդիֆիկա-ցիա	Սկիզբ-ավարտ
Գրաֆիկա-կան պատկերը					

16. գործիքով բացեք հաջորդ՝ հինգերորդ պայմղը:
17. Սլայդի վերագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ԳԾԱՅԻՆ ԱԼ ԳՈ-
ՐԻԹՄԸՆԵՐԸ վերագրի, խաղ հաջորդ քաժնում հեկայալ ինֆորմացիան.
Գծային են կոչվում այն ալգորիթմները, որոնցում պարամետրերի արժեքներից
անկախ գործողությունները կարարվում են միշտ միևնույն հաջորդականու-
թյամբ՝ վերից վար, յուրաքանչյուրը՝ միայն մեկ անգամ:

18. գործիքով բացեք հաջորդ՝ վեցերորդ պայմղը:
19. Սլայդի վերագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ՇՅՈՒՂԱՎՈՐ-
ՎԱԾ ԱԼ ԳՈՐԻԹՄԸՆԵՐԸ վերագրի, խաղ հաջորդ քաժին՝ հեկայալ ինֆորմա-
ցիան.
Տյուղավորված են կոչվում այն ալգորիթմները, որոնցում ստուգող պայմանից
ելալով հաշվման գործընթացը շարունակվում է հնարավոր երկու ուղիներից
որևէ մեկով:

20. գործիքով բացեք հաջորդ՝ յոթերորդ պայմղը:
21. Սլայդի վերագրի համար նախադեսված քաժին ներմուծեք ՑԻԿԼԱՅԻՆ ԱԼ-
ԳՈՐԻԹՄԸՆԵՐԸ վերագրի, խաղ հաջորդ քաժին՝ հեկայալ ինֆորմացիան.
Ազգորդիթմներում գործողության կամ գործողությունների խմբի որոշակի անկամ
կրկնության գործընթացի իրականացման համար կիրառում են պարամետրով
ցիկլային կառուցվածքներ:
22. Ընդունեք գործիքն ու խնդիրների դիրքուրում քերպած Slide Design վա-
հանակից ընդունեք որևէ գարբերակ:
23. սեղմակով ընդունեք պայմանների դիմումն ու Տեքստին ու Հաջորդը և
ստեղծակով ցուցադրումը քերպեք:

- 24.** Սպեհծված ցուցադրումը մենյուի փողի *File և արամենյուի Save հրամանով* պահպանեք *My Documents-ի* փվյալ դասարանի համար հագրկացված բղրապահակում *Lab_10_7_1_** անունով, որտեղ *-ի փոխարեն պետք է ներմուծել աշակերդի դասամայլյանի համարը:
- 25.** *PowerPoint* ծրագրի հետ աշխատանքն ավարտեք՝ օգովելով պարուիանի փակման սեղմակից:

§ 7.4 ՑՈՒՑԱԳՐՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԷՖԵԿՏՆԵՐԻ ԿԻՐԱՎՈՌՈՒՄ

MS PowerPoint ծրագրում անիմացիա են **անվանում** շարժապատկերը, որը կարելի է կցել ցուցադրման մեջ առկա տեքստին կամ օբյեկտին: Սլայդում առկա անիմացիան շեշտում է դրա բովանդակության անհրաժեշտ ասպեկտները, կառավարում ինքորմացիայի հոսքը, ցուցադրումը դարձնում առավել հետաքրքիր: Նման էֆեկտները լսարանի ուշադրությունը բնեուում են՝ շահեկանորեն ընդգծելով անհրաժեշտ առանձին օբյեկտները: Նման էֆեկտները պետք է շեշտադրեն զեկուցողի բանավոր խոսքը՝ շեղելով լսողի ուշադրությունը:


Սլայդում առկա ցանկացած օբյեկտ կարող է կրանին հայտնվել տարբեր եղանակներով. կողքից, հաջորդաբար՝ մինչև որոշակի չափը մեծանալով, փոքրանալով, պտտվելով և այլն: Էկրանին թերվող տեքստը կարող է հայտնվել միանգամից ամրողացությամբ, բառ առ բառ, կամ նույնիսկ՝ տառ առ տառ: Օբյեկտների ցուցադրման հերթականությունն ու ժամանակը կարելի է փոփոխել, ցուցադրումն ավտոմատացնել:

Համակարգչային ցուցադրումներում սլայդից ալայդ անցնելիս կարելի է հատուկ էֆեկտներ կիրառել:

Սլայդներին անցումային էֆեկտ պալու համար անհրաժեշտ է.

- սեղմակով ընտրել տեսակավորման ռեժիմը,
- նշել այն պայողը կամ պայողները, որոնց վրա պետք է էֆեկտը տարածել,
- ընտրել մենյուի տողի *Slide Show և բամենյուի Slide Transition* հրամանը,
- խնդիրների տիրույթում բացված պատուհանի (նկ. 7.6ա) *Apply to selected slides* դաշտում ընտրել առաջարկվող էֆեկտներից անհրաժեշտը,
- *Speed* դաշտում ընտրել անցումային տեմպի հետևյալ երեք հնարավոր տարրերկներից որևէ մեկը.
 - *Slow* – դանդաղ,
 - *Medium* – միջին,
 - *Fast* – արագ,
- ցանկության դեպքում *Sound* դաշտում ընտրել առաջարկվող հնչյունային էֆեկտներից որևէ մեկը՝ ծավահարույթումներ, զանգ և այլն,
- *Advance Slide* բաճնում ընտրել անցում կատարելու ձևերից որևէ մեկը՝
 - *On mouse click* – մկնիկի սեղմակով,
 - *Automatically after* – ավտոմատ՝ յուրաքանչյուր ալայդը ցուցադրելով որոշակի վայրկյան տևողությամբ,

- անցման ավտոմատ ձևն ընտրելու դեպքում *Advance Slide* խմբի *Automatically after* դաշտում սահմանել սլայդի ցուցադրման տևողությունը (Վայրկյաններով),
- ընտրված էֆեկտները բոլոր սլայդների վրա տարածելու համար ընտրել *Apply to All Slides* կոճակը,
- սահմանված էֆեկտները դիտելու համար ընտրել *Slide Show* կոճակը:



Նկ. 7.6. Անհմացիայի ընդունակ պարուհաններ


Անհմացիայի ընդունակություն

- սեղմակով ընտրել տեսակավորման ռեժիմը,
- ընտրել այն սլայդը կամ սլայդները, որոնց տեքստի կամ օբյեկտի համար անհրաժեշտ է անհմացիա կիրառել,
- ընտրել **Design** կոճակը, ապա խնդիրների տիրույքում բացված պատուհանի վերին մասում տեղակայված *Animation Schemes* հրամանը,
- խնդիրների տիրույքում բացված պատուհանի (նկ. 7.6р) *Apply to selected slides* դաշտում ընտրել առաջարկվող որևէ անհմացիա,
- ընտրված անհմացիան բոլոր սլայդների վրա տարածելու համար ընտրել *Apply to All Slides* կոճակը,
- ընտրված անհմացիան դիտելու համար օգտվել *Slide Show* կոճակից:

Օբյեկտի անհմացիայի պարամետրերի արժեքները սահմանելու համար անհրաժեշտ է՝

- ընտրել սլայդի համապատասխան օբյեկտը,
- ընտրել մենյուի տողի սլայդների ցուցադրումը կազմակերպելու համար նախատեսված *Slide Show* ենթամենյուի *Custom Animation* հրամանը,
- բացված պատուհանի (նկ. 7.7) *Start* դաշտում ընտրել օբյեկտի հայտնվելու ձևերից որևէ մեկը՝
 - On Click* – կանչ մկնիկի սեղմակով,

- *With Previous* – կանչ նախորդ անիմացիայի հետ միասին կամ դրան զուգահեռ,
- *After Previous* – կանչ նախորդ անիմացիայից որոշակի ժամանակ անց:



Նկ. 7.7. Անիմացիայի պարամետրերը սահմանելու պարուիհան

- *Speed* դաշտում ընտրել ցուցադրման արագությունը՝
 - *Very Slow* – շատ դանդաղ,
 - *Slow* – դանդաղ,
 - *Medium* – միջին,
 - *Fast* – արագ,
 - *Very Fast* – շատ արագ:
- *Re-Order* կոճակներով ընտրել օբյեկտների հաջորդականությունը,
- անիմացիան դիտելու համար ընտրել *Slide Show* կոճակը:

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍՍՈՒԱԼ

- ◆ **Անիմացիա ընդունելու պարուիհանը կարելի է բացել նաև մենյուի տողի *Slide Show* ենքանենյուի *Animation Schemes* հրամանով:**
- ◆ **Սլայդի օբյեկտների գումարին սինման սահմանելու համար անհրաժեշտ է ընդունել կոճակը, խնդիրների գիրույրում բացված պարուիհանի վերին մասում գույնակայված *Color Schemes* հրամանն ու խնդիրների գիրույրում առաջարկվող գարքերակներից որևէ մեկը:**



1. **Ի՞նչ է անիմացիան:**
2. **Ո՞ր ուժինում է հնարավոր ալայդներին անցումային էֆեկտ տալ:**
3. **Սլայդներին անցումային էֆեկտներ տալու ի՞նչ արագություններ են նախադրեալած:**
4. **Սլայդից պայդ անցնելու ի՞նչ ձևեր զիվեր:**
5. **Սլայդից պայդ անցնելու ո՞ր ձևի դեպքում են սահմանում ցուցադրման դեռդուրյունը:**



Հարորակոր աշխատանք

7.2

Անհմացիաների կիրառում

1. **Մղեք MS PowerPoint ծրագրի միջավայր:**
2. **Սենյուի փողի File ենթամենյուի Open հրամանով բացեք նախորդ լարորակոր աշխատանքի արդյունքում չեղ կողմից սպեղծված և պահպանված ֆայլը:**
3. **■ սեղմակով ընդունեք դեսակավորման ռեժիմը:**
4. **Ընդունեք 2-ից 5-րդ սլայդները:**
5. **Ընդունեք մենյուի փողի Slide Show ենթամենյուի Slide Transition հրամանը:**
6. **Խնդիրների փիրույքում բացված պատուհանի Apply to selected slides դաշտում հաջորդաբար ընդունեք առաջարկվող մի քանի էֆեկտներ և հետեւով արդյունքիմ՝ ծանրացեք դրանց:**
7. **Ընդունեք որևէ էֆեկտ և Speed դաշտում հաջորդաբար փորձեք կիրառել անցման առաջարկվող հնարավոր արագույթունները: Վերջում ընդունեք դրանցից մեկը:**
8. **Sound դաշտում հաջորդաբար փորձեք առաջարկվող հաշյունային էֆեկտները: Վերջում ընդունեք դրանցից մեկը:**
9. **Advance Slide բաժնում ընդունեք անցում կարառելու Automatically After ձևը, ապա Automatically after դաշտում սահմանեք սլայդի ցուցադրման 5 վայրկյան դեղուույթունը:**
10. **Սահմանված էֆեկտները դիմեք Slide Show կոճակով:**
11. **Ընդունեք ներկայացման երկրորդ սլայդը:**
12. **Ընդունեք կոճակը, ապա խնդիրների փիրույքում բացված պատուհանի վերին մասում դրեզայնված Animation Schemes հրամանը:**
13. **Խնդիրների փիրույքում բացված պատուհանի Apply to selected slides դաշտում հաջորդաբար ընդունեք առաջարկվող մի քանի էֆեկտներ և հետոնեք այդ սլայդում կիրառված անհմացիաներին:**
14. **Ընդունեք ցուցադրման առաջին սլայդն ու որևէ անհմացիան ընդունեք:**
15. **Ընդունեք անհմացիան All Slides կոճակով բոլոր սլայդների վրա դրանքերը:**
16. **Ցուցադրումը մենյուի փողի File ենթամենյուի Save As հրամանով պահպանեք My Documents-ի վայրական համար հավելացված բղարպանակում Lab_10_7_2_* անունով, որպես *-ի փոխարեն պես է ներմուծել աշակերտի դասամավյանի համարը:**
17. **PowerPoint ծրագրի հետ աշխատանքն ավարտեք՝ օգրվելով պատուհանի փակման սեղմակից:**

Բովանդակություն

Ներածություն	3
1. Անվտանգության տեխնիկայի կանոններ: Համակարգչային վիրուսներ	4
§ 1.1. Անվտանգության ապահովումը համակարգչային սենյակում	4
§ 1.2. Վիրուս և հակավիրուս	6
2. Ինֆորմացիոն գործընթացներ	12
§ 2.1. Ինֆորմացիա: Ներկայացման ձևերն ու հատկությունները	12
§ 2.2. Ինֆորմացիոն գործընթացներ	15
3. Ինֆորմացիայի կողավորում	20
§ 3.1. Ինֆորմացիայի կողավորումը	20
§ 3.2. Թվերի փոխակերպումը մի համակարգից մյուսը	22
§ 3.3. Թվաբանական գործոդրությունների հաշվարկման դիրքային համակարգերում	27
§ 3.4. Զայնախնիքորմացիայի և տեսախնիքորմացիայի կողավորումը	29
4. Համակարգչային գրագիտություն	31
§ 4.1. Համակարգչի հիմնական սարքերի տեխնիկական բնութագրեր	31
§ 4.2. Օպերացիոն համակարգերի դասակարգումը	34
§ 4.3. Համակարգչային ծրագրերի տեղակայում	36
§ 4.4. Աշխատանք արխիվների հետ Լարորատոր աշխատանք թիվ 4.1. Աշխատանք արխիվների հետ	40 43
5. Տեքստային խմբագրիչներ	44
§ 5.1. <i>Microsoft Word</i> տեքստային խմբագրիչ	44
§ 5.2. Էջերի համարակալման համակարգ: Խորագիր: Ծանոթագրության ներմուծում	47
Լարորատոր աշխատանք թիվ 5.1. Աշխատանք խորագրերի և ծանոթագրությունների հետ	50
§ 5.3. Ինֆորմացիայի ներկայացումը աղյուսակներով և սյունակներով	51
Լարորատոր աշխատանք թիվ 5.2. Աշխատանք աղյուսակի հետ	58
§ 5.4. Փաստարդի բաժանումը մասերի: Յուցակների ստեղծում	60
Լարորատոր աշխատանք թիվ 5.3. Փաստարդի առանձին մասերի խմբագրում	63
§ 5.5. Օժանդակ տարրերի ներմուծում	64
Լարորատոր աշխատանք թիվ 5.4. Օժանդակ տարրերի ներմուծում	68
§ 5.6. Փաստարդի ձևավորման ոճեր	69
Լարորատոր աշխատանք թիվ 5.5. Աշխատանք ոճերի հետ	72

§ 5.7. Բանաձևի ներմուծում և խմբագրում	73
Լարորատոր աշխատանք թիվ 5.6.	
Բանաձևի ներմուծում և խմբագրում	76
§ 5.8. Էլեկտրոնային թարգմանիչներ և բառարաններ:	
Տերստ «ճամաչող» ծրագրեր	78
§ 5.9. Խմբագրիչի միջավայրի փոփոխման համակարգ	81
6. Էլեկտրոնային աղյուսակներ	84
§ 6.1. <i>Ms Excel</i> էլեկտրոնային աղյուսակում կիրառվող տվյալների հիմնական տիպերը	84
§ 6.2. Բջջիների հասցեավորում: Հասցեների կիրառումը բանաձևերում	86
Լարորատոր աշխատանք թիվ 6.1. Աշխատանք բջջիների հետ	87
§ 6.3. Բջջիներին անվանում տալը	89
Լարորատոր աշխատանք թիվ 6.2.	
Աշխատանք անվանումների հետ	91
§ 6.4. Հաշվարկների իրականացումը էլեկտրոնային աղյուսակներում	92
Լարորատոր աշխատանք թիվ 6.3.	
Մաթեմատիկական ֆունկցիաներ	95
§ 6.5. Դիագրամները <i>MS Excel</i> -ում	97
Լարորատոր աշխատանք թիվ 6.4. $y = ax^2 + bx + c$ ֆունկցիայի արժեքների աղյուսակի և զրաֆիկի կառուցում	102
§ 6.6. Թվային զանգվածների մշակումը	104
Լարորատոր աշխատանք թիվ 6.5.	
Թվարանական գործողորյուններ մատրիցների հետ	106
Լարորատոր աշխատանք թիվ 6.6. Կրամերի և հակադարձ մատրիցի մեթոդներով գծային հավասարումների համակարգի լուծում	108
7. Ինֆորմացիայի համակարգչային ցուցադրում	113
§ 7.1. Հիմնական հասկացություններ և սահմանումներ	113
§ 7.2. Ցուցադրումների ստեղծում և խմբագրում	116
§ 7.3. Սլայդում օբյեկտների տեղադրում ու խմբագրում	118
Լարորատոր աշխատանք թիվ 7.1. Պարզ ցուցադրման ստեղծում	120
§ 7.4. Ցուցադրումներում հատուկ էլեկտրոնային կիրառում	122
Լարորատոր աշխատանք թիվ 7.2. Անիմացիաների կիրառում	125

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՎԵՏԻԿ ՎԱԶԳԵՆԻ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

10-րդ դասարան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
ԲՆԱԳԻՏԱՍԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝	Ա. Ռոկանյան
Սրբագրիչ՝	Ա. Պապյան
Նկարիչ՝	Ս. Դավիթյան
Զետավորումը՝	Ն. Հայրապետյանի
Շարվածքը՝	Ա. Ավետիսյանի

Պատվեր՝ 1004: Տպաքանակ՝ 6891:
Թուղթը՝ օֆսեր: Չափսը՝ 70x100/16: 8 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ DallakTimeNew:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում